ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աշոտ Ենգոյան, Առնակ Սարգսյան
Խոսրովադուխտ Ազատյան, Փայլակ Ենգոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՁԵՎ ԾԱՌԱՅԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԳԼՈԲԱԼ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՅՈՒՅՑԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

YEREVAN STATE UNIVERSITY
19 19

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

Ашот Енгоян, Арнак Саргсян
Хосровадухт Азатян, Пайлак Енгоян

СТОЯЩИЕ ПЕРЕД АРМЕНИЕЙ ВЫЗОВЫ В КОНТЕКСТЕ ТРАНСФОРМАЦИИ ГЛОБАЛЬНОЙ ПАРАДИГМЫ РАЗВИТИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

Ashot Yengoyan, Arnak Sargsyan
Khosrovadukht Azatyan, Paylak Yengoyan

THE CHALLENGES OF ARMENIA IN THE CONTEXT OF THE TRANSFORMATION OF THE GLOBAL DEVELOPMENT PARADIGM

Ереван/Yerevan
Изд. ЕГУ/YSU Press
2023

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Աշոտ Ենգոյան, Առնակ Սարգսյան
Խոսրովադուխտ Ազատյան, Փայլակ Ենգոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.2
Հ 247

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳՊԿ-ի կողմից
ծրագրավորող ֆինանսական աջակցության շնորհիվ 21T-5F330
գիտական թեմայի շրջանակում:

Գրախոսներ՝

քգ. դ., պրոֆեսոր Խ. Ս. Գալստյան
պգ.թ., դոցենտ Վ. Ս. Պետրոսյան

Ենգոյան Ա., Սարգսյան Ա., Ազատյան Խ., Ենգոյան Փ.
Հ 247 Հայաստանի Հանրապետության առջև ծառացած մարտահրավերները գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման համատեքստում/ Ա. Ենգոյան, Ա. Սարգսյան, Խ. Ազատյան, Փ. Ենգոյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2023, 154 էջ:

«ՀՀ առջև ծառացած մարտահրավերները գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման համատեքստում» աշխատությունն անդրադարձ է կատարում համաշխարհային զարգացման հարացույցի վերափոխման նախադրյալներին: Միաբևեռ աշխարհի ձևավորմամբ, ինչպես նաև երկրների ու ժողովուրդների վրա ազդեցության համապատասխան լծակներով ֆինանսատնտեսական նոր աշխարհակարգի հաստատմամբ ժամանակակից աշխարհը բախվում է լիբերալ ժողովրդավարության անգլո-սաքսոնական ինդիվիդուալիստական մեկնաբանությանը, որը նախադրյալներ ունի դառնալու համաշխարհային զարգացման ժամանակակից հարացույցի գաղափարական հիմքը:

Այս առումով ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ինչպես տեսական հետազոտության դիտանկյունից, այնպես էլ գործնականում: Աշխատությունը նախատեսված է բուհերի ուսանողների և նշված հիմնահարցով զբաղվող մասնագետների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.2

ISBN 978-5-8084-2642-9
https://doi.org/10.46991/YSUPH/9785808426429
© ԵՊՀ հրատ., 2023
© Ենգոյան Ա., Սարգսյան Ա., Ազատյան Խ., Ենգոյան Փ., 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 10
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ
ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 36
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՈՐՊԵՍ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆՈՐ ՀԱՐԱՑՈՒՅՑԻՆ ԵՎ ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻՆ
ԱՆՑՈՒՄՆ ԱՐԱԳԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՆ 53
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ 71
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 99
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ 109
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 138
SUMMARY 144
РЕЗЮМЕ 145
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 146

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գլոբալ զարգացման արդի հարացույցը, որը մեծապես պայմանավորված է միաբևեռ աշխարհակարգով, ներկայումս գտնվում է վերափոխման փուլում: Համաշխարհային քաղաքական-տնտեսական համակարգի բնույթի և բովանդակության վրա ազդում են ոչ միայն գլոբալացման ու աշխարհաքաղաքական գործընթացները, այլև համաշխարհային ու տարածաշրջանային մակարդակներում ծավալվող սոցիալական ու ազգային տարբեր շարժումները, երկրների բնակչությունների վերաբերմունքը այս կամ այն արժեքներին, ինչպես նաև համաշխարհային տնտեսության ու ֆինանսների վիճակը:

Գլոբալ զարգացման արդի հարացույցը, ինչպես հայտնի է, վերջնականորեն ձևավորվել է Սառը պատերազմի ավարտից հետո և աչքի է ընկնում վառ արտահայտված նեոլիբերալ բովանդակությամբ: Բազմաթիվ քաղաքագետներ այն բնորոշում են որպես նեոլիբերալ-լիբերտարիստական մոնետարիզմ: Նեոլիբերալ-լիբերտարիստական արժեհամակարգը կոչված է առավելագույնս ապահովելու անհատի ազատությունը ժողովրդավարական վերափոխումների յուրօրինակ ընկալմամբ, համամարդկային վարքի նորմերի սեփական մեկնաբանմամբ՝ հիմնված շուկայական հարաբերությունների ամենազորության վրա:

Գլոբալ զարգացման արդի հարացույցի վերը թվարկված բնութագրերը մեծապես նպաստեցին Միացյալ Նահանգների գլխավորությամբ արևմտյան աշխարհի գերիշխող դերի հաստատմանը համաշխարհային հանրության կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Բնականաբար, նման աշխարհակարգը երկար ժամանակ չէր կարող բավարարել համաշխարհային ուժային այլ կենտրոններին, որոնք կայացման ու հզորացման շրջանով էին անցնում և կարող էին աշխարհի ժողովուրդների կողմից ընկալվել որպես համաշխարհային նոր բևեռներ: Այս միտումը հանգեցրեց

արևմտյան հասարակությունների հակազդեցությանը, որն արտահայտվեց վերստին ձևավորվող կենտրոններին տնտեսական ու ռազմաքաղաքական բնույթի տարբեր միջոցներով զսպելու նրանց ցանկությամբ (օրինակ՝ ՆԱՏՕ-ի ընդլայնումը):

Համաշխարհային ուժային նորաստեղծ կենտրոնների ու արևմտյան աշխարհի հակասությունները զգալիորեն սրվեցին արժեքային առաջնահերթությունների ու ուղենիշների սահմանման հարցում վերջիններիս միջև առկա լուրջ տարաձայնությունների արդյունքում[1]: Դրան մեծապես նպաստեց նեոլիբերալ արժեհամակարգի նկատելի արմատականացումը, որը պարտադրվեց աշխարհի այլ ժողովուրդներին և ներկայացվեց որպես միակ ճշմարիտը՝ համաշխարհային ժողովրդավարացման գործընթացներում վերջնական նպատակներին հասնելու համար:

Հակասությունները, վերաճելով թշնամանքի, հանգեցրին համաշխարհային տարբեր կենտրոնների միջև ուղղակի բախումների, առաջին հերթին՝ ֆինանսատնտեսական ոլորտներում, ինչպես նաև սկսեցին դրսևորվել նրանց միջև հիբրիդային առճակատման տեսքով: Ժամանակակից հակամարտությունն Ուկրաինայում, ըստ էության, գլոբալ առճակատման արտահայտություն է, որի արդյունքը մեծապես կորոշի ողջ աշխարհակարգի ապագան:

Ժամանակակից գլոբալ գործընթացներն իրենց հակասականությամբ և անորոշությամբ էապես բարդացնում են հատկապես փոքր ժողովուրդների ու պետությունների հետագա ճակատագիրը: Վերջիններիս համար դժվար է որոշումներ կայացնել արտաքին քաղաքականության, ֆինանսական, տնտեսական և արժեքային ուղենիշների սահմանման վերաբերյալ, քանի որ նշված ուղղություններով սխալ քայլերը կարող են հանգեցնել իրենց երկ-

[1] Ավելի մանրամասն տե՛ս **Yengoyan, A.** (2023). Transformations of the Ideology of Nation-Building and State-Building in Armenia: Phenomenon of Integrity of Nation and State // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 70-101, https://doi.org/10.46991/JOPS/2023.2.4.070:

րի սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակի էական սրմանը: Հատկապես բարդ է այն երկրների վիճակը, որոնք անմիջական առճակատման մեջ են գտնվում կամ շրջապատված են թշնամական պետություններով[2]: Մասնավորապես, Հայաստանը, ինչպես միջազգային հարաբերություններում, այնպես էլ ներքաղաքական կյանքում, մշտապես պետք է հաշվի առնի ոչ միայն համաշխարհային գործընթացների առկա վիճակը, այլև կոնկրետ երկրների, հատկապես Հարավային Կովկասի տարածաշրջանում աշխարհաքաղաքական ակտիվ խաղացողների հարաբերությունները:

[2] Այդ մասին տե՛ս **Yengoyan, A., Harutyunyan, L.** (2022). Transformation and Development. Studies in the Organization for Security and Cooperation in Europe (OSCE) Member States, edited by Anja Mihr. Springer Cham, 2020. VI, 154 pp. // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 156-159, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.156:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Գլոբալ հարացույցի անվանման մեջ «մոնետարիզմ» հասկացության մատնանշումն ընդգծում է ֆինանսատնտեսական քաղաքականության բացառիկ դերը համընդհանուր զարգացման ուղղվածությունը որոշելիս: Համաշխարհային ֆինանսական համակարգում մոնետարիստական մոտեցումը գերակշռող է դարձել այլ հասկացությունների հետ մրցակցության պայմաններում: Համաշխարհային քաղաքակրթության զարգացման պատմության ընթացքում տարբեր մոտեցումներ են եղել՝ տնտեսության մեջ պետության դերը գնահատելու ու դրամավարկային քաղաքականության մեխանիզմների հետ կապված: Դրանց շարքում առանձնանում են երկու հակադիր ուղղություններ՝ քեյնսականությունն ու մոնետարիզմը:

Ջ. Քեյնսի տեսությունն ամենատարածվածն էր XX դարի առաջին կեսին՝ ԱՄՆ տնտեսության անկումից հետո, ուստի այս տեսության մեջ տնտեսությունը դիտարկվում էր որպես հասարակական կյանքի ոլորտ, որը հայտնվել էր ճգնաժամային վիճակում: Ենթադրվում էր, որ առանց պետության միջամտության տնտեսությունն ի զորու չէր դուրս գալու այս վիճակից: Ջ. Քեյնսը կարծում էր, որ շուկայական կապիտալիստական տնտեսության ինքնակարգավորումն անհնար է. պետությունը պետք է քայլեր ձեռնարկի երկրում պահանջարկը խթանելու համար՝ վարելով դրամավարկային ու ֆինանսաբյուջետային ակտիվ քաղաքականություն[3]: Քեյնսի հայեցակարգը նախատեսում է, որ ներդրումային և ձեռնարկատիրական գործունեության կարգավորման ու

[3] Տե՛ս **Кейнс Д.,** Общая теория занятости, процента и денег, М.: «Эксмо», 2022, էջ 950:

խթանման հիմնական գործիքը Կենտրոնական բանկի տոկոսադրույքն է, որը ենթադրում է «էժան փողի քաղաքականության» կիրառում տնտեսական անկման ժամանակ՝ իջեցնելով բանկային տոկոսադրույքը, իսկ տնտեսական վերելքի ժամանակահատվածներում՝ «թանկ փողի քաղաքականության» կիրառում՝ տնտեսության գերտաքացումը կանխելու համար: Այսպիսով, դրամային քաղաքականությունը պետք է իրականացվի տնտեսական պարբերաշրջանի փուլերին համապատասխան՝ արագ արձագանքելով ազգային տնտեսության վիճակին:

Քեյնսի տեսության մեջ, սակայն, էական թերություններ նկատվեցին, որոնց պատճառով առաջացավ միանգամայն հակադիր մոնետարիստական տեսությունը: Դրա հիմնադիր Միլթոն Ֆրիդմանը դեմ էր տնտեսության պետական կարգավորմանը՝ համարելով, որ դա ոչ միայն անօգուտ է, այլև նույնիսկ վնասակար: Մոնետարիզմի տեսանկյունից տնտեսության մեջ պետության միջամտությունը պետք է սահմանափակվի միայն դրամի շրջանառության վերահսկմամբ: Պետության ցանկացած այլ մասնակցություն տնտեսական գործընթացներին հանգեցնում է անհամամասնությունների ու աղավաղումների: Փողի զանգվածը մեծացնելով կամ նվազեցնելով՝ կարելի է փոխել տոկոսադրույքը՝ այդպիսով ազդելով ներդրումների, հետևաբար նաև արտադրության ծավալի վրա:

Ըստ մոնետարիստների՝ դրամավարկային ճկուն քաղաքականության իրականացումը լուրջ վտանգ է պարունակում, քանի որ տնտեսության կարգավորման ոլորտում ընդունված որոշումների ազդեցությունը նկատելի է դառնում միայն որոշ ժամանակ անց (6-9 ամիս), ինչի հետևանքով կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ կենտրոնական բանկերի ձեռնարկած միջոցները կարող են ուշացած դիտարկվել: Ուստի և մոնետարիզմը հանդես է գալիս հօգուտ դրամավարկային կոշտ քաղաքականություն իրականացնելու, որը կախված չէ ձևավորված իրավիճակից և ուղղված է

գնաճը սահմանափակելուն: Այս քաղաքականության գլխավոր գործառույթը շրջանառության մեջ դրվող փողը վերահսկելն է՝ ելնելով տնտեսության երկարաժամկետ աճի տեմպին համապատասխանող որոշակի մակարդակից: Այդ նպատակով, անկախ պարբերաշրջանի փուլերից, անհրաժեշտ է ամեն տարի ավելացնել շրջանառության մեջ գտնվող դրամային զանգվածը երկար ժամանակահատվածի համար հաշվարկված ՀՆԱ-ի միջին տարեկան աճի չափով: Սա թույլ է տալիս որոշակի պայմաններում բավականին արդյունավետ կառավարել գնաճը՝ խթաններ ստեղծելով տնտեսական աճի համար: Ենթադրվում է, որ դրամավարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գնաճը վերահսկելուն, այլ ոչ թե պահանջարկի վրա ազդելուն: Այսինքն՝ հիմնական տոկոսադրույքը կարգավորելու միջոցով կենտրոնական բանկերը ազդում են հենց փողի զանգվածի վրա՝ հասնելու գնաճի սահմանված մակարդակին, այլ ոչ թե իրական ՀՆԱ-ի ծավալին:

Ազատական մոնետարիզմի՝ ժամանակակից գլոբալացման գործընթացների յուրատեսակ շրջանառու համակարգի գործառնության հիմքը համաշխարհային արժութային-ֆինանսական համակարգն է, որը ձևավորվել է միջազգային հարաբերությունների Յալթա-պոտսդամյան համակարգի շրջանակում՝ սկսած Բրեթոն-Վուդսի համաժողովից մինչև արդի չափանիշներին համապատասխանեցված միջոցառումներ ու լուծումներ:

XX դարի 30-ական թվականներին, տնտեսական ճգնաժամով պայմանավորված, բազմաթիվ երկրներ կիրառեցին արժույթների արժեզրկումը որպես մրցակցային առավելություն, ինչպես նաև բազմաթիվ փոխարժեքներ, կապիտալի տեղաշարժի սահմանափակումներ՝ ազգային տնտեսությունը խթանելու նպատակով: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում արդեն արժութային սահմանափակումներ կիրառեց աշխարհի առաջատար երկրների մեծ մասը: Արժույթների սառեցված փոխարժեքները

հազվադեպ էին փոփոխվում, բայց փողի գնողունակությունը նվազում էր գնաճի մեծացման պատճառով: Նման պայմաններում հասունացավ միջազգային արժութային համակարգի սկզբունքների վերանայումը:

Հետպատերազմյան արժութային համակարգի սկզբունքները մշակեցին տնտեսագետների մի քանի թիմեր. հիմնական նախագծերը ներկայացրին Հարի Ուայթը (Միացյալ Նահանգներ) և Ջոն Քեյնսը (Մեծ Բրիտանիա): Փորձագետների նպատակն էր ստեղծել արժութային այնպիսի համակարգ, որը կապահովեր արժույթների փոխարժեքների կայունությունը, հետպատերազմյան տնտեսական աճը և կսահմանափակեր ճգնաժամերի սոցիալ-տնտեսական հետևանքները:

1944 թվականի հուլիսին, երբ արդեն կանխորոշված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ելքը, ԱՄՆ Նյու Հեմփշիր նահանգի Բրեթոն Վուդս փոքրիկ քաղաքում տեղի ունեցավ ֆինանսական համաժողով (The United Nations Monetary and Financial Conference), որի հիմնական խնդիրներն էին միջազգային արժութային ու ֆինանսական հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև արժութային նոր համակարգի սկզբունքների համաձայնեցումը: Համաժողովին մասնակցեցին 44 պետությունների պատվիրակներ: Այնտեղ ընդունված որոշումները հսկայական ազդեցություն ունեցան աշխարհի առաջատար տնտեսությունների հետպատերազմյան զարգացման վրա[4]:

ԱՄՆ դոլարը ճանաչվեց համաշխարհային հիմնական արժույթ, որը կարելի էր փոխանակել ոսկով՝ 1 տրոյական ունցիայի դիմաց (31,1 գր.) 35 ԱՄՆ դոլար հարաբերակցությամբ: Բրիտանական ֆունտ ստեռլինգը հայտարարվեց երկրորդ պահուստային արժույթ: Մյուս արժույթների փոխարժեքները կցվեցին դոլարին: Պատերազմի ընթացքում Միացյալ Նահանգների տնտեսությունը

[4] Տե՛ս Бреттон-Вудская финансовая конференция 1944 года. Справка // «РИА Новости», https://ria.ru/20090722/178243946.html, հասանելի՝ 15.04.2023:

զգալիորեն ուժեղացավ, և այդ երկիրն ընտրվեց ֆինանսական ու տնտեսական հզորության և կայունության սկզբունքով:

Արժութային համակարգը կառավարելու համար ստեղծվեցին Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (Համաշխարհային բանկ՝ ՀԲ):

ԱՄՀ-ն կոչված էր ստեղծելու միջազգային հաշվարկների համակարգ ընթացիկ գործարքների, փոխարժեքների կայունությունը պահպանելու և մասնակից երկրներին կարճաժամկետ ու միջնաժամկետ վարկեր տրամադրելու համար՝ վճարային հաշվեկշռի պակասուրդը ծածկելու նպատակով: Համաշխարհային բանկը, իր հերթին, պետք է երկարաժամկետ վարկեր տրամադրեր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկրների վերականգնման համար՝ օգնելով զարգացող երկրներին հաղթահարելու աղքատությունը, սկիզբ դնելով կայուն տնտեսական աճին:

Երկրների կենտրոնական բանկերը պետք է ապահովեին արժույթների կայուն փոխարժեքը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժութային միջամտություններ: Ռեսուրսների պակասի դեպքում պետությունները կարող էին դիմել ԱՄՀ օգնությանը: Երկրները կարող էին արժեզրկել կամ արժևորել իրենց արժույթները վճարային հաշվեկշռի հավասարակշռությունը հիմնովին խախտվելու դեպքում Արժույթի միջազգային հիմնադրամի հետ խորհրդակցելուց հետո[5]:

ԽՍՀՄ-ը թեև մասնակցեց համաժողովին, սակայն հետագայում Խորհրդային Միության ղեկավարությունը Սառը պատերազմի հաստատման համապատկերում չվավերացրեց համաժողովում ընդունված համաձայնագրերը և չմասնակցեց Համաշխարհային բանկի ու ԱՄՀ աշխատանքներին: Միայն 1991 թվականին՝ ԽՍՀՄ փլուզման նախաշեմին, երկրին տրվեց ԱՄՀ ասոցացված

[5] Տե՛ս **Алексеева Н., Медведева А.,** «Отстаивает интересы США»: 75 лет назад был основан Международный валютный фонд // «Russia Today», https://russian.rt.com/business/article/815310-mvf-godovschina-sozdanie, հասանելի՝ 15.04.2023:

անդամի կարգավիճակ: Ռուսաստանը՝ որպես ԽՍՀՄ իրավահաջորդ, 1992 թվականի հունիսին դարձավ ԱՄՀ ու ՀԲ անդամ:

Բրեթոն Վուդսի արժութային համակարգը կարևոր դեր խաղաց հետպատերազմյան վերականգնման տարիներին և հետագայում աշխարհի առաջատար երկրների տնտեսությունների զարգացման գործում: Սակայն Եվրոպայի ու Ասիայի երկրների տնտեսությունների աճին, ինչպես նաև միջազգային առևտրի զարգացմանը զուգընթաց առաջատար երկրներին անհրաժեշտ եղան ավելի ու ավելի մեծ ծավալի հաշվարկային միջոցներ: Բրեթոն Վուդսի արժութային համակարգը կարող էր հաջողությամբ գործել միայն այնքան ժամանակ, քանի դեռ Միացյալ Նահանգների ոսկու պաշարները թույլ էին տալիս փոխանակել դոլարը ոսկով: Հարկ է նաև նշել, որ ոսկու արդյունահանման ծավալն աճում էր շատ ավելի դանդաղ, քան աճում էին միջազգային առևտրի ծավալները: Դոլարային խնայողություններ ունեցողների՝ դրանք ոսկով փոխանակելու իրավունքը հակասության մեջ մտավ այդ պարտավորությունը կատարելու ԱՄՆ հնարավորությունների հետ:

ԱՄՆ կարճաժամկետ արտաքին պարտքը 1949-1971 թվականներին աճեց 8,5 անգամ, իսկ ոսկու պաշտոնական պահուստները նույն ժամանակահատվածում նվազեցին 2,4 անգամ[6]: Միայն մի քանի երկրների հաջողվեց կանխիկ դոլարը փոխանակել ոսկով, այն էլ՝ ԱՄՆ կառավարության հետ երկարատև բանակցություններից հետո:

Բրեթոն Վուդսի արժութային համակարգի ճգնաժամը, այդուհանդերձ, պայմանավորված էր ոչ միայն ԱՄՆ ոսկու պաշարների կրճատմամբ: Այս հանգամանքին ավելացան ֆինանսատնտեսական բնույթի բազմաթիվ այլ գործոններ: Այսպես, 1967 թվականին արժութային ճգնաժամի սկիզբը համընկավ տնտեսական աճի

[6] Տե՛ս Международные валютно-кредитные и финансовые отношения / под ред. Л. Н. Красавиной, М.: «Финансы и статистика», 2000, էջ 50:

դանդաղման հետ: Տարբեր երկրներում գնաճի տարբեր տեմպերը ազդեցին արժույթների փոխարժեքների շարժընթացի վրա, իսկ փողի գնողունակության նվազումը պայմաններ ստեղծեց «փոխարժեքի շեղումների» համար: Որոշ երկրների (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ) հաշվեկշիռների պարբերական պակասուրդն ու մյուսների (Գերմանիա, Ճապոնիա) դրական հաշվեկշիռը ուժեղացրին փոխարժեքների կտրուկ տատանումները: Նկատվեց վճարային հաշվեկշիռների անկայունության աճ, որն արտահայտվեց դրանց պարբերական պակասուրդով՝ չնայած ԱՄՀ-ի արտաքին կոշտ կարգավորմանը: Բրեթոն Վուդսի համակարգի հակասությունները ուժեղացան Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ տնտեսական դիրքերի թուլացմանը զուգահեռ, որոնք իրենց վճարային հաշվեկշիռների պակասուրդը մարում էին ազգային արժույթների նոր ծավալներով՝ չարաշահելով դրանց պահուստային լինելու կարգավիճակը: Արդյունքում խարխլվեց պահուստային արժույթների կայունությունը: Անդրազգային կորպորացիաները (ԱԱԿ) տիրապետում էին հսկայական չափի կարճաժամկետ ակտիվների՝ տարբեր արժույթներով, որոնք զգալիորեն գերազանցում էին այն երկրների կենտրոնական բանկերի արժութային պահուստները, որոնցում տեղակայված էին ԱԱԿ-ների գլխավոր գրասենյակները: Այս գումարները ազգային վերահսկողությունից դուրս էին, և ԱԱԿ-ները իրենց շահույթ հետապնդող գործունեության մեջ օգտագործում էին դրանք հսկայական չափերի հասնող արտարժույթի սպեկուլյացիաներում:

Բրեթոն Վուդսի արժութային համակարգը փաստացի դադարեց գոյություն ունենալ 1971 թվականին, երբ օտարերկրյա կառավարությունների համար դադարեցվեց ԱՄՆ դոլարի ոսկով փոխանակումը: 1972 թվականին ԱՄՀ կառավարիչների խորհուրդը ձևավորեց հատուկ կոմիտե՝ Բրեթոն Վուդսի արժութային համակարգի թույլ կողմերը բացահայտելու ու դրանք վերացնելու համար:

Կոմիտեն առանձնացրեց երեք հիմնական խնդիր՝ *իրացվելիության, ֆինանսական ու վստահության*: *Իրացվելիության հիմնախնդրի* դեպքում համակարգը չէր կարողանում ապահովել միջազգային առևտրի ու ֆինանսական գործառնությունների համար անհրաժեշտ դրամական միջոցների ծավալը, քանզի ԱՄՆ ոսկու պաշարները սահմանափակ էին: *Ֆինանսական հոսքերի բալանսավորման հիմնախնդրի* դեպքում համակարգը չուներ վճարային հաշվեկշիռը կարգավորելու գործող ու արդյունավետ մեխանիզմ, երկրների անկարողությունը կամ չցանկանալը փոխելու արժույթների անվանական արժեքը խախտում էր արտաքին վճարումների հավասարակշռությունը: *Վստահության հիմնախնդրի* դեպքում օտարերկրյա դրամատերերի թիվն ու առաջին հերթին երկրների կենտրոնական բանկերի մոտ կուտակված ԱՄՆ դոլարի քանակը սկսեցին զգալիորեն գերազանցել ԱՄՆ ոսկու պաշարների արժեքը՝ պարզ դարձնելով, որ ԱՄՆ-ն այլևս չի կարող պահել դոլարի արժեքը նախկին մակարդակի վրա: Այնուամենայնիվ, Բրեթոն Վուդսի արժութային համակարգը գործեց մինչև 1978 թվականը, երբ այն փոխարինվեց Ճամայկայի արժութային համակարգով:

Ճամայկայի արժութային համակարգի հիմնադրույթները հաստատվեցին 1976 թվականի հունվարին Քինգսթոնում (Ճամայկա) կայացած ԱՄՀ համաժողովում: Կարգավորման կանոններն ու սկզբունքները վերջնականապես ամրագրվեցին 1978 թվականին, երբ ձայների մեծամասնությամբ վավերացվեցին ԱՄՀ կանոնադրության փոփոխությունները[7]:

Պաշտոնապես չեղարկվեց ոսկու ստանդարտը. ոսկին վերածվեց սովորական ապրանքի: Արժույթները, այդ թվում՝ ԱՄՆ դոլարը, այլևս չէին պայմանավորվում ոսկու գնով և ոսկով չէին

[7] Տե՛ս Статьи соглашения международного валютного фонда (1978, 1 апреля) / Вашингтон, округ Колумбия: Международный валютный фонд, 2011, https://www.imf.org/external/pubs/ft/aa/rus/index.pdf, հասանելի՝ 15.04.2023:

փոխանակվում: Կենտրոնական բանկերը կարող էին ոսկի գնել և վաճառել շուկայական գներով: Ոսկու ստանդարտից ամբողջապես հրաժարվելը հիմք դարձավ արժութային նոր համակարգի և XX դարի ամենակարևոր մակրոտնտեսական հայտնագործություններից մեկի համար: Սակայն, չնայած նրան, որ ոսկին դարձավ սովորական ապրանք, աշխարհի առաջատար երկրների կենտրոնական բանկերը շարունակում էին պահել ոսկու բավականին մեծ պաշարներ:

Երկրները ինքնուրույն էին որոշում, թե ինչպիսին պիտի լինի իրենց արժույթի փոխարժեքը՝ ազատ փոխարկելի՞, լողացող միջակայքի շրջանակո՞ւմ, թե՞ ամուր կապված այլ արժույթի կամ արժույթների զամբյուղի հետ: Երկրների կենտրոնական բանկերն այլևս պարտավոր չէին պահպանել ամրագրված փոխարժեքները: Այնուամենայնիվ, կենտրոնական բանկերն անհրաժեշտության դեպքում կարող էին իրականացնել արտարժույթի միջամտություններ՝ ազգային արժույթի փոխարժեքը կայունացնելու համար: Երկրների մեծ մասն ընտրեց ազգային արժույթի լողացող փոխարժեքը, որի պարագայում արժույթի արժեքը որոշվում էր առաջարկի ու պահանջարկի միջոցով:

Փաստացի պահուստային արժույթներ մնացին ԱՄՆ դոլարը, բրիտանական ֆունտ ստեռլինգը, շվեյցարական ֆրանկը, ճապոնական իենը, գերմանական մարկն ու ֆրանսիական ֆրանկը: Չեռնարկված միջոցառումների արդյունքում ոսկու և արտարժույթի ստանդարտը վերափոխվեց թղթի ու դոլարի ստանդարտի, որի պարագայում բոլոր երկրները, բացառությամբ ԱՄՆ-ի, ստանձնեցին ռիսկային պարտավորություններ՝ պահպանելու արժութային նոր փոխարժեքները: Տարերայնորեն կյանքի կոչվեց լողացող փոխարժեքների պրակտիկան, և Բրեթոն Վուդսի արժութային համակարգը դադարեց գործել:

Ըստ մտահղացման՝ Ճամայկայի արժութային համակարգը պետք է ավելի ճկուն դառնար, քան Բրեթոն Վուդսինը, և ավելի

լավ հարմարվեր վճարային հաշվեկշիռների ու ազգային արժույթների փոխարժեքների անկայունությանը: Ընդ որում՝ չնայած ԱՄՆ դոլարի՝ որպես հիմնական վճարամիջոցի կարգավիճակը պաշտոնապես վերացնելուն՝ դոլարը գրեթե միշտ մնաց միջազգային հաշվարկների հիմնական արժույթը, ինչը պայմանավորված էր այլ երկրների համեմատ Միացյալ Նահանգների տնտեսության հզորությամբ:

Ստեղծված համակարգի էությունն այն էր, որ որոշվեց համաշխարհային ֆինանսական համակարգի երկարաժամկետ զարգացման վեկտորը, որն ուղղված էր ամերիկյան դոլարի շրջանառության գոտու ընդլայնմանը: Սկզբնական փուլում այս գոտին սահմանափակվում էր համաշխարհային սոցիալիստական ճամբարի գոյությամբ, որը ֆինանսատնտեսական առումով զգալիորեն մեկուսացած էր արևմտյան երկրներից: Սակայն հետագայում դրա, ինչպես նաև Խորհրդային Միության փլուզումից հետո ԱՄՆ-ն դարձավ լիիրավ «համաշխարհային հեգեմոն» ոչ միայն ֆինանսատնտեսական ոլորտում, այլև համաշխարհային հանրության հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ դրանով իսկ նշանավորելով միաբևեռ աշխարհի շրջափուլի սկիզբը:

Որպես ազդեցության լծակ՝ ԱՄՆ-ն սկսեց օգտագործել հենց մոնետարիստական քաղաքականության գործիքները, ինչը դարձավ համաշխարհային տնտեսության գործառության հիմքը, և մնացած բոլոր երկրները պարտադրված եղան հետևելու հենց մոնետարիզմի տրամաբանությանը: Այն օգնեց ԱՄՆ-ին ոչ միայն լիակատար վերահսկողություն հաստատելու համաշխարհային ֆինանսական համակարգի և տնտեսության նկատմամբ, այլև ապահովելու բարեկեցության բարձր մակարդակ իր քաղաքացիների ու ներքին սպառման համար հիմնականում համաշխարհային ռեսուրսները վերաբաշխելու միջոցով:

Ինչպես տեսնում ենք, օգտագործելով փողի զանգված թողարկելու ու զեղչային դրույքաչափերը որոշելու իրենց իրավունք-

ները՝ մոնետարիստական հայեցակարգը ֆինանսական սուբյեկտներին թույլ է տալիս գրեթե ամբողջությամբ կարգավորել հասարակական կյանքի տնտեսական ոլորտը: Եվ դա դեռ ինքնիշխան պետությունների շրջանակում: Կարելի է միայն կռահել, թե ինչ հնարավորությունների է տիրապետում համաշխարհային քաղաքականության սուբյեկտը, որի ձեռքում է գտնվում աշխարհում ամենագործածական պահուստային արժույթի տպագրական մեքենան: ԱՄՆ-ում դրամավարկային քաղաքականության կարգավորիչը Դաշնային պահուստային համակարգն է, որը կարգավորում է երկրի ողջ ֆինանսական համակարգը: Եթե հաշվի առնենք, որ այն մասնավոր կազմակերպություն է, ապա հասկանալի է դառնում, թե որքան սահմանափակ է ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ամբողջ աշխարհի ֆինանսավարկային քաղաքականության ոլորտում որոշումներ կայացնողների շրջանակը:

Նման համակարգը ի վիճակի է լուծել ԱՄՆ ֆինանսական ու տնտեսական գրեթե բոլոր ներքին խնդիրները, որոնք առաջանում են երկրի առջև տարբեր ճգնաժամային փուլերում, և, ինչը շատ կարևոր է, ապահովել սոցիալական կայունություն հասարակության մեջ: Չէ՞ որ դոլարային թղթադրամների մշտական անհրաժեշտությունն աշխարհում զգալիորեն թանկացնում է այդ արժույթը՝ այն դարձնելով պահանջված, խթանում է նաև ակտիվ դրամաշրջանառությունը: Հետևաբար այս արժույթի նոր խմբաքանակներ շրջանառության մեջ դնելը չի հանգեցրել գնաճային գործընթացների: Միացյալ Նահանգները երկար ժամանակ լայնորեն օգտագործում էր այս հանգամանքը ինչպես տնտեսավարող սուբյեկտներին վարկավորելու, այնպես էլ երկրի քաղաքացիներին սպառողական (գործնականում անվերադարձ) վարկեր տրամադրելու համար, ինչը, ի վերջո, ապահովում էր սպառման խթանումն ու բնակչության բարեկեցության բարձր մակարդակը:

Այս ամենին գումարվեց ԱՄՆ-ի կողմից վերահսկվող միջազգային հաշվարկների համակարգի՝ SWIFT-ի ներդրումը, որն

ապահովում է երկրի բյուջեն աշխարհում իրականացվող ֆինանսական գործառնություններից ստացված դրամական միջոցների մշտական ներհոսքով: Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ գործող համաշխարհային ֆինանսական համակարգի շրջանակում ստեղծված գործնականում բոլոր միջազգային ֆինանսական կազմակերպությունները ևս, ըստ էության, գտնվում էին ամերիկյան Կենտրոնական բանկի հաշվեկշռում:

Ֆինանսական նման համակարգը, սակայն, լիովին համապատասխանում էր XX դարի 90-ականներին հաստատված միաբևեռ աշխարհակարգին: Համաշխարհային առևտրում ներգրավված բոլոր երկրները հետևեցին համաշխարհային ֆինանսական համակարգի կողմից սահմանված մոնետար սկզբունքներին, որոնք չէին կարող չսահմանափակել իրենց ինքնիշխանությունը որոշումներ կայացնելիս ինչպես տնտեսության, այնպես էլ քաղաքականության, հատկապես աշխարհաքաղաքականության ոլորտներում: Ուստի համաշխարհային քաղաքականության որոշ ակտորների, օրինակ՝ իրենց ինքնիշխանությունը ամրապնդել ձգտող Ռուսաստանի ու Չինաստանի ուժեղացմանը զուգընթաց գլոբալ հարացույցի տնտեսական հիմքերը խարխլվեցին, ինչը չէր կարող չանդրադառնալ համաշխարհային քաղաքական իրավիճակի սրման վրա:

Մեր կարծիքով նման սրացման պատճառները բխում են ներկայումս համաշխարհային տնտեսական կացութաձևի օբյեկտիվորեն տեղի ունեցող փոփոխությունից (ՀՏԿ): ՀՏԿ հիմնախնդիրը դարձել է մասնավորապես ռուս հետազոտողների մի խմբի քննության առարկան, որը գիտական վարկած է ձևակերպել «համաշխարհային տնտեսական համակարգի զարգացման մեջ աշխարհատնտեսական կացութաձևերի փոփոխման և դրանց հետ կապված քաղաքական փոփոխությունների օրինաչափության մասին»[8]: Ընդ որում՝ խմբի անդամների կարծիքով, ՀՏԿ փոփոխման

[8] Տե՛ս Свидетельство № 41-Н о регистрации Международной академией авторов научных открытий и изобретений под научно-методическим руководством

գործընթացը կարող է ուղեկցվել միջազգային ասպարեզում լուրջ կատակլիզմներով: «Աշխարհատնտեսական կացութաձև» հասկացությունը սահմանվում է որպես միջազգային ու ազգային ինստիտուտների փոխկապակցված համակարգ, որն ապահովում է տնտեսության ընդլայնված վերարտադրությունը՝ որոշարկելով գլոբալ տնտեսական հարաբերությունների մեխանիզմը: Առաջնային է առաջնորդ երկրի ինստիտուտների դերը, որոնք գերիշխող ազդեցություն են ունենում միջազգային առևտրատնտեսական ու ֆինանսական հարաբերությունները կարգավորող հաստատությունների վրա:

ՀՏԿ փոփոխության ժամանակահատվածներում՝ հին աշխարհակարգի ոչնչացման ու նորի ձևավորման ընթացքում, տեղի է ունենում միջազգային հարաբերությունների համակարգի կտրուկ ապակայունացում: Արդեն իսկ սպառվում են ինստիտուտների ու տեխնոլոգիաների արդի համակարգի հիման վրա սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները: Միևնույն ժամանակ համաշխարհային տնտեսական համակարգում հայտնվում է նոր առաջնորդ կամ երկրների խումբ ՝ տնտեսության զարգացման կառավարման ավելի արդյունավետ համակարգով: Նոր կենտրոնն առաջ է անցնում տեխնոլոգիական կառուցակարգի կարևորագույն ուղղություններում՝ հենվելով արտադրական հարաբերությունների նոր համակարգի՝ ռեսուրսները կենտրոնացնելու ու մարդկային ներուժը ակտիվացնելու ունակության վրա: Մասնավորապես, Հնդկաստանի ու ՉԺՀ սոցիալ-տնտեսական հաջողությունները արդեն կարող են վկայել աշխարհատնտեսական նոր կացութաձևի ձևավորված միջուկի մասին: Վերջին տասնամյակում ոչ պակաս կարևոր դեր է խաղում նաև Ռուսաստանը, թեև արդեն ոչ թե տնտեսական, այլ առաջին հերթին ռազմաքաղաքական ու էներգետիկ ոլորտներում:

Российской академии естественных наук; Глазьев С. Последняя мировая война. США начинают и проигрывают, М.: «Книжный мир», 2016:

Ժամանակակից Չինաստանի տնտեսական հզորության աճը թույլ է տալիս նրան զգալիորեն ակտիվացնել իր արտաքին քաղաքականությունը՝ լիարժեքորեն դառնալով համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոն: Դեն Սյաոպինի բարեփոխումներից հետո՝ վերջին 40 տարվա ընթացքում, Չինաստանի ՀՆԱ-ն աճեց մոտ 90 անգամ, 2000-2015 թվականներին Չինաստանի տնտեսությունը՝ տարեկան 7-9 %-ի սահմաններում (առանձին ժամանակահատվածներում՝ 10-14 %): 2016 թվականից ի վեր աճի տեմպերը սովորաբար 5-7 % են[9]: Միջին տարեկան ներդրումը համաշխարհային տնտեսության աճի մեջ գերազանցել է 30 %-ը[10]:

2021 թվականին Չինաստանը աշխարհում երկրորդ տեղն է զբաղեցրել արտասահմանում ուղղակի ներդրումների ծավալով (մոտ 150 մլրդ դոլար)՝ զիջելով միայն ԱՄՆ-ին: Չինաստանն իր պրոֆիցիտային առևտրից ստացված միջոցները տեղաբաշխում է իրական ակտիվներում աշխարհի տարբեր ծայրերում՝ Հարավարևելյան Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում: Օրինակ՝ այսօրվա դրությամբ Աֆրիկայի երկրների մոտ կեսի համար Չինաստանն առաջին առևտրային գործընկերն է (30 տարի առաջ ՉԺՀ-ի տեղը զբաղեցնում էին միայն արևմտյան երկրները, հիմնականում՝ ԱՄՆ-ն ու Ֆրանսիան): Աֆրիկայում չինական ներդրումների ծավալը 17 տարվա ընթացքում աճել է գրեթե 100 անգամ՝ 2003 թվականի 490 միլիոն դոլարից մինչև 2020 թվականի 43,4 միլիարդ դոլար: Սա Չինաստանին դարձրեց Աֆրիկայի ամենամեծ ներդրողը ԱՄՆ-ից հետո: Աֆրիկյան բիզնեսի համար չինական վարկերը գնահատվում են 153 միլիարդ դոլար 2000-2019

---

[9] Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայքը, https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?view=chart&locations=CN, հասանելի՝ 15.04.2023:

[10] Տե՛ս Среднегодовой вклад Китая в рост мировой экономики превысил 30% // «News.am», https://news.am/rus/news/416867.html, հասանելի՝ 15.04.2023:

թվականներին[11]: Ընդ որում՝ պետք է նշել, որ Չինաստանը Աֆրիկայում ունի բարձր հեղինակություն՝ ի տարբերություն արևմտյան երկրների: Դա պայմանավորված է նրանով, որ չինական ներդրումները զարգացնում են Աֆրիկայի արդյունաբերությունն ու ենթակառուցվածքը, իրենց հետ բերում են նոր տեխնոլոգիաներ, ստեղծում են նոր որակի աշխատատեղեր՝ դրականորեն ազդելով կյանքի մակարդակի վրա:

Մակրոտնտեսական որոշ ցուցանիշներով (ՀՆԱ-ի աճի տեմպեր, սեփական արտադրանքի արտահանում՝ 3,59 տրիլիոն դոլար 2022 թվականին[12], ՀՆԱ-ն ըստ գնողունակության համարժեքության և այլն) Չինաստանը սկսեց աստիճանաբար ԱՄՆ-ին դուրս մղել աշխարհում առաջատար դիրքերից: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ չինական տնտեսությունը, ունենալով բյուջեի հսկայական ավելցուկ ու վիթխարի ռեսուրսներ, սեփական վերարտադրությունն ապահովելու համար երկիրը կանգնեցրել է աշխարհաքաղաքական գործընթացներին ակտիվորեն մասնակցելու անհրաժեշտության առաջ:

Վերջին տարիների ընթացքում իրականացվող քաղաքականությունը ակտիվացրեց նոր ինստիտուտների գործունեությունը, ինչպիսիք են Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկը (ԵՆԱԲ), Շանհայան համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ), ԲՐԻԿՍ-ը: Իրականացվեցին նոր նախաձեռնություններ, ինչպիսին է տրանսպորտային գոտին, որը միտված է ապահովելու «ընդհանուր ճակատագրի հանրույթի» արտաքին քաղաքական հայեցակարգի ֆիզիկական հիմքը: Այսպես առաջացավ «Մետաքսի նոր ճանապարհի» ստեղծման գաղափարը կամ, ինչպես այսօր են անվանում, «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» հայեցակարգը:

---

[11] Տե՛ս Китай оккупирует африканскую экономику кредитами и инвестициями // «Regnum», https://regnum.ru/article/3478783, հասանելի՝ 15.04.2023:

[12] Տե՛ս Совокупный экспорт из Китая // «Trendeconomy», https://trendeconomy.ru/data/h2/China/TOTAL, հասանելի՝ 15.04.2023:

«Եթե հաջողվի կյանքի կոչել այդ նախագիծը, ՉԺՀ-ն կդառնա աշխարհաքաղաքական խաղացող, որը կարող է լրջորեն մրցակցել ԱՄՆ-ի հետ աշխարհում ազդեցության համար, քանի որ կունենա սեփական գլոբալ տրանսպորտային ենթակառուցվածքը՝ լիովին զերծ ամերիկյան վերահսկողությունից[13]»,– նշում է քաղաքական մեկնաբան Դմիտրի Գալկինը:

ԱՄՆ ղեկավարությունը, հասկանալով դա, բացահայտորեն հայտարարել է, որ թույլ չի տալու, որ այս նախագիծը հաջողվի: Նա խստիվ դեմ է արտահայտվել, որ չինական ընկերությունները վերահսկողություն իրականացնեն եվրոպական նավահանգիստների նկատմամբ: Ըստ այդմ՝ Բալթյան ու Հարավային Եվրոպայի երկրները ստիպված էին դադարեցնել արդեն նախանշված գործարքները Չինաստանի հետ: Ուստի ներկայումս չինական ընկերությունները միջնորդների օգնությամբ են ձեռք բերում եվրոպական տրանսպորտային ենթակառուցվածքը:

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի շուրջ դիմակայությունը Չինաստանին ստիպում է զգուշանալ նրանից, որ ԱՄՆ-ն միջոցներ կձեռնարկի էներգակիրների մատակարարումները դեպի ՉԺՀ սահմանափակելու ու չինական ընկերությունների կողմից բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրությունը դժվարացնելու համար: Ուստի Չինաստանը կատարում է պատասխան քայլեր. սահմանափակումներ է դնում համակարգչային տեխնիկայի արտադրության համար անհրաժեշտ հումքի, առաջին հերթին՝ հազվագյուտ հողային մետաղների (որոնց համաշխարհային արտադրության 70 %-ը Չինաստանում է)[14], ինչպես նաև շափյուղաների արտահանման նկատմամբ: Բացի դրանից՝ արևմտյան երկրները վերջին տարիների ընթացքում իրենց

---

[13] **Крайняя У.,** Китай стремится скупить весь мир // «Investing», https://ru.investing.com/news/economy/article-2273457, հասանելի՝ 15.04.2023:

[14] Տե՛ս Прибыль Китайской корпорации редкоземельных металлов в III квартале выросла на 122,5% // «ТАСС», https://tass.ru/ekonomika/16160079, հասանելի՝ 15.04.2023:

առաջ նպատակ են դրել զարգացնելու կանաչ էներգետիկան, իսկ այս ոլորտում միանշանակ առաջատարը հենց Չինաստանն է: Կանաչ էներգետիկայի ցանկացած սարքավորում պահանջում է հազվագյուտ հողային մետաղներ, իսկ դրանց համաշխարհային արտադրության բացարձակ մեծամասնությունը վերահսկվում է, ինչպես արդեն նշեցինք, Չինաստանի կողմից: Ավելին, հենց Չինաստանում է կենտրոնացված արևային պանելների համաշխարհային արտադրության 80 %-ը[15], իսկ հողմային տուրբինների արտահանման ոլորտում երկիրը նույնպես առաջատարներից է (2018 թ. ՉԺՀ բաժինը համաշխարհային շուկայում կազմում էր մոտ 30 %, իսկ 2022 թ. արդեն զբաղեցրեց պատվերների ընդհանուր քանակի 70 %-ը)[16]: Այս ամենը նշանակում է, որ չնայած ԱՄՆ խարդավանքներին՝ Չինաստանը կշարունակի ամրապնդել իր դիրքերը համաշխարհային տնտեսության մեջ՝ ավելի ու ավելի ընդգծելով իր՝ գլոբալ առաջնորդի դերը, այդ թվում՝ նաև տեխնոլոգիական ոլորտում:

Կա ևս մեկ խնդիր՝ ներդրումների նկատմամբ վերահսկողությունը: Չինական տնտեսության մեջ դրանց ներհոսքը դանդաղում է, փոխարենը Չինաստանն ինքն է ձգտում ամրապնդվել համաշխարհային շուկայում որպես գլոբալ ներդրող՝ ուժեղացնելով արտասահմանյան ընկերությունների կլանումը կամ դրանցում մասնաբաժիններ ձեռք բերելով: «Նման քաղաքականությունը Չինաստանի և Եվրոպայի զարգացած երկրների ու ԱՄՆ-ի միջև մրցակցության (այդ թվում՝ տեխնոլոգիական) սաստկացման հետևանք է[17]»,– նշում է փորձագետը:

---

[15] Տե՛ս "Зеленый переход": Китай бьет рекорды в чистой энергетике // «РИА Новости», https://ria.ru/20211228/energetika-1765825979.html, հասանելի՝ 15.04.2023:

[16] Տե՛ս Китай доминирует в мировых заказах на турбины в 2022 году // «Энергетика», https://forca.ru/novosti/kitay-dominiruet-v-mirovyh-zakazah-na-turbiny-v-2022-godu.html, հասանելի՝ 15.04.2023:

[17] Տե՛ս նույն տեղում:

Եթե դիտարկենք վերջին շրջանում արտասահմանում Չինաստանի ձեռք բերած ակտիվները, ապա նման գնումների շուրջ կեսը բաժին է ընկնում ԱՄՆ-ին, երկրորդ տեղում եվրոպական երկրներն են: Եվ այդ ձեռքբերումները հետզհետե ավելանում են բարձր տեխնոլոգիական ընկերությունների հատվածում:

«Այսպիսով, Չինաստանը ձգտում է ի ցույց դնել գլոբալ տեխնոլոգիական առաջնորդության իր հավակնությունները, իսկ մյուս կողմից՝ ձեռք բերել ռազմավարական ակտիվներ այն ոլորտներում, որտեղ նա թույլ է: Ուստի ապագայում Չինաստանի կողմից արտասահմանում բարձր տեխնոլոգիական ընկերություններ ձեռք բերելու միտումը միայն կուժեղանա»[18],– փաստում է տնտեսագետ Եվգենի Սմիռնովը:

Ակնհայտ է, որ տեղի ունեցող իրադարձությունների գլխավոր պատճառն այն է, որ այսօր աշխարհը կիսվում է երկու առաջատար տնտեսությունների՝ ԱՄՆ-ի ու Չինաստանի միջև: Այս գործընթացում Չինաստանն արդեն բախվել է Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ հակազդեցությանը, Ֆրանսիայի, Ճապոնիայի և բազմաթիվ այլ երկրների դժգոհությանը:

Նման պայմաններում անխուսափելի է դառնում համաշխարհային տնտեսական զարգացման ապակենտրոնացման գործընթացը, որը ներկայումս ուղեկցվում է համաշխարհային հիբրիդային պատերազմով ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային ուժային կենտրոնների միջև: Ժամանակակից համաշխարհային պատերազմի հիբրիդային բնույթը, այլ առանձնահատկություններից զատ, դրսևորվում է երկրների միջև ռազմաճակատային առաջնագծերի բացակայությամբ: Քաղաքական, տեղեկատվական ու արժութաֆինանսական հարթություններում բախումները հաճախ տեղի են ունենում այն երկրներում, որոնք

[18] **Крайняя У.** Китай стремится скупить весь мир // «Investing», https://ru.investing.com/news/economy/article-2273457, հասանելի՝ 15.04.2023:

պառակտված են իշխող էլիտայի և ժողովրդի միջև անհաշտ հակասությունների պատճառով:

Իրավիճակը սրվում է նաև այն պատճառով, որ համաշխարհային նախկին առաջնորդը ներկա փուլում լավագույն ժամանակները չի ապրում: Ամերիկյան տնտեսության վիճակի բոլոր կանխատեսող ցուցանիշները վկայում են լճագնաճի (ստագֆլյացիա) դրսևորումների մասին: Ամերիկյան տնտեսության այս իրավիճակին գումարվում է ֆինանսական շուկայի վիճակի կտրուկ վատթարացումը[19], որը ժամանակավորապես որոշ չափով մեղմվել էր դեռևս 2020 թվականին կորոնովիրուսային համաճարակի պատճառով:

Վերջին տարիներին ԱՄՆ-ում ավելի ու ավելի սուր են արտահայտվում ամերիկյան հասարակության սոցիալական տարբեր խմբերի միջև հակադրությունները: Իրավիճակը սրվում է առաջին հերթին գաղափարական ու արժեքային բովանդակության այնպիսի տարաձայնությունների հետևանքով, որոնք կարող են հանգեցնել զրոյական արդյունքով կոնֆլիկտների առաջացմանը: Երկու արժեհամակարգերի պայքարին դաժանություն կարող է հաղորդել հասարակության չափից դուրս զինված լինելը հրաձգային զենքով, որի քանակը 1,2 անգամ գերազանցում է ԱՄՆ բնակչության թվին[20]: Ամերիկյան հասարակությունը նաև խիստ պառակտված է ինչպես երկրում ժողովրդավարության իրական մակարդակի, այնպես էլ դրանում անցկացվող ընտրությունների նկատմամբ իր վերաբերմունքով: ԱՄՆ քաղաքականապես ակտիվ շատ քաղաքացիների մտքում թևածում է անգամ քաղաքացիական պատերազմի վտանգը:

---

[19] Տե՛ս Назад в прошлое. На Уолл-стрит ожидают повторения стагфляции 1970-х // «РБК», https://quote.rbc.ru/news/article/6221eca49a794712c67f8bad, հասանելի՝ 15.04.2023:

[20] Տե՛ս Количество единиц оружия в США на 67 млн превысило численность населения // «РБК», https://www.rbc.ru/rbcfreenews/5b29bbd69a79479de93bdd81, հասանելի՝ 15.04.2023:

Տնտեսությունը ավելի լավ վիճակում չէ նաև Եվրոպական Միությունում: Շատ ոլորտներում զիջելով Չինաստանին ու Հնդկաստանին՝ ԵՄ-ն լրացուցիչ դժվարությունների է առնչվում հակառուսական պատժամիջոցների պատճառով, որոնք պայմանավորված են ուկրաինական ճգնաժամով: Ռուսաստանի հետ ներմայրցամաքային առևտրի խորը կապվածության պատճառով եվրոպական երկրների մակրոտնտեսական դինամիկան կտրուկ վատթարացել է: Գնաճը 2022 թվականին հասել էր 9.2 տոկոսի[21]: ԵՄ երկրների բնակչության մակարդակն ու կյանքի որակը կտրուկ նվազել են՝ խորացնելով միգրացիոն և կորոնավիրուսային համավարակի ճգնաժամերի հետևանքները: Եվրոպական տնտեսության վրա խիստ բացասաբար է ազդում ռուսական շուկայի կորուստը:

Ռուսաստանին հնարավորինս առավելագույն չափով վնաս հասցնելու ձգտումից ելնելով՝ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան ու ԵՄ ղեկավարությունը նսեմացրել են իրենց գլխավոր խաղաքարտերը՝ համաշխարհային արժույթների թողարկման մենաշնորհը, օրինակելի իրավական ժողովրդավարական պետության իմիջը, հավատը մասնավոր սեփականության «սրբազան» իրավունքի նկատմամբ: Դրանով իսկ նրանք, իրենցից անկախ, բոլոր երկրներին ստիպեցին փնտրել համաշխարհային արժութային նոր գործիքներ, ռիսկերի ապահովագրության նոր մեխանիզմներ, ինչպես նաև ստեղծել միջազգային իրավունքի նորմերի վերականգնման և տնտեսական անվտանգության սեփական համակարգեր:

Նախորդ տարիներին Իրանի, Իրաքի, Լիբիայի, Վենեսուելայի, Աֆղանստանի ակտիվների, իսկ Ուկրաինայում ռազմական հատուկ օպերացիայի մեկնարկից հետո Ռուսաստանի պետական միջոցների սառեցումն ու բռնագրավումը նաև վարկաբեկել

[21] Տե՛ս Инфляция в еврозоне в декабре замедлилась до 9,2%, минимума за 4 месяца // «Интерфакс», https://interfax-ru.turbopages.org/interfax.ru/s/business/879-766, հասանելի՝ 15.04.2023:

են արևմտյան երկրների և շուկայական ազատ հարաբերությունների՝ իրենց իսկ սկզբունքները, քանի որ Արևմուտքը ԱՄՆ գլխավորությամբ սկսեց օգտագործել իր ֆինանսական համակարգն ու տեխնոլոգիական առաջատարությունը որպես ճնշում գործադրելու գործիք այն երկրների դեմ, որոնց ազգային շահերը չեն համապատասխանում արևմտյան երկրների շահերին: Այս ամենը ստիպեց մյուս պետություններին մտորել իրենց արժութային պահուստների ապահովության մասին: Անկախ պետությունները արդեն սկսել են հրաժարվել դոլարային ակտիվներից, ինչպես նաև փորձում են փոխադարձ առևտրում փոխարինել դոլարն ու եվրոն այլ արժույթներով: Այս գործընթացին ներգրավվել է նաև Չինաստանն իր ֆինանսական ու տնտեսական հզորությամբ, որին սատարում են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են ՇՀԿ-ն, ԲՐԻԿՍ-ը (որը մոտ ապագայում կարող է համալրվել շուրջ 20 երկրով), ԵՆԱԲ-ը (որը ոչ առանց հիմքի համարվում է ԱՄՀ-ի այլընտրանք) և «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը:

Տարբեր երկրների արժութային պահուստներում ու համաշխարհային առևտրում նկատվում է դոլարից ազատվելու կայուն միտում՝ հօգուտ չինական յուանի և ազգային այլ արժույթների: Մասնավորապես, 2023 թվականի մայիսին յուանի մասնաբաժինը ՉԺՀ միջսահմանային ֆինանսական գործառնություններում հասել է ռեկորդային 49.6 %-ի, իսկ դոլարն ու եվրոն միասին վերցրած՝ 47.9 %-ի (2010 թվականին դրանց մասնաբաժինը կազմել է մոտ 90 %)՝ պատմության մեջ առաջին անգամ տեղը զիջելով յուանին[22]:

Ըստ SWIFT-ի տվյալների՝ 2022 թվականի ընթացքում յուանի մասնաբաժինը համաշխարհային առևտրում կրկնապատկվել է՝ 2 %-ից դառնալով 4.5 % և մոտենալով եվրոյի մրցակցի կարգավի-

[22] Տե՛ս Юань впервые обошел доллар и евро в трансграничных расчетах КНР // «REN TV», https://ren.tv/news/ekonomika/1115201-iuan-vpervye-oboshel-dollar-i-evro-v-transgranichnykh-raschetakh-knr, հասանելի՝ 15.04.2023:

ճակին, որը զբաղեցնում է շուկայի 6 %-ը[23]: Սակայն դրանք միայն SWIFT համակարգով կատարված փոխանցումներ են: Չինաստանն ինքը ունի իր այլընտրանքային համակարգը՝ CIPS: 2022 թվականին CIPS-ն իրականացրել է շուրջ 96.7 տրիլիոն յուանի (մոտ 14 տրիլիոն դոլարի) գործառնություններ: Ըստ 2023 թվականի ապրիլի տվյալների՝ աշխարհի 110 երկրից համակարգին միացել է 1357 կազմակերպություն[24]: Ռուսաստանի ու Չինաստանի առևտրի ավելի քան 80 %-ն իրականացվում է ռուբլով և յուանով[25]: 2023 թվականի գարնանը Արգենտինան, որը առևտրային կայուն կապեր ունի ՉԺՀ-ի հետ, հայտարարել է, որ Չինաստանի հետ առևտրում երկիրը լիովին անցնում է յուանի և ԱՄՀ-ին իր պարտքը վճարել է յուանով: Լատինական Ամերիկայի մյուս երկրները ևս բազմիցս հայտարարել են դոլարից ամբողջովին հրաժարվելու անհրաժեշտության մասին: Այս ամենի արդյունքում 2023 թվականին ԱՄՆ դոլարի մասնաբաժինը միջազգային հաշվարկներում նվազել է մինչև 40 %-ի[26]:

Միջազգային հաշվարկներում չինական յուանի են անցնում նաև այն երկրները, որոնք կարող էին ներգրավված լինել Չինաստանին զսպելու ամերիկյան ռազմավարության մեջ: Օրինակ՝ դեռ 2021 թվականին Չինաստանն ու Ինդոնեզիան (Ասիայի ամենամեծ և արագ զարգացող տնտեսություններից մեկը) պայմանավորվել են դոլարի փոխարեն առևտուրն իրականացնել ազգային արժույթներով[27]: Դա վկայում է երկու երկրների մերձեցման մա-

---

[23] Տե՛ս FT: доля расчетов в юанях в международной торговле выросла до 4,5% // «ТАСС», https://tass.ru/ekonomika/17508141, հասանելի՝ 15.04.2023:

[24] Տե՛ս CIPS-ի պաշտոնական կայքը, https://www.cips.com.cn/en/participants/-participants_announcement/58049/index.html, հասանելի՝ 15.04.2023:

[25] Տե՛ս Путин рассказал о торговле с Китаем в рублях и юанях // «РИА Новости», https://ria.ru/20230704/kitay-1882085209.html, հասանելի՝ 15.04.2023:

[26] Տե՛ս Доля доллара США в международных расчетах снизилась в 2023 году до 40% // «ТАСС», https://tass.ru/ekonomika/17059745, հասանելի՝ 15.04.2023:

[27] Տե՛ս Центробанки Китая и Индонезии договорились использовать национальные валюты // «Regnum», https://regnum.ru/news/3365283, հասանելի՝ 15.04.2023:

սին՝ չնայած Ինդոնեզիան Չինաստանի դեմ պայքարում ներառելու ԱՄՆ մտադրություններին: Իսկ 2023 թվականի մայիսին Ինդոնեզիան ու Հարավային Կորեան (Ասիայում ԱՄՆ առանցքային դաշնակիցներից մեկը) կենտրոնական բանկերի մակարդակով ստորագրեցին փաստաթուղթ ներքին հաշվարկներում դոլարից հրաժարվելու մասին՝ հօգուտ իրենց արժույթների[28], ինչն ամենայն հավանականությամբ խոսում է Ինդոնեզիայի միջնորդությամբ Չինաստանի ու Հարավային Կորեայի միջև ոչ ուղղակի շփումների հաստատման մասին: Նույնիսկ Հնդկաստանը սկսեց ռուսական նավթ գնել յուանով, ինչը գրեթե անհնար էր նախքան 2022 թվականի իրադարձությունները՝ հաշվի առնելով դոլարի գերակայությունը աշխարհում, ամերիկա-հնդկական բավականին զարգացած հարաբերությունները և չին-հնդկական հարաբերությունների լարվածությունը (որոնք վերջին ժամանակներս սկսում են աստիճանաբար բարելավվել՝ չնայած տարածքային խնդիրներին):

Չինաստանը ԱՄՆ-ին դուրս է մղում նաև Մերձավոր Արևելքից: Երկիրը նավթի զգալի մասը ներմուծում է այս տարածաշրջանից (հիմնականում Սաուդյան Արաբիայից ու Իրաքից), ինչը Մերձավոր Արևելքը կարևոր տարածաշրջան է դարձնում Չինաստանի շահերի համար: Այս մասին է վկայում, մասնավորապես, 2022 թվականի դեկտեմբերին ՉԺՀ ղեկավար Սի Ծինփինի եռօրյա այցը Սաուդյան Արաբիա: Կողմերը ստորագրել են «Ռազմավարական գործընկերության մասին համապարփակ համաձայնագիրը»[29], ինչպես նաև հաստատել են երկու պետու-

[28] Տե՛ս Южная Корея и Индонезия отказываются от доллара во внутренних расчетах в пользу своих валют // «Первый Канал», https://www.1tv.ru/news/2023-05-04/452420-yuzhnaya_koreya_i_indoneziya_otkazyvayutsya_ot_dollara_vo_vnutrennih_raschetah_v_polzu_svoih_valyut, հասանելի՝ 15.04.2023:

[29] Տե՛ս Южная Корея и Индонезия отказываются от доллара во внутренних расчетах в пользу своих валют // «Первый Канал», https://www.1tv.ru/news/2023-05-04/452420-yuzhnaya_koreya_i_indoneziya_otkazyvayutsya_ot_dollara_vo_vnutrennih_raschetah_v_polzu_svoih_valyut, հասանելի՝ 15.04.2023:

թյունների երկարաժամկետ ծրագրերի ներդաշնակեցման պլանը. այդ ծրագրերն են՝ սաուդյան «Տեսլական-2030»-ը (դրա շրջանակում Կարմիր ծովի ափին կառուցվում է «հետնավթային դարաշրջանի» Նեոմ քաղաքը, որը պետք է դառնա առաջատար տեխնոլոգիաների ու նորարարական գործունեության գլոբալ կենտրոն) և չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը: Ստորագրվել է 34 ներդրումային համաձայնագիր տնտեսության տարբեր հատվածների, այդ թվում՝ Սաուդյան Արաբիայում ջրածնի գործարանի կառուցման վերաբերյալ[30]: Իսկ 2023 թվականի մարտին, ի լրումն դեկտեմբերյան համաձայնագրերի, «Saudi Aramco» ընկերությունը 12.2 միլիարդ դոլարի պայմանագիր է կնքել չինացի գործընկերների հետ՝ Չինաստանի հյուսիս-արևելքում նավթավերամշակման ու նավթաքիմիական համալիր կառուցելու մասին[31]: Բացի դրանից՝ Էր Ռիադում տեղի է ունեցել Չինաստանի առաջնորդի հանդիպումը Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի անդամ երկրների ղեկավարների հետ, ինչպես նաև անցկացվել է չին-արաբական մեծ գագաթնաժողով: Այդ միջոցառումների արդյունքում Չինաստանի ու արաբական երկրների միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ ներդրումային խորհրդի և միջուկային անվտանգության կենտրոնի ստեղծման մասին: Ի հավելումն դրան՝ Չինաստանն իր մերձավորարևելյան գործընկերներին ներկայացրել է համագործակցության ծրագիր՝ ութ ուղղություններով, այդ թվում՝ էներգետիկայի, պարենի, առողջապա-

---

[30] Տե՛ս Китай пришел на Ближний Восток надолго: почему визит Си Цзиньпина в Саудовскую Аравию стал ключевым событием для китайской дипломатии // «Российская Газета», https://rg.ru/2022/12/11/kitaj-prishel-na-blizhnij-vostok-nadolgo-pochemu-vizit-si-czinpina-v-saudovskuiu-araviiu-stal-kliuchevym-sobytiem-dlia-kitajskoj-diplomatii.html, հասանելի՝ 15.04.2023:

[31] Տե՛ս Saudi Aramco заключила сделку на постройку нефтеперерабатывающего и нефтехимического комплекса в Китае // «Российская Газета», https://rg.ru/-2023/03/27/saudi-aramco-zakliuchila-sdelku-na-postrojku-neftepererabatyvaiushchego-i-neftehimicheskogo-kompleksa-v-kitae.html, հասանելի՝ 15.04.2023:

հության, «կանաչ» նորարարության, անվտանգության և երիտասարդության զարգացման ոլորտներում:

Անշուշտ, այս ամենը վկայում է այն մասին, որ Չինաստանը տարածաշրջան է մտել երկար ժամանակով: Նախագծերը, որոնք նախատեսվում է իրականացնել, ենթադրում են երկարաժամկետ տեխնոլոգիական գործընկերություն և ոչ թե զուտ ֆինանսական ու առևտրային համագործակցություն: Չափազանց կարևոր է, որ Սաուդյան Արաբիան բացում է իր շուկան չինական բարձր տեխնոլոգիաների առջև, առաջին հերթին՝ «Huawei»-ի և չինական այլ խոշոր ընկերությունների: Նման տեղաշարժերը վկայում են Չինաստանի ու Սաուդյան Արաբիայի միջև վստահության բարձր մակարդակի մասին՝ հաշվի առնելով «Huawei» կորպորացիայի դեմ ԱՄՆ պատժամիջոցների քաղաքականությունը[32]:

Բանակցությունների մեկ այլ, թերևս ամենակարևոր թեման նավթի առևտուրը յուանով իրականացնելն էր: Փոխարենը Չինաստանը պատրաստ է տրամադրել իր ռազմական տեխնոլոգիաները (օրինակ՝ հրթիռների ստեղծման): Ընդ որում՝ Սաուդյան Արաբիան հնարավորություն կունենա աշխատելու, և նրա բաժնետոմսերը կցուցակվեն Շանհայի նավթային ու գազի ազգային բորսայում: Չինաստանը աստիճանաբար զարգացնում է այս հարթակը: Ըստ 2021 թվականի տվյալների՝ Շանհայի նավթային բորսայում, որը գործում է 2018 թվականից, նավթի առևտուրը հասել է 18.5 տրիլիոն յուանի (2.9 տրիլիոն դոլարի)[33]:

Հատկանշական է, որ դոլարի՝ որպես համաշխարհային արժույթի ձևավորումը սկսվել էր հենց Սաուդյան Արաբիայից 1970-ական թվականներին, երբ ԱՄՆ-ն առաջարկել էր Թագավո-

---

[32] Տե՛ս Китай пришел на Ближний Восток надолго: почему визит Си Цзиньпина в Саудовскую Аравию стал ключевым событием для китайской дипломатии // «Российская Газета», https://rg.ru/2022/12/11/kitaj-prishel-na-blizhnij-vostok-nadolgo-pochemu-vizit-si-czinpina-v-saudovskuiu-araviiu-stal-kliuchevym-sobytiem-dlia-kitajskoj-diplomatii.html, հասանելի՝ 15.04.2023:

[33] Տե՛ս Объем торговли нефтяными фьючерсами в Китае в 2021 году вырос на 54,63% // «ТАСС», https://tass.ru/ekonomika/13351219, հասանելի՝ 15.04.2023:

ության ղեկավարությանը նավթը վաճառել դոլարով՝ փոխարենը սահմանելով մեծ գեղչեր ամերիկյան զենքի գնման համար: Դրանից հետո նավթի առևտրում դոլարի օգտագործման շնորհիվ միջազգային հաշվարկներում ամերիկյան արժույթի մասնաբաժինը սկսեց աճել, և դոլարը դարձավ համընդհանուր ֆինանսական գործիք ամբողջ աշխարհի համար: Դոլարը հետագայում էլ կարող էր մնալ համաշխարհային արժույթ, եթե ԱՄՆ-ն այն չօգտագործեր որպես զենք այն երկրների դեմ, որոնց արտաքին քաղաքականությունը չէր համապատասխանում ամերիկյան շահերին: Ներկայումս Չինաստանը ձգտում է Սաուդյան Արաբիայի օգնությամբ վերացնել այդ կացությունը: Այս ռազմավարության իրականացման հնարավորություններն ավելի ու ավելի են մեծանում, քանի որ Չինաստանի տնտեսական հարաբերությունները Սաուդյան Արաբիայի հետ շարունակ ընդլայնվում են: Բացի դրանից՝ նկատվում է ամերիկյան (ԱՄՆ տասնամյա պետական պարտատոմսերի) զանգվածային վաճառքի միտում (հիմնականում Չինաստանի շնորհիվ): Փետրվարից մայիս ոչ ռեզիդենտների կողմից թրեժերիսների անմիջական վաճառքը կազմել է ռեկորդային 300 մլրդ դոլար[34]: Ամերիկյան դոլարի ու դրան առնչվող պահուստային արժույթների օգտագործումից հրաժարվելու միտումը կարող է ճակատագրական դառնալ ոչ միայն ամերիկյան ֆինանսական համակարգի, այլև ամբողջ համաշխարհային շուկայի համար: Դրանով իսկ նախադրյալներ կստեղծվեն գլոբալ հարացույցի ֆինանսատնտեսական բաղադրիչի վերափոխման համար:

[34] Տե՛ս Авторский доклад Изборскому клубу академика Глазьева // «Аврора», https://aurora.network/articles/11-analitika-i-prognozy/106003-chto-proiskhodit, հասանելի՝ 15.04.2023:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Գլոբալ զարգացման հարացույցի գաղափարական հիմքը վերջին տասնամյակների ընթացքում կազմել է լիբերալիզմի արժեհամակարգը: Իր պատմական զարգացման ընթացքում լիբերալիզմը գաղափարաքաղաքական մի շարք ճգնաժամեր է ապրել՝ պայմանավորված կողմնորոշումների վերարժևորմամբ[35]: Սա թելադրված էր համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցող սոցիալ-քաղաքական փոփոխություններով (երկու համաշխարհային պատերազմներ, 1929-1932 թթ. տնտեսական մեծ ճգնաժամ): Այս ընթացքում լիբերալիզմի հետ մրցակցող պահպանողականության և սոցիալիզմի գաղափարախոսությունները աջ ու ձախ բառացիորեն «գողացան» նրա գաղափարները: Լիբերալիզմի գաղափարական փոխակերպումները, ինչպես նաև գաղափարաքաղաքական այլ հոսանքների զգալի ակտիվացումը հանգեցրին դրա սոցիալական բազայի աստիճանական կրճատման: Այսպիսով, մրցակցող գաղափարախոսությունների ակտիվացման հետևանքով լիբերալիզմի սոցիալական հենքը «մաշվեց»:

Լիբերալիզմի նոր կերպարի ձևավորումն ընթանում է տարբեր, շատ առումներով միմյանց ժխտող ուղղություններով: Մի կողմից նկատելի է հավասարության ու արդարության, պետության կարգավորող դերի ռացիոնալացման գերակայության շեշտադրում: Այդպիսին էր լիբերալ-ռեֆորմիզմը կամ սոցիալ-լիբերալիզմը, որը քաղաքականապես արդեն թուլացել էր: Մյուս կողմից վերածնվում են հակաքեյնսական ավանդույթները, որոնք

[35] Տե՛ս **Енгоян А.,** Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Ер., Изд-во Российско-Армянского университета, 2011, էջ 257:

մերժում էին պետության միջամտությունը տնտեսության ոլորտում, նրա ակտիվ մասնակցությունը հասարակության սոցիալական կյանքին: Այդպիսին է նեոլիբերալիզմը կամ լիբերտարիզմը, որն այսօր հանդես է գալիս «իսկական» լիբերալիզմի դրոշի ներքո և քաղաքական մեծ կշիռ ունի արևմտյան հասարակություններում ու ընդհանրապես աշխարհում:

Լիբերալ-ռեֆորմիզմը, որը, ելնելով քեյնսյան սկզբունքներից, ընդունում է պետության ներգրավվածությունն ինչպես հասարակության տնտեսական կյանքում, այնպես էլ նրա ակտիվ մասնակցությունը սոցիալական ծրագրերին, ենթադրում է սոցիալական համագործակցություն ու պաշտպանվածություն, մրցակցության համադրում պետական կարգավորման հետ: Այսպիսով, այս գաղափարական հոսանքը, հրաժարվելով դասական լիբերալիզմի հիմնարար սկզբունքներից, մոտեցել է սոցիալ-դեմոկրատիզմին: Փաստորեն՝ տվյալ դեպքում խոսքը միանգամայն գաղափարաքաղաքական նոր հոսանքի մասին է, որը շեղվել է զարգացման լիբերալ ուղուց և ժամանակակից աշխարհում քաղաքական որևէ լուրջ ազդեցություն չունի:

Հենց այս հանգամանքն էլ թույլ տվեց որոշ գաղափարախոսների հայտարարել դասական լիբերալիզմի ակունքներին վերադառնալու մասին՝ լիբերտարիզմի (կամ նեոլիբերալիզմի) գաղափարական հիմքով, որը ձևավորվել է XX դարի կեսերին որպես հակադրություն սոցիալ-լիբերալիզմի գաղափարներին: Այն էլ հենց դրվեց գլոբալ զարգացման ժամանակակից հարացույցի գաղափարական հիմքում:

Այս հոսանքի անվանման անորոշությունը բացատրվում է նրանով, որ լիբերալիզմի վերաբերյալ եվրոպական ու ամերիկյան ավանդույթներում գրեթե իրարամերժ ընկալում կա: ԱՄՆ-ում «լիբերալ» տերմինը գրեթե հոմանիշ է «սոցիալիստ» բառին: Այս ավանդույթի շրջանակում լիբերալիզմը աջակցությունն է պետական սոցիալական ծրագրերին, համապատասխանաբար նաև

հարկերի ավելացմանը, ազգային, կրոնական ու սոցիալական փոքրամասնություններին: Եվրոպական երկրներում «լիբերալ» բառը, հակառակը, «սոցիալիստ» բառի հականիշն է: Եվրոպացի լիբերալը կողմ է տնտեսության մեջ կառավարության միջամտության սահմանափակմանը: ԱՄՆ-ում այս տերմինի սահմանման ժամանակ շեշտը դրվում է դրա քաղաքական բաղադրիչի վրա, մինչդեռ եվրոպական երկրներում գերակշռում է դրա տնտեսական մեկնաբանությունը:

Ամեն դեպքում երկուսն էլ, ի վերջո, դասական լիբերալիզմի անգլո-սաքսոնական ավանդույթի կողմնակիցներն ու շարունակողներն են, բացարձակացնում են շուկայական հարաբերությունները՝ տարածելով դրանք հասարակական կենսագործունեության բոլոր ոլորտների վրա, ինչպես նաև անհատների ազատությունը՝ ի վնաս կոլեկտիվ շահերի: Ըստ լիբերտարիզմի հանրահայտ տեսաբան Դ. Բոուզի՝ այս գաղափարաքաղաքական հոսանքը կարելի է դիտարկել որպես քաղաքական փիլիսոփայություն, որը հետևողականորեն կիրառում է դասական լիբերալիզմի գաղափարները՝ հանգելով այնպիսի եզրակացությունների, որոնք ավելի խիստ են սահմանափակում պետության դերակատարությունը և ավելի մեծ չափով են պաշտպանում անհատի ազատությունները, քան ցանկացած այլ դասական լիբերալներ[36]:

Նման գաղափարների շատ կողմնակիցներ իրենց չեն անվանում լիբերտարիստներ կամ նեոլիբերալներ՝ պնդելով իրենց գաղափարախոսության ավանդական անվանումը (լիբերալիզմ) կամ էլ բնորոշելով իրենց որպես «դասական լիբերալներ»: Մյուսները սխալ են համարում հին տերմիններին նման հավատարմությունը, որը, ըստ նրանց, խառնաշփոթ է մտցնում աշխարհի քաղաքական պատկերում, ինչը խոչընդոտում է լիբերտարիստական (նեոլիբերալ) գաղափարների տարածումն ու ըմբռնումը: Ըստ Վ. Մալա-

[36] Տե՛ս **Боуз Д.,** Либертарианство: История, принципы, политика, Челябинск: Социум, Cato Institute, 2009, էջ 28-29:

խովի, ի տարբերություն լիբերալիզմի, «նեոլիբերալիզմ» տերմինը գործածվում է ոչ թե փիլիսոփայական և աշխարհայացքային, այլ քաղաքական ու գաղափարական իմաստով[37]:

Լիբերտարիզմի տեսանկյունից շուկայի գոյությունն ու գործունեությունը համապարփակ արժեք են և կազմում են էթիկայի հիմքը: Հետևաբար լիբերտարիզմի պայմաններում շուկայական տնտեսության ու շուկայական հասարակության միջև տարբերություն չկա, իսկ նրա էթիկական հայեցակարգը վերադառնում է մերկանտիլիզմին: Ըստ լիբերտարների՝ շուկայական փոխանակումը բարոյական նորմերի համակարգի հիմքն է, որը բավարար է մարդկային ողջ գործունեությունը կարգավորելու համար և իրենով է փոխարինել նախորդ բոլոր բարոյական նորմերը[38]: Այստեղ նկատվում է սոցիալական իրականության որոշակի պարզունակացում: Սոցիալական բարդ իրականության պայմաններում չի կարելի հարցն այսպես դնել՝ կա՛մ շուկայական տնտեսություն, որն ինքնաբերաբար հանգեցնում է ժողովրդավարացման, կա՛մ տնտեսական պլանավորում, որն ինքնաբերաբար տանում է դեպի բռնապետություն:

Ընդհանուր առմամբ լիբերալ գաղափարախոսության ներսում գոյություն ունեցող հակասությունները պայմանավորված են ժողովրդավարության երկու տարբեր ավանդույթներով. մի կողմից՝ անգլո-սաքսոնականով, որի շրջանակում, ըստ Ջ. Լոկի ձևակերպման, ժողովրդավարությունը առաջին հերթին դիտարկվում է որպես անհատի իրավունքների իրականացում ու երաշխավորում: Ըստ այս հայեցակարգի՝ ժողովրդավարական կարող է համարվել այն պետությունը, որում ոչ միայն երաշխավորված են անհատի հիմնական իրավունքները, այլև առավելագույնս ընդլայնված է նրա ազատությունների սահմանը: Յուրաքանչյուր ոք այս ազատություններից օգտվելու իրավունք ունի: Իսկ եթե նա

---

[37] Տե՛ս **Малахов В.,** Государство в условиях глобализации, М.: КДУ, 2007, էջ 10:
[38] Տե՛ս **Харви Д.,** Краткая история неолиберализма, М.: «Поколение», 2007, էջ 4:

հիմնարար իրավունքներ ու ազատություններ չունի, ապա կարող է պայքարել դրանք ձեռք բերելու համար:

Ժողովրդավարության մայրցամաքային-ֆրանսիական ավանդույթի համաձայն, որը գալիս է Ժ.-Ժ. Ռուսոյից, ժողովրդավարությունն առաջին հերթին ոչ թե անհատի իրավունքների և ազատությունների իրականացումն ու ընդլայնում է, այլ ազգի ինքնահաստատումը: Ժողովրդավարության սուբյեկտն անհատը չէ, այլ առաջին հերթին՝ ազգը, այսինքն՝ կոլեկտիվը: Ժողովրդավարության պայմաններում ժողովուրդն իր ճակատագիրն ինքնուրույն որոշելու և ըստ իր պատկերացումների ժողովրդավարական ճանապարհով իր կյանքը կառուցելու իրավունք ունի: Ժողովրդավարության նման ըմբռնումը, ի տարբերություն լիբերալ-անհատապաշտության, կարելի է անվանել լիբերալ-կոլեկտիվիստական: Գործնականում բոլոր ժողովրդավարական երկրները հիմնականում օգտագործում են կա՛մ ժողովրդավարության ազգային մոդելը, կա՛մ ինչ-որ միջին ձև՝ անհատապաշտական ու կոլեկտիվիստական մոդելների համադրությամբ:

Հետխորհրդային հասարակությունները, ինչպես անցումային շատ այլ երկրներ, օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով շարժվել են ժողովրդավարական հասարակության ազգային և լիբերալ-կոլեկտիվիստական մոդելով[39]: Հենց սրանով է առանձնացել անցումային երկրներում ժողովրդավարական բարեփոխումների առաջին փուլը: Կոլեկտիվ ժողովրդաիշխանության գաղափարները հիմնականում նման են տասնամյակներ շարունակ արմատացած համայնքային կյանքի սոցիալիստական սկզբունքներին, որոնք տեսականորեն շատ գրավիչ, բայց գործնականում իրականությունից հեռու էին: Ի վերջո, ժամանակին ինքը՝ մարքսիզմը, հանդես էր գալիս որպես լիբերալ դեմոկրատիայի ամենա-

[39] Տե՛ս **Sargsyan, A.** (2022). Political Science Perceptions of Post-Soviet Civic Participation: Reconciliation Steps or an Attempt at Imitation? Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 69-77. https://doi.org/10.46991/-JOPS/2022.1.1.069:

համապատասխան տարբերակը: Հետևաբար նախկին սոցիալիստական կողմնորոշման[40] բազմաթիվ անցումային հասարակություններում քաղաքացիների կողմից լիբերալ արժեքների ընկալման համար տեսական մակարդակում բավարար հող էր նախապատրաստված:

Միաբևեռ աշխարհի ձևավորմամբ, ինչպես նաև երկրների ու ժողովուրդների վրա ազդեցության համապատասխան լծակներով օժտված ֆինանսատնտեսական նոր աշխարհակարգի հաստատմամբ ժամանակակից աշխարհը բախվեց լիբերալ-ժողովրդավարության ինդիվիդուալիստական անգլո-սաքսոնական՝ որպես ժողովրդավարության սահմանման միակ արդար, սեփական չափանիշներն առաջ քաշող մեկնաբանությանը: Իրական կյանքում, չնայած օբյեկտիվ ու սուբյեկտիվ համապատասխան նախադրյալների բացակայությանը, սկսած 1990-ական թվականներից, շատ երկրների պարտադրվեց լիբերալիզմի հենց այս մոդելը, որն ուղղված էր հասարակական կյանքի տարբեր ոլորտների «արևմտականացմանը», այսինքն՝ ժողովրդավարության արևմտյան, առաջին հերթին՝ անգլո-սաքսոնական չափանիշների ուղղակի կրկնօրինակմանը: Անցումային հասարակություններում ժողովրդավարական բարեփոխումների ժամանակակից խնդիրները բացատրվում են դրա սկզբունքների տարբեր ընկալումներով, ինչը առաջին հերթին պայմանավորված էր նշված հասարակություններում տիրող մտածելակերպով:

Պետք է նշել, որ գլոբալ զարգացման նեոլիբերալ-լիբերտարիստական հարացույցը գործնականում շատ երկրների հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում հանգեցրեց դրական որոշակի արդյունքների, ինչն առաջին հերթին կապված էր հասարակությունների ժողովրդավարացման միտումների, ինչպես նաև

[40] Ավելի մանրամասն տե՛ս **Manukyan, A.** (2022). An Alternative to the Dissident Paradigm and Intersecting Civil Protests in Soviet Armenia: Equal but Different? Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(3), 73-89, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.3.073:

վերջիններիս միջև արհեստական խոչընդոտների վերացման, քաղաքացիների ազատ տեղաշարժի, միասնական տեղեկատվական ու կրթական տարածության ձևավորման, ապրանքաղրամական և շուկայական հարաբերությունների արմատավորման և այլ հանգամանքների հետ[41]:

Լիբերալ ժողովրդավարության այնպիսի անվիճելի սկզբունքներ, ինչպիսիք են անհատի ազատությունը, մարդու իրավունքների անձեռնմխելիությունը, օրենքի գերակայությունը, խորհրդարանական ժողովրդավարությունը, բազմակարծությունը, քաղաքացիական հասարակությունը, մրցակցության սկզբունքի վրա հիմնված տնտեսությունը դարձել են համամարդկային քաղաքական մշակույթի անբաժանելի մասը: Հետևաբար ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների կայացման ժամանակակից դժվարությունները բացատրվում են նրանով, որ դրանց արդյունավետությունը կախված է միայն քաղաքական իրողություններին աստիճանական հարմարվողականությունից: «Ժողովրդավարության հասնելու համար,– պնդում է ամերիկացի քաղաքագետ Դ. Ռաստոուն,– պահանջվում է ոչ թե սահմանադրական օրենքների կամ էլ արդեն իսկ գոյություն ունեցող որոշ ժողովրդավարությունների խորհրդարանական պրակտիկայի կրկնօրինակում, այլ սեփական առանձնահատուկ կոնֆլիկտներին ազնվորեն նայելու և դրանց լուծմանն ուղղված արդյունավետ մեխանիզմներ մշակելու կարողություն»[42]:

Ներկայումս տեղի է ունեցել նեոլիբերալ սկզբունքների մեկնաբանման որոշակի արմատականացում, ինչը մասնավորապես վերաբերում է սոցիալական ու ազգային փոքրամասնությունների

---

[41] Տե՛ս **Chuguryan, S., Baculakova, K., Kucharcik, R.** (2023). The welfare state crisis and the strengthening of the far-right in Sweden as a result of increasing migration. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 117-136, https://doi.org/10.46991/JOPS/2023.2.4.117:

[42] **Растоу Д.,** Переходы к демократии: попытки динамической модели, Полис, 1996, էջ 9:

իրավունքների պաշտպանությանը: Սրանում է անցումային հասարակությունների ժողովրդավարացման երկրորդ փուլի էությունը, և սրանով է որոշվում այս կամ այն երկրում ժողովրդավարական համախմբման մակարդակը: Այնուամենայնիվ, հենց այս հարցերում էլ շատ ժողովուրդներ տարբերվում են ժողովրդավարացման վերաբերյալ իրենց պատկերացումներով: Բազմաթիվ ազգեր ու ազգություններ, նեոլիբերալ հարացույցի սկզբունքներին համապատասխան, մարդկային համակեցության ու լիբերալ ժողովրդավարության նորմերը չեն համարում որպես «այլընտրանք չունեցող» և «միակ ճշմարիտ»: Աշխարհի բնակչության մեծ մասը (մոտ 65 %) չի ընդունում կրոնական ու ազգային շահերից ու ավանդույթներից գործնական հրաժարումը: Աշխարհի երկրների, մասնավորապես տնտեսական զարգացման բարձր մակարդակ ունեցող հասարակությունների մեծ մասում չեն ընդունվում արևմտյան պետությունների՝ գենդերային քաղաքականության արմատականսկզբունքները: Ի վերջո գաղտնիք չէ, որ մի շարք դեպքերում անհատի բացարձակացումը, նրա վերածումը ֆիզիոլոգիական էակի ու նրա «քմահաճույքների» ակտիվ պաշտպանությունը, ինչպես նաև մեծամասնության հանդեպ փոքրամասնության գերակայության ապահովումն են հասարակությունում ծնում են համամարդկային արժեքների նկատմամբ թշնամական ընկալում[43]: Սա տեղի է ունենում այն դեպքում, երբ նույնիսկ զարգացած երկրներում գործնական քաղաքական քայլերը ձեռնարկվում են առանց հաշվի առնելու հասարակության հոգեբանությունը, ինչպես նաև առհասարակ հասարակական գիտակցությունը:

Շատ հասարակություններում չի ողջունվում արևմտյան երկրների մեծ մասում տարածում գտած պետական կառույցների

[43] Տե՛ս **Ghazaryan, K.** (2023). Influence of the relationship between the protector state and regional hegemon on the resilience of a non-recognised state: Lessons learned from the Nagorno-Karabakh war and non-peace. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 27-69, https://doi.org/10.46991/-JOPS/2023.2.4.027:

միջամտությունը քաղաքացիների անձնական ու ընտանեկան կյանքին, ինչպես նաև երեխաների և ծնողների միջև հարաբերություններին: Չի ընկալվում այն մարդկանց իրավունքների և ազատությունների սահմանափակումը, որոնք հատուկ վերաբերմունք ունեն սոցիալական գործընթացներին, որոնք երբեմն հակասում են ժամանակակից լիբերալ մեկնաբանությանը: Անհատի շահերի, նորմերի և արժեքների թելադրմամբ առաջնահերթությունը կոլեկտիվ շահերի նկատմամբ արդարացի չէ: Շատ ժողովուրդների ընկալումներում հսկայական տարբերություն կա շուկայական արդար հարաբերությունների և ռացիոնալ ու մերկանտիլիստական ամենաթողությամբ աչքի ընկնող շուկայի միջև: Շատ երկրների ժողովուրդներ հավատարիմ են այնպիսի արժեքային համակարգի, որը երաշխավորում է բարոյական սկզբունքի գերակայությունը նյութականի նկատմամբ: Թվարկված հանգամանքները զգալիորեն սահմանափակում են համաշխարհային նեոլիբերալ միտման տարածումը:

Բազմաշերտ հասարակական կյանքն ունակ է գտնելու տարբեր, այս կամ այն հասարակության բարգավաճումն ապահովող ոչ պակաս արդյունավետ ուղիներ: Հասարակական կյանքի կազմակերպման նման ձևերը կարող են կիրառել գաղափարական և քաղաքական ամենատարբեր հոսանքներին բնորոշ տարրեր ու սկզբունքներ[44]: Հարցն այս դեպքում կարող է վերաբերել միայն նրան, թե ինչպես է այս կամ այն գաղափարական համակարգը ադեկվատ արտացոլում իրականությունը և որքանով է առավելագույնս հաշվի առնում հասարակության մեջ ձևավորված սոցիալական պատկերը:

Շատ երկրներում ավելի ու ավելի ակնհայտ է դառնում սեփական առաջնահերթ բարոյական ու հոգևոր արժեքների հա-

[44] Տե՛ս **Baberowski, J.** (2022). Between Fear and Fascination: The Soviet Union in the Modern Age // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 119-139, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.119:

կադրությունը գերիշխող նեոլիբերալ-լիբերտարիստական վարքագծի նորմերին: Եվրասիական տարածքում ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացների համապատկերում ի հայտ են եկել քաղաքակրթական երկու կենտրոններ, որոնք քննադատում են նեոլիբերալ «նիհիլիզմը» և աչքի են ընկնում իրենց հատուկ արժեքային կողմնորոշումներով: Դրանցից առաջինը հիմնված է Հարավարևելյան Ասիայի երկրների ժողովուրդների մշակույթի, իսկ երկրորդը՝ բարոյական այնպիսի նորմերի վրա, որոնք համընդհանուր են ուղղափառության, շիականության ու սուֆիզմի համար: Երկրորդ կենտրոնը հիմնված է ոչ միայն Արևելյան Եվրոպայի, Մերձավոր և Միջին Արևելքի, այլև Հյուսիսային Աֆրիկայի ժողովուրդների մշակույթի վրա: Ընդհանուր առմամբ, ձևավորված մշակութային-քաղաքակրթական կենտրոնները միտված են խթանելու աշխարհում իրավահավասարությունը, փոխադարձ հարգանքն ու արդարությունը, պայմաններ ստեղծելու ժողովուրդների ավանդույթների և ինքնության պահպանման, քաղաքակրթությունների միջև երկխոսության ծավալման համար՝ ուղղված վերջիներիս փոխադարձ հարստացմանը, այլ ոչ թե արժեքային կողմնորոշումներ պարտադրելուն:

Ժամանակակից գլոբալ հարացույցի բազմաթիվ արժեքային կողմնորոշումների մերժումը դրսևորվում է ոչ միայն Արևմուտքից հեռու Ասիայի, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի, այլ նաև քաղաքակրթորեն լիբերալ գաղափարի բնօրրանին մոտ գտնվող շատ երկրներում: Լուրջ հակասություններ կան նաև զարգացած ժողովրդավարությունների հասարակություններում, որոնք ժամանակի ընթացքում ավելի են խորանում: Եվ հարցը միայն լիբերալ ժողովրդավարության երկու տարբերակների միջև բախումը չէ: Ինչպես պահպանողական ու սոցիալիստական, այնպես էլ ազգային տարբեր արժեհամակարգերի կողմնակիցներ ներքաշված են նման վեճերի մեջ, որոնք, ի դեպ, աստիճանաբար ավելի կատաղի են դառնում: Բազմաթիվ երկրներում լիբերալ-լիբերտարիզ-

մի այլընտրանքային քաղաքական շարժումների ակտիվացումը շատ քաղաքացիների ու քաղաքական գործիչների թույլ է տալիս բացահայտորեն և անվախ մերժել այն: Դրանց թվին կարելի է դասել Ռուսաստանի, Չինաստանի, Սերբիայի, արևելյան գրեթե բոլոր երկրների, լատինամերիկյան ու հետխորհրդային շատ պետությունների, ինչպես նաև Արևմուտքի դաշնակից այնպիսի երկրների, ինչպիսիք են Հունգարիայի, Լեհաստանի, Թուրքիայի և այլն իշխող քաղաքական ուժերը:

Քաղաքական փոփոխություններին առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել լիբերալ-լիբերտարիստական գաղափարախոսության ֆորպոստ ԱՄՆ-ում, որտեղ 2016 թվականի նախագահական ընտրություններում Դ. Թրամփի հաղթանակից հետո, ըստ երևույթին, սկսվեց հասարակության գաղափարական բևեռացման շրջան: Այս գործընթացն զգալիորեն արագացավ 2020 թվականից ի վեր՝ դեմոկրատական կուսակցությունից նախագահի իշխանության գալով: Երկրում աստիճանաբար խորացավ անջրպետը հասարակության երկու հատվածների միջև, որոնք արմատապես տարբերվում էին լիբերալ-դեմոկրատական արժեքային կողմնորոշումների ընկալումներով:

Այլ պետություններում լուրջ կշիռ են ստացել քաղաքական այն ուժերը, որոնք հանդես են եկել ազգային դիրքերից՝ նշելով նեոլիբերալ բազմաթիվ դրույթների թերարժեքությունը ազգային անվտանգության ապահովման ու բնիկ եվրոպական ժողովուրդների շահերի պաշտպանության տեսանկյունից: Սրա մասին են վկայում, համենայնդեպս, Եվրախորհրդարանի վերջին ընտրությունների արդյունքները: Շատ եվրոպացիների անհանգստացնում է, առաջին հերթին, «գերժողովրդավար» երկրների անկարողությունը դիմակայելու մարգինալ շերտերի մարտահրավերին, որոնք զգալիորեն ակտիվացել են զանգվածային միգրացիոն գործընթացների ծավալման պայմաններում: Այս երկրներում կառավարության գենդերային նախաձեռնությունների նկատմամբ լուռ

բոյկոտ է նկատվում: Ավելանում է ԵՄ շատ քաղաքացիների դժգոհությունը սոցիալական արդարության ապահովման ներկա մակարդակից, որը տուժում է խոշոր կապիտալի սանձազերծ վարքագծից: Այսպես թե այնպես թվարկված քաղաքական ուժերը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կասկածի տակ են դնում գլոբալ զարգացման ներկայիս հարացույցը և հավատարիմ են մնում նեոլիբերալ արժեհամակարգից տարբերվող բարոյական ուղենիշներին:

Աշխարհում սկսել է ավելի մեծանալ ինչպես գլոբալ հարացույցի սոցիալ-տնտեսական, այնպես էլ լիբերալ-լիբերտարիստական արժեքային կողմերի վերաբերյալ քննադատական գնահատականների կողմնակիցների թիվը: ՌԴ նախագահ Վ. Պուտինը խոշոր պետությունների ղեկավարներից առաջինն է խոսել այս մասին՝ պատասխանելով «The Financial Times»-ի անգլերեն հրատարակության թղթակիցների հարցերին: Նա քննադատել է ժամանակակից լիբերալիզմը՝ առաջին հերթին որպես արժեքային համակարգ[45]:

Ֆրանսիայում կայացած G-7 գագաթնաժողովի շրջանակում նախագահ Է. Մակրոնը միանշանակ հայտարարեց, որ կապիտալիզմի ժամանակակից մոդելը «ժանգոտել է ժողովրդավարական համակարգի դեգրադացիայի հետևանքով»[46]: 2022 թվականին՝ Դալլասում կայացած Ամերիկյան պահպանողական միության կոնֆերանսի ժամանակ, ժողովրդավարական ժամանակակից երկրների ներկա ու նախկին շատ առաջնորդներ բացահայտորեն մերժեցին աշխարհին պարտադրված գենդերային քաղաքականության սկզբունքները, որոնք ներկայումս գրեթե հիմնա-

---

[45] Տե՛ս **Путин В.,** Интервью газете «The Financial Times» // Официальный сайт Кремля, http://www.kremlin.ru/events/president/news/60836, հասանելի՝ 15.04.2023:

[46] Տե՛ս Макрон заявил, что «капитализм деградировал и сошел с ума» // «ТАСС», https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/6793858, հասանելի՝ 15.04.2023:

կան չափանիշն են՝ որևէ երկրում ժողովրդավարության զարգացման աստիճանը որոշելու համար[47]:

Արդի փուլում Չինաստանն ու Ռուսաստանը ողջ աշխարհում ձգտում են ստանձնել հակալիբերտարիստական միասնական ճակատի դերակատարությունը: Մասնավորապես, Պեկինում Օլիմպիական խաղերի նախօրեին ընդունված համատեղ հայտարարության առաջին մասում կողմերը ուրվագծել են ժողովրդավարության իրենց պատկերացումները, որոնք սկզբունքորեն տարբերվում էին արևմտյան երկրների մոտեցումներից: Այսպիսով, երկու պետություններն էլ, փաստորեն, հայտարարեցին աշխարհում սեփական արժեհամակարգով նոր գաղափարական բևեռի ձևավորման մասին, որը կարող էր բավականին գրավիչ դառնալ շատ ժողովուրդների համար, հատկապես որ նշված երկրներում սրա համար գաղափարական օբյեկտիվ նախադրյալներ կային: Չպետք է մոռանալ, որ Չինաստանում տիրապետող կոմունիստական գաղափարախոսությանը զուգահեռ հասարակական կյանքում գերիշխում է նաև ավանդական կողմնորոշում ու պահպանողական բովանդակություն ունեցող կոնֆուցիական արժեհամակարգը: Ռուսաստանը ևս քաղաքական բարձր մակարդակում երկիրը պահպանողական շարժման՝ «խելամիտ պահպանողականության» կենտրոններից մեկը վերածելու հայտ ներկայացրեց՝ իր նկրտումներին համապատասխանեցնելով Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության փոփոխությունները[48]:

Վերը նշված ռուս-չինական համատեղ հայտարարությունը կարելի է համեմատել համաշխարհային քաղաքականության մեջ նոր բևեռի ձևավորման մասին պաշտոնական մանիֆեստի հետ:

---

[47] Տե՛ս Орбан отжег на съезде консерваторов США: Меньше трансвеститов, больше ЧакаНорриса // «EurAsiaDaily», https://eadaily.com/ru/news/2022/08/05/-orban-otzheg-na-sezde-konservatorov-ssha-menshe-transvestitov-bolshe-chaka-norrisa, հասանելի՝ 15.04.2023:

[48] Տե՛ս Путин поддержал умеренный консерватизм, сравнив его с врачебным принципом «не навреди», «ТАСС», https://tass.ru/politika/12728229, հասանելի՝ 15.04.2023:

Երկու պետություններն էլ ընդհանուր տեսլական են մշակել համաշխարհային խնդիրների և, որ ամենակարևորն է, աշխարհում արժեքային կողմնորոշումների ու գաղափարաքաղաքական գործընթացների վերաբերյալ: Բացի դրանից՝ պետք է հաշվի առնել, որ այս երկու երկրների մասնաբաժինը համաշխարհային տնտեսության մեջ արդեն միանգամայն համեմատելի է ամերիկյանի հետ (մոտավորապես 20 %), իսկ տնտեսական ու պաշտպանական մի շարք ոլորտներում այն գերազանցում է ԱՄՆ ներուժը: Պետք է հաշվի առնել նաև այս պետությունների հսկայական ներդրումներն աշխարհի առանցքային կետերում, ինչպես նաև տնտեսական ու ռազմաքաղաքական դաշնակիցների առկայությունը:

Ժամանակակից պահպանողականությունն իրականության նկատմամբ պրագմատիկ վերաբերմունք ունի: Իր զարգացման ընթացքում պատշաճ ուշադրություն հատկացնելով ժողովրդավարության հաստատման անհրաժեշտության ու անխուսափելիության հարցին՝ այն շատ բան է որդեգրել իր ազատական հակառակորդներից: Սակայն ելնելով «մասնավորի» նկատմամբ «ընդհանուրի» գերակայության իրենց սկզբունքային մոտեցումներից՝ պահպանողականները ընդունել են լիբերալ ժողովրդավարության մայրցամաքային-կոլեկտիվիստական մեկնաբանությունը: Ներկայումս ժամանակակից խնդիրների վերաբերյալ նման տեսլականը մեծապես համապատասխանում է անցումային բազմաթիվ հասարակությունների տրամադրություններին:

Իրականության հանդեպ նման պրագմատիկ վերաբերմունքին էլ հենց ուղղված է արդի կոնսերվատիզմը: Զարգացման ընթացքում պատշաճ ուշադրություն հատկացնելով դեմոկրատիայի հաստատման անհրաժեշտության ու անշրջելիության հարցին՝ այն շատ բան է փոխառել իր լիբերալ ընդդիմախոսներից: Այսօրվա դրությամբ արդի հիմնախնդիրների նման տեսլականը զգալիորեն համապատասխանում է հետխորհրդային շատ հասարակությունների տրամադրություններին:

Լիբերալիզմի դեմ ավելի քան երկու հարյուր տարի մղած քաղաքական պայքարի ընթացքում կոնսերվատիզմը ենթարկվել է տարբեր ձևափոխությունների: Օրինակ՝ «ուժեղ պետության»՝ որպես ավանդական հասարակության պահապանի գաղափարը կոնսերվատորները հիմնականում բարոյական նորմերի ու ավանդույթների միջոցով փոխարինել են հասարակական կյանքի կարգավորման գաղափարով: Ներկայումս կոնսերվատիզմը շուկայական հարաբերությունների ամրապնդման, քաղաքացիական հասարակության ինստիտուտների օգնությամբ պետական մարմինների վերահսկողություն իրականացնելու, տնտեսությունում հիրավի մրցակցային պայմանների ապահովմամբ հասարակության շարքային անդամների նախաձեռնությունների և ազատ ձեռներեցային գործունեության դրսևորման կողմնակիցն է:

Ի տարբերություն իրենց նախորդների՝ արդի կոնսերվատորները դեմ են պետական իշխանության ամրապնդմանը, որը սահմանափակում է անհատի ազատությունը, ստեղծում կոռումպացված բյուրոկրատիա, ավելորդ վերահսկողությամբ զսպում է գործարար նախաձեռնությունը, ի վիճակի չէ բարելավելու կյանքի որակը: Ընդհանուր առմամբ կոնսերվատիվ կուսակցությունները ստատուս քվոն պաշտպանող կուսակցություններից վերածվել են ազատ հասարակության ամրապնդմանն ուղղված արմատական ռեֆորմներ նախաձեռնողների ու իրականացնողների, այդ թվում՝ նաև զարգացած արդյունաբերական երկրներում: Արդի կոնսերվատիզմը հակադրելով 1980-ական թվականների լիբերալ-ռեֆորմիստական գաղափարաքաղաքական հոսանքին՝ անգլիացի պատմաբան ու լրագրող Փ. Քոլին նշում է, որ դասական լիբերալիզմի իսկական գաղափարակիրները դարձան հենց պահպանողական կուսակցությունները, որոնք կրկին բարձրացրին սոցիալ-լիբերալների «երկչոտաբար» դեն նետած «ազատության դրոշը»[49]:

---

[49] Տե՛ս **Colly P.,** Studies in the History of ideas, L., 1983, էջ 41:

Պահպանողական գաղափարախոսության թվարկված դրույթները, ըստ էության, հանդես են գալիս որպես հասարակությունների ժողովրդավարացման ժամանակակից գործընթացների լիբերալ-լիբերտարիստական ընկալման այլընտրանք: Ուստի պահպանողական արժեհամակարգը միանգամայն ունակ է մրցակցելու նեոլիբերալների հետ գլոբալ զարգացման հիմնական վեկտորի ձևավորման հարցում:

Գլոբալ զարգացման վեկտորի գաղափարական ու արժեքային բազայի փոփոխության գործում կարող է վճռորոշ դեր խաղալ նաև սոցիալիստական գաղափարախոսությունը: Չպետք է մոռանալ, որ աշխարհում երկրորդ տնտեսությունը ունեցող երկրի հասարակությունը լիովին կողմնորոշված է դեպի սոցիալիստական ու կոմունիստական գաղափարները: Ռուսաստանում՝ աշխարհի երկրորդ ռազմաքաղաքական կենտրոնում, համատեղ կյանքի կազմակերպման սոցիալիստական սկզբունքները դեռ ամուր հիմքերի վրա են: Լատինական Ամերիկայի, Մերձավոր Արևելքի, Հարավարևելյան Ասիայի ու Աֆրիկայի շատ երկրներ ևս իրենց ժողովուրդների ինքնագիտակցության գաղափարական բաղադրիչի ու կոլեկտիվիստական վարքագծի նորմերին հավատարմության առումով մոտ են այդ գաղափարական սկզբունքներին և չեն ընդունում լիբերալ հարացույցը: Շատ առումներով նրանք տարբերվում են արդարության, բարոյականության, ավանդույթի և հավատքի իրենց յուրահատուկ ըմբռնումներով: Հատկանշական է, որ ուկրաինական ճգնաժամի սրացումից հետո նրանցից շատերը Ռուսաստանի հետ հարաբերությունները պահպանում են «բարիդրացիական չեզոքության» մակարդակում՝ այդպիսով իրենց դիրքավորելով որպես ապագա ոչ լիբերալ համաշխարհային բևեռի կողմնակիցներ:

Այսպիսով, ներկա սերունդն ականատեսն է վերջին 2-3 տասնամյակների ընթացքում տիրապետած արդի գլոբալ զարգացման հարացույցի գաղափարական ու արժեքային հիմքերի վերափոխ-

մանը: Պատմական այս փուլում դրանք արմատական բնույթ են ստացել, ինչը պատճառ է դարձել, որ բազմաթիվ ժողովուրդներ լուրջ մտահոգություններ ունենան իրենց երկրներում դրա հետագա արմատավորման վերաբերյալ: Ուկրաինական ճգնաժամի հետ կապված միջազգային իրավիճակի սրումը զգալիորեն արագացնում է համաշխարհային հանրության հսկայական զանգվածի գաղափարական ու արժեքային վերակողմնորոշման գործընթացը լիբերալ միտմանը հակառակ: Այնուամենայնիվ, բազմաթիվ ժողովուրդներ պահպանել են միանշանակ դրական վերաբերմունքը համամարդկային շատ արժեքների նկատմամբ, որոնք աշխարհում տարածվել են հենց ազատականության շնորհիվ: Դրանք փոխառվել են ժամանակակից բազմաթիվ գաղափարաքաղաքական հոսանքների կողմից, որոնք պատրաստ են հիմք դառնալ գլոբալ զարգացման հարացույցի հետագա վերափոխման համար:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ
ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՈՐՊԵՍ ԳԼՈԲԱԼ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԱՐԱՑՈՒՅՑԻՆ ԵՎ ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻՆ ԱՆՑՈՒՄՆ ԱՐԱԳԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՆ

2014 թվականի սկզբից ի վեր ուկրաինական ճգնաժամը զգալիորեն սրել է արևմտյան երկրների ու Ռուսաստանի միջև XX դարավերջից հաստատված փոխադարձ անվստահությունը: Ավելին, ըստ էության, նրանց միջև սկսվել է «ոչ կոնտակտային» դիմակայության նոր փուլ, որը բազմաթիվ քաղաքական գործիչներ ու փորձագետներ անվանում են «հիբրիդային պատերազմի» ժամանակաշրջան: Հայտնի է, որ դա ուղեկցվում է ոչ միայն կոմպլեքսային քաղաքական, տնտեսական և տեղեկատվական միջոցների կիրառմամբ, այլև հակառակորդի տարածքում գործող «հինգերորդ շարասյուների» բացահայտ աջակցությամբ կամ շոշափելի կիբեռգրոհներով ուղեկցվող, քողարկված գործողությունների ու դիվերսիաների համակցմամբ: Քաղաքական նպատակներն այս դեպքում ձեռք են բերվում թշնամու ռազմական ու տնտեսական ներուժը խաթարելու, ինչպես նաև նրա վրա տեղեկատվական և հոգեբանական ճնշում գործադրելու համար:

Հիբրիդային պատերազմների ոլորտը ազդել է ոչ միայն Ռուսաստանի, այլև մի շարք խոշոր երկրների վրա, որոնք չեն տեղավորվում Արևմուտքի կողմից սահմանված «ժողովրդավարական հարթակի» չափորոշիչներում: Տպավորություն է ստեղծվում, որ «քաղաքակիրթ աշխարհը» մտածում է միայն մեկ հանգամանքի մասին, այն է՝ ինչպես ավտորիտար երկրներում հաստատել ժողովրդավարական կարգեր և այդ երկրների ժողովուրդներին պարգևել «իսկական ազատություն»: Այնուամենայնիվ, ժողովրդավարական սկզբունքների ջատագովների քաղաքականության մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ գեղեցիկ

գաղափարների հետևում հաճախ թաքնված են պարզ ու մերկանտիլ շահերը կամ աշխարհաքաղաքական նպատակները, որոնք ուղղված են թուլացնելու իրենց ուժը վերականգնող համաշխարհային կենտրոններին:

Աշխարհաքաղաքական շահերի բախման գոտին ընդգրկում է հետխորհրդային գրեթե բոլոր երկրները, որոնք 30 տարի, այսպես թե այնպես, կանգնած էին երկընտրանքի առաջ, այն է՝ զարգացման որ արտաքին քաղաքական վեկտորն ընտրել: Ի վերջո, նրանք իրենց ընտրությամբ կարող էին տրամաբանական ավարտին հասցնել միաբևեռ աշխարհի վերջնական կայացման գործընթացը՝ դրանով իսկ սահմանափակելով վիթխարի ռեսուրսներ ունեցող Ռուսաստանի դերակատարությունը հետխորհրդային տարածաշրջանում և, որպես հետևանք, վերածել այդ երկիրը աշխարհում երրորդ կարգի խաղացողի մակարդակի:

Պետք է նաև հաշվի առնել, որ հետխորհրդային տարածքում ուկրաինական ճգնաժամին զուգահեռ մրցակցություն էր ընթանում ինտեգրացիոն երկու նախագծերի՝ եվրոպականի՝ ի դեմս Արևելյան գործընկերության ծրագրի (իրականացումը սկսվել է 2009 թ.), ու Եվրասիականի միջև, որը խթանում է Ռուսաստանը՝ Բելառուսի ու Ղազախստանի հետ միասին: Քաղաքագիտության մեջ ներկա իրավիճակը հաճախ անվանում են «ինտեգրումների երկընտրանք», քանի որ կա ոչ միայն երկու փոխադարձ բացառող ուղիներից մեկի ընտրություն (եվրոպական կամ եվրասիական վեկտորներին միանալը ինքնաբերաբար բացառում է երկրորդ ինտեգրացիոն նախագծի լիարժեք զարգացման հնարավորությունը), այլ նաև երրորդ կողմերի շահերը հաշվի առնելու անհրաժեշտությունն իրենց ինտեգրացիոն ապագան որոշելիս[50]:

---

[50] Տե՛ս **Дурдыева А. А.,** Дилемма интеграций на постсоветском пространстве в контексте украинских событий // Вестник МГИМО-Университета, 2015, №3 (42), էջ 134-140:

2013 թվականին Եվրասիական նախագծի համար Կիևի Եվրամայդանի մասնակիցների «եվրոպական ընտրությունը» անբարենպաստ նախագիծ էր թվում, մանավանդ որ Ուկրաինայի՝ ԵՄ ասոցացված անդամի կարգավիճակ ստանալը կարող էր «ուկրաինական տարբերակը» արդիական դարձնել հետխորհրդային այլ երկրների համար նույնպես: Նշենք, որ Բելառուսում 2020 թվականին՝ ցույցերի ժամանակ, ընդդիմության ներկայացուցիչները, ի թիվս այլ բաների, երկրից պահանջել են դադարեցնել մասնակցությունը հետխորհրդային բոլոր փոխգործակցության ձևաչափերին (ԵԱՏՄ, ՀԱՊԿ, Միութենական պետություն, ԱՊՀ) և վերակողմնորոշել արտաքին քաղաքականությունը ԵՄ-ի հետ մերձեցման ուղղությամբ[51]: Բացի դրանից՝ Ռուսաստանը Եվրամայդանի պահանջների կատարումն ընկալում էր որպես իր անվտանգության սպառնալիք, քանի որ «եվրոպական ընտրությունը» նշանակում էր ոչ միայն Եվրամիությանը միանալու ցանկություն, այլև ՆԱՏՕ-ին անդամակցություն: Դրա նախադրյալներն արդեն դրվել էին 2008 թվականին Բուխարեստում կայացած ՆԱՏՕ-ի գագաթնաժողովում[52]:

Ուկրաինական ճգնաժամի հետ կապված եվրասիական ինտեգրացիոն նախագծի արագ «սահմանափակման» կամ «սառեցման» վերաբերյալ բացասական կանխատեսումները չարդարացան: Ընդհակառակը, Դոնբասում հակամարտության ամենաթեժ պահին՝ 2014 թվականի մայիսի 29-ին, ստորագրվեց ԵԱՏՄ ստեղծման մասին համաձայնագիրը, որն ուժի մեջ մտավ 2015 թվականի սկզբին: Այնուամենայնիվ, չնայած հետխորհրդային տարածքում վերպետական լիազորություններով առաջին կազմակերպության ի հայտ գալուն՝ քաղաքական ու ռազմական

---

[51] Տե՛ս Реанимационный пакет реформ для Беларуси. Реформа сектора национальной безопасности // ZaBelarus.com. URL: http://zabelarus.com/ru/2020/06/25/-security-2/, հասանելի՝ 15.04.2023:

[52] Տե՛ս НАТО подтвердила решение о принятии Украины и Грузии в альянс // «ТАСС», https://ria.ru/20210614/nato-1736994965.html, հասանելի՝ 15.04.2023:

ոլորտներում ինտեգրման հետագա ընդլայնման հնարավորության վրա ազդող բոլոր կետերը բացառվեցին[53]:

Հետխորհրդային երկրներից շատերին հաջողվեց հետաձգել վերջնական ընտրության ժամանակը՝ գործարկելով, այսպես կոչված, «բազմավեկտոր» քաղաքականությունը՝ չնայած այն հանգամանքին, որ դրանք թե՛ տնտեսական, թե՛ ռազմաքաղաքական տեսանկյունից ինտեգրված էին ռուսամետ կառույցներին: Սակայն Ղազախստանի, Ղրղզստանի, Բելառուսի, Հայաստանի օրինակով կարելի է հասկանալ, որ նրանք չէին կարող լիովին հաշվարկել նման քայլերի հետևանքները: Այս հարթությունում նրանց հետագա մնալու հարցը արևմտյան հանրության համար ամբողջությամբ փակված չէր, և վերջինս լուրջ աշխատանք տարավ նրանց արտաքին քաղաքական ուղղությունը փոխելու հարցում: Այս առումով վերոհիշյալ երկրներում ներքաղաքական գործընթացները պարբերաբար փորձությունների էին ենթարկվում՝ ուղեկցվելով հակամարտող կողմերի արմատական գործողություններով:

Հետխորհրդային մյուս հանրապետությունները, ինչպիսիք են Վրաստանը, Ուկրաինան ու Մոլդովան, միանշանակ բռնել են արևմտյան աշխարհի հետ միաձուլվելու ուղղությունը: Չի կարելի ասել, որ սա խելամիտ ու հավասարակշռված որոշում էր, որը հաշվի էր առնում և՛ սեփական հնարավորությունները, և՛ ապագա արևմտյան գործընկերների՝ աշխարհաքաղաքական տեսանկյունից ինտեգրացիոն գործընթացներն արագացնելու վճռականության աստիճանը: Իհարկե, ինչ-որ իմաստով կարելի է հասկանալ այս երկրների ցանկությունը՝ արագորեն հեռանալ իրենց նախկին տերերից Ռուսաստանում: Փաստն այն է, որ ենթագիտակցական մակարդակում բավականին արժանավոր այս ժողովուրդների

[53] Տե՛ս **Глиттова Я., Косов Ю.,** Сравнительный институционально-политический анализ европейской и евразийской интеграции // Управленческое консультирование, 2016. №7 (91), էջ 34:

ներկայացուցիչները վախենում են կորցնել այն ամենը, ինչ ձեռք են բերել խորհրդային իշխանության տարիներին, այդ թվում՝ մի շարք վիճելի տարածքներ: Շատ ավելի հեշտ է, հենվելով վերջին տասնամյակների մի շարք միջազգային փաստաթղթերում ձևակերպված սահմանների միջազգային ճանաչման սկզբունքի վրա, փորձել պաշտպանվել մեկ այլ համաշխարհային ուժային կենտրոնի միջուկային «վահանով»՝ դրանով իսկ բացառելով ռուսական պետության հնարավոր տարածքային պահանջները:

Այս երկրներն այսպես թե այնպես դարձել են աշխարհաքաղաքական լայնածավալ խաղի յուրօրինակ օբյեկտ: Մոլդովայի Հանրապետությունն ու Վրաստանը, չնայած ներկայացված մի շարք հնարավորություններին, չկարողացան հիմնովին լուծել արևմտյան աշխարհի հետ ինտեգրման հարցը: Դրան հիմնականում խանգարում էր ինչպես աշխարհագրական դիրքը, այնպես էլ տնտեսական ու ներքաղաքական լուրջ խնդիրների առկայությունը: Չի կարելի ժխտել նաև արևմտյան հանրության կողմից այդ երկրներին ԵՄ ու ՆԱՏՕ արագ ընդունելու անպատրաստակամությունը: Այնուամենայնիվ, համաշխարհային կենտրոնների ցանկությունը՝ ներգրավել այդ երկրներին արևմտյան պետությունների կոալիցիայի մեջ, դեռևս պահպանվում էր: Նշված երեք երկրներից արմատապես լուծել այս հարցը կարող էր միայն նա, ով ուներ անհրաժեշտ ներուժ՝ անհրաժեշտության դեպքում դիմելու նաև ռազմաքաղաքական քայլերի: Առաջին պլան մղվեց Ուկրաինան՝ որպես աշխարհագրական, տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական, բարոյահոգեբանական ու գաղափարական տեսանկյունից ամենահարմար երկիրը, որը 30 տարիների ընթացքում լիովին պատրաստվել էր ուժային մեթոդներով լուծելու իր պետության վերակողմնորոշման հարցը:

Համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների միջև պայքարը Ուկրաինայի համար սրվեց միայն այդ երկրի անկախացումից հետո: Ուկրաինան շատ նախանձելի դիրք ուներ

հետխորհրդային շատ այլ պետությունների համեմատությամբ: Ունենալով տնտեսական, տարածքային ու մարդկային հսկայական ներուժ՝ այն կարող էր միայն օգուտ քաղել իր վիճակից որպես աշխարհի աշխարհաքաղաքական կենտրոնների մրցակցության օբյեկտ: Այնուամենայնիվ, նա չկարողացավ արդյունավետորեն օգտագործել այդ առավելությունները: Ըստ երևույթին, երկրի չափից ավելի ֆինանսական ու տնտեսական կախվածությունը արևմտյան երկրներից, առաջին հերթին՝ ԱՄՆ-ից, ինչպես նաև անկախության տարիներին արմատավորված հասարակական կյանքի գաղափարական բաղադրիչը, որը կարողացավ կանխել միանգամայն իրատեսական ու հավասարակշռված քաղաքական որոշումները, կարևոր դեր խաղացին հակառուսական տրամադրությունների արմատավորման գործում: Նման անհեռատես քայլերով երկիրը վերածվել է աշխարհաքաղաքական բախումների դաշտի:

Ուկրաինական ճգնաժամը չդարձավ միայն ներքին կամ տարածաշրջանային մասշտաբի իրադարձություն, այլ բավականին արագ դուրս եկավ հետխորհրդային տարածքի սահմաններից: Դա տեղի ունեցավ 2014 թվականին, երբ «կոլեկտիվ Արևմուտքը» արձագանքեց Ղրիմի ու Դոնբասի իրադարձություններին՝ սկսելով «պատժամիջոցային պատերազմ» Ռուսաստանի Դաշնության դեմ և լայնածավալ տեղեկատվական արշավ՝ ի պաշտպանություն Ուկրաինայի նոր կառավարության ու քննադատելով Ռուսաստանի գործողությունները: Նույն ժամանակահատվածում փորձագետները սկսեցին քննարկել աշխարհը Սառը պատերազմի ժամանակներ վերադարձնելու, իսկ ժամանակակից աշխարհակարգը՝ առճակատման թատերաբեմի վերածելու թեմաները:

Չնայած այն հանգամանքին, որ 2014-2022 թվականները չեն կարող լիովին փոխկապակցվել XX դարի երկրորդ կեսի Սառը պատերազմի հետ, քանի որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ որևէ այլ ժամանակակից պետություն դեռևս չուներ քաղաքական ու գաղա-

փարական նախագիծ, որը կարող է մրցակցել Միացյալ Նահանգների հետ, պատմության գրեթե ողջ հետերկբևեռ շրջանի ընթացքում նկատվել են առճակատման տարրեր:

Խոսքը նախևառաջ դեպի Արևելք ՆԱՏՕ-ի ընդլայնման մասին է, որը սկսվել էր 1990-ական թվականների վերջին հետխորհրդային տարածքում անկայունության կենտրոնների ի հայտ գալու ու Ռուսաստանի սահմանների երկայնքով լարվածության առկայության համատեքստում: ԱՄՆ ակտիվ ներթափանցումը տարածաշրջան «գունավոր հեղափոխությունների» և «փափուկ ուժի» տեխնոլոգիաների օգնությամբ նախադրյալներ ստեղծեց Ռուսաստանին մեկուսացնելու արևմտյան ու հարավային ուղղություններով[54]: Այս գործողությունները հիմնականում համընկնում էին այն կանխատեսումներին, որոնք իրենց աշխատություններում նկարագրել էին Զ. Բժեզինսկին և Ս. Մաննը[55]: Դրանցում կենտրոնական տեղերից մեկը զբաղեցնում էր Ուկրաինան:

Ուկրաինական ճգնաժամի համապատկերում Ռուսաստանի ու «Կոլեկտիվ Արևմուտքի» հարաբերություններում աստիճանաբար աճեց լարվածությունը: Ժամանակ առ ժամանակ Ռուսաստանը փոխզիջումների գնալու պատրաստակամություն էր հայտնում (Մինսկի համաձայնագրեր 1 ու 2), սակայն, ըստ պաշտոնական Ռուսաստանի, ԵՄ երկրների ու ԱՄՆ արձագանքին չարժանացավ: Ռուս պաշտոնյաների նման մտավախությունները որոշակիորեն հաստատվեցին Մինսկի հանդիպման անմիջական մասնակիցների պաշտոնական հայտարարություններով արդեն այն բանից հետո, երբ Ռուսաստանը 2022 թվականին սկսեց հատուկ ռազմական գործողություն: Այսպես, Ֆրանսիայի նախկին նախագահ Ֆ. Օլանդի և Գերմանիայի կառավարության նախկին

---

[54] Տե՛ս **Скалепов А.**, Тектоника украинского кризиса, М.: «Проспект», 2022, էջ 7-18:

[55] Տե՛ս **Ремарчук В. Н.,** «Управляемый хаос» как политическая технология в современной геополитике // Гуманитарный вестник, 2014, №1 (15), URL: http://hmbul.ru/articles/153/153.pdf, հասանելի՝ 15.04.2023:

ղեկավար Ա. Մերկելի հաստատումներով Մինսկի պայմանավորվածությունները նպատակ ունեին ժամանակ տալու Ուկրաինային՝ պատրաստվելու Դոնբասի հարցի թեկուզև ուժային լուծմանը[56]:

Լարվածության աճի վերջին փուլը 2021 թվականի դեկտեմբերից 2022 թվականի փետրվար ժամանակահատվածի իրադարձություններն էին, երբ Ռուսաստանը ԱՄՆ-ին ու ՆԱՏՕ-ին ներկայացրեց իր անվտանգության երաշխիքների և այդ կազմակերպության՝ դեպի Արևելք հետագա չընդլայնման պահանջներ, որոնք չբավարարվեցին[57]: Ուկրաինան իր հերթին կտրուկ սաստկացրեց ռազմական գործողությունները Դոնբասում՝ հայտարարելով միջուկային ծրագրի զարգացմանը վերադառնալու հնարավորության մասին[58] :

2022 թվականի փետրվարի 24-ին հատուկ ռազմական գործողության մեկնարկով լրատվական դաշտում սկսվեցին տարածվել հայտարարություններ, նախագծեր ու կանխատեսումներ միջազգային հարաբերությունների ներկայիս համակարգում հիմնարար փոփոխությունների, աշխարհակարգի փոխակերպման, համաշխարհային ճգնաժամի և միաբևեռության անկման, ուժերի վերաբաշխման մասին: Նմանատիպ թեզեր հնչեցին ինչպես տարբեր

---

[56] Տե՛ս «Меркель была права». Олланд откровенно высказался о Минских соглашениях // «РИА Новости», https://ria.ru/20221230/olland-1842524713.html, հասանելի՝ 15.04.2023:

[57] Տե՛ս Договор между Российской федерацией и Соединенными Штатами Америки о гарантиях безопасности – сайт МИД РФ – ttps://mid.ru/ru/foreign_-policy/rso/nato/1790818/. Ответ НАТО и США на предложения России по безопасности. Полный текст, «ТАСС», https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/13594727, հասանելի՝ 15.04.2023:

[58] Տե՛ս **Тадтаев Г.,** Зеленский пригрозил пересмотреть отказ Украины от ядерного оружия // РБК. 19.02.2022. URL: https://www.rbc.ru/politics/19/02/2022/-621108ac9a7947f316c3b93e, հասանելի՝ 15.04.2023:

վերլուծական զեկույցներում, այնպես էլ ԱՄՆ[59] ու եվրոպական առաջատար երկրների ղեկավարների[60] և այլ քաղաքական գործիչների ելույթներում[61]: Այս կանխատեսումներն ու հայտարարությունները հիմնականում փոխկապակցված էին Կլաուս Շվաբի «Մեծ վերաբեռնում» գաղափարին[62], որը ենթադրում էր նոր միջազգային քաղաքական ու տնտեսական համակարգի ձևավորում ժողովրդավարական երկրների, միջազգային կազմակերպությունների և անդրազգային կորպորացիաների համախմբման միջոցով:

ՆԱՏՕ-ի «բաց դռների» քաղաքականությունն ու ռազմական նոր դաշինքների ձևավորումը, ինչպիսին է՝ AUKUS-ը հնդխաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, չէր կարող չանհանգստացնել Ռուսաստանին, իսկ դրա հետ մեկտեղ՝ Չինաստանին: Վերջինս հանդես է եկել՝ կտրուկ դատապարտելով այն փաստը, որ արևմտյան ուժային կառույցները անշեղորեն մոտենում են իր սահմաններին: Չպետք է մոռանալ Արևմուտքի ու Չինաստանի այլ հակասությունների մասին: Նրանց միջև լարվածությունը միայն աճում է Թայվանի և ույղուրական շրջանի խնդիրների շուրջ: Համաշխարհային քաղաքականության ներկա փուլում քաղաքագետների կողմից դրանք շատ հաճախ կապվում են ուկրաինական ճգնաժամին:

---

[59] Տե՛ս Williams M. Biden Announces Start of 'New World Order' During Address // American Action News. 22.03.2022, URL: https://americanactionnews.com/politics/2022/03/22/biden-announces-start-of-new-world-order/, հասանելի՝ 15.04.2023:

[60] Տե՛ս Канцлер Германии дал прогноз о мироустройстве в будущем // ИА Regnum. 12.05.2022. URL: https://regnum.ru/news/polit/3588124.html, հասանելի՝ 15.04.2023:

[61] Տե՛ս Блинкен заявил, что РФ и КНР бросили вызов существующему миропорядку // Rambler. 11.07.2022. URL: https://news.rambler.ru/world/489-80806-blinken-utverzhdaet-chto-rf-i-knr-brosili-vyzov-suschestvuyuschemu-miroporyadku/, հասանելի՝ 15.04.2023:

[62] Տե՛ս **Никифорова В.,** Что нам делать с «Великой перезагрузкой»? // РИА Новости. 19.02.2021. URL: https://ria.ru/20210219/perezagruzka-1598075387.html, հասանելի՝ 15.04.2023:

Այս ամենին գումարվում են նաև աշխարհատնտեսական խնդիրները: Այս ոլորտում Ռուսաստանն ու Չինաստանը ևս հայտնվել են բարիկադների նույն կողմում: Ռուսաստանին Եվրոպայի էներգետիկ շուկայից դուրս մղելու և այն ԱՄՆ սլանցային ռեսուրսներով լցնելու համար արևմտյան հանրությունը օգտագործում էր մայրցամաքի էներգետիկ անվտանգությունն ու գլոբալ «կանաչ անցումը» ապահովելու շատ վեհ գաղափարները[63]: Մշտական հարվածների տակ էր գտնվում «Հյուսիսային գազային հոսք-2»-ը Ռուսաստանից Գերմանիա շահագործման հանձնելու գործընթացը: Այն բանից հետո, երբ Ռուսաստանը ճանաչեց Դոնբասի հանրապետությունների անկախությունը և Ուկրաինայում հատուկ գործողություն սկսեց, նախագիծն ամբողջությամբ կասեցվեց: Ռուսաստանի դեմ ֆինանսական ու առևտրային աննախադեպ պատժամիջոցների լայն շրջանակի կիրառումից բացի՝ դրույթ ներառվեց Ռուսաստանից էներգակիրների մատակարարումից արևմտյան աշխարհի աստիճանական հրաժարման մասին, որը, ըստ այդ գաղափարը առաջ քաշողների, մեծ վնաս կհասցներ Ռուսաստանի տնտեսությանը: Դրան հաջորդեցին պայթյունները «Հյուսիսային հոսքի» գազի փոխանցման ճյուղերում, որոնք վերջնականապես շարքից դուրս բերեցին այն՝ 4 հոսքերից թողնելով միայն մեկը: ԵՄ-ն շարունակում է մշտապես ընդունել ԵՄ-ից պատժամիջոցների նոր փաթեթներ, որոնց թիվը երկարաժամկետ հեռանկարում միայն կաճի:

Արևմտյան երկրները, ՌԴ հատուկ ռազմական գործողության պայմաններում Ուկրաինայի պայքարը հռչակելով միակ արդար գործելակերպը, սկսեցին աննախադեպ ռազմական օգնություն ցուցաբերել այդ երկրին: Սակայն Ուկրաինան արևմտյան զենքով զինելու գործընթացում կան նաև որոշակի

[63] Այդ մասին տե՛ս **Khojayan, K.** (2022). Reflections on the Transformation of the World Order: Emerging Trends and Impending Perspectives // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(2), 92-105, https://doi.org/-10.46991/JOPS/2022.1.2.092:

մտահոգություններ ռուս-ուկրաինական հակամարտության սրման առնչությամբ՝ ընդհուպ մինչև միջուկային հարվածներ: Այս հանգամանքը կարող է աղետալի հետևանքներ ունենալ Եվրոպայի, ինչպես նաև ողջ աշխարհի համար: Ըստ էության, Ուկրաինայի տարածքում պրոկսի պատերազմ է վարվում Արևմուտքի ու Ռուսաստանի միջև:

Չինաստանի աճող տնտեսական հզորությունը՝ այս երկրում համաշխարհային արտադրության կենտրոնացմամբ, նրան դարձրել է Միացյալ Նահանգների լուրջ մրցակից համաշխարհային արտադրական շուկայում: Այդ մասին է վկայում համաշխարհային տնտեսության մեջ Չինաստանի դերի գնահատականը, որը տրված է 2022 թվականին ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարությունում[64]: Վերջինս այս երկիրը բնութագրում է որպես ԱՄՆ-ի համար լուրջ սպառնալիք: Չինաստանի դեմ պայքարը նշանակված է որպես կառավարության կարևորագույն խնդիր, որն իր կարևորությամբ գերազանցում է Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու անհրաժեշտությունը: Պատահական չէ, որ ԱՄՆ նախկին նախագահ Դ. Թրամփի կիրառած պրոտեքցիոնիստական քաղաքականությունը ՉԺՀ-ի նկատմամբ շարունակվում է նրա իրավահաջորդի օրոք նույն վճռականությամբ: Ուստի Չինաստանում ընդհանուր կարծիք է ձևավորվել, որ Ռուսաստանի վերջնական թուլացումից հետո արևմտյան մրցակից երկրների հարձակումները կուղղվեն Չինաստանի դեմ:

Ուկրաինայի շուրջ միջազգային լարվածությունը սրվում է աշխարհի գրեթե բոլոր երկրների տնտեսությունների վիճակով: Չնայած համաճարակից հետո թվացյալ վերականգնմանը՝ աշխարհում գնաճի բարձր տեմպերը պահպանվում են: Տրիլիոնների հասնող կանխիկ գումարներ բառացիորեն նետվել են համաշ-

[64] Տե՛ս National Security Strategy. The White House, Washington, October 2022, pp. 23-25, https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2022/10/Biden-Harris-Administrations-National-Security-Strategy-10.2022.pdf, հասանելի՝ 15.04.2023:

խարհային տնտեսություն, իսկ հակառուսական պատժամիջոցներն օբյեկտիվորեն հանգեցրել են դրա կտրուկ վատթարացմանը:

Միևնույն ժամանակ համաշխարհային տնտեսությունների աճի տեմպերը լրջորեն հետ են մնում ընդունելի մակարդակից[65]: Ավելին, շատ հեղինակավոր ֆինանսական հաստատություններ լրջորեն զգուշացնում են համաշխարհային տնտեսության մեջ ստագֆլյացիոն բնույթի երևույթների մասին: Զուգահեռաբար աշխարհի շատ երկրներում աճում է սոցիալական լարվածությունը: Համաշխարհային պարենային ճգնաժամը նույնպես վատթարանում է, որը նույնպես մեծապես պայմանավորված է ուկրաինական ճգնաժամով, թեև շատ քաղաքական գործիչներ այդ մասին նախազգուշացրել էին ռազմական գործողությունների մեկնարկից շատ ավելի առաջ:

Այսպիսով, կարելի է նկատել արևմտյան որոշ երկրների քաղաքական շրջանակների ձգտումները՝ գտնելու համապատասխան միջազգային (արևմտյան աշխարհի հետ չկապված) հանգամանք, որը կօգնի համախմբել ողջ արևմտյան հանրությունը և շեղել նրան ներքաղաքական ու ներտնտեսական խնդիրներից:

Համաշխարհային հանրությունն իր պատմության ընթացքում մեկ անգամ չէ, որ բախվել է նման խնդիրների: Երբեմն միջազգային լարվածության սրումը լծակ էր՝ ազդելու տնտեսական կյանքի աշխուժացման վրա, ինչը հանգեցնում էր բազմաթիվ երկրներում պաշտպանական ծախսերի ընդլայնման, իսկ արդյունքում՝ ռազմական արդյունաբերության վրա հսկայական բեռի: Ինչպես երևում է այսօրվա իրողություններից, ուկրաինական ճգնաժամը լուծում է նաև այս խնդիրը: Գերմանիան հայտարարեց ռազմական ծախսերի ավելացման (մինչև 100 միլիարդ դո-

[65] Տե՛ս Wall Street veterans offer 3 trading strategies for investors worried about a recession, «CNBC», от 31.05.2022, https://ru.investing.com/news/economy/article-2158289, հասանելի՝ 15.04.2023:

լար), Ֆրանսիան՝ եվրոպական բանակ ստեղծելու անհրաժեշտության մասին, ինչպես նաև ավելացրեց պաշտպանական ծախսերը, ՆԱՏՕ-ն մտածում էր իր զինված ուժերի ամբողջական արդիականացման մասին, Ավստրալիան՝ իր նավատորմը բացառապես միջուկային սուզանավերով զինելու մասին, Ճապոնիան մտադիր է մինչև 2030 թվականը կրկնապատկել ռազմական բյուջեն և այլն: Նշենք նաև, որ Ուկրաինային ռազմական օգնությանը զուգահեռ արևմտյան երկրները սկսեցին վերազինել իրենց զինված ուժերը՝ ազատվելով հին (սովետական ժամանակներից) սպառազինություններից:

Ուկրաինական ճգնաժամը սրեց ևս մեկ գլոբալ խնդիր՝ նեոլիբերալ արժեհամակարգի անհամատեղելիությունը, ընդհանուր առմամբ, ավանդական կողմնորոշված հասարակությունների հետ: Ընդհանրապես արժեհամակարգերի հակամարտությունն աշխարհում հասունանում էր ուկրաինական իրադարձություններից ավելի վաղ ժամանակահատվածում: Ընդամենը պետք էր պատրվակ աշխարհաքաղաքական կենտրոնների համար՝ անմիջական բախումը հրահրելու ու միմյանց գաղափարական կողմնորոշումները վարկաբեկելու համար:

Փորձը ցույց տվեց, որ փոխակերպման փուլում գտնվող երկրներից շատերը, այդ թվում՝ Ուկրաինան, հեռու են ժողովրդական ընկալումներից: Միևնույն ժամանակ նրանց կառավարությունները հաջողությամբ իմիտացիայի են ենթարկում ժողովրդավարացման գործընթացները: Նմանատիպ միտումների պայմաններում ներդրումներ իրականացող երկրների լուռ համաձայնությամբ ձևավորվում է արդեն կաշառված էլիտա՝ շարունակելով յուրացումների ու կոռուպցիայի հին ավանդույթները՝ ի վնաս այդ երկրների քաղաքացիների շահերի: Սա մեծ վնաս է հասցնում հենց «ժողովրդավարացում» հասկացությանը՝ խիստ վարկաբեկելով այն: Ըստ էության, այս հանգամանքը մեծապես որոշեց համաշխարհային հասարակական կարծիքը, որը մոտ 65 %-ով մեր-

ժում է ժողովրդավարության ժամանակակից ընկալումները՝ որպես պետական իշխանության ձևավորման արդյունավետ հայեցակարգ:

Ուկրաինական ճգնաժամը որոշակի տարաձայնություններ է առաջացրել բուն անդրատլանտյան գործընկերության մեջ ևս: Եվրոպական շատ երկրների կառավարությունները քաջատեղյակ են, թե ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ հակամարտության սրումը հետհամաճարակային Եվրոպայում, և, ընդհակառակը, ինչ դիվիդենտներ են ակնկալվում իրենց ատլանտյան գործընկերների համար: Խնդիրները վերաբերում են ինչպես տնտեսական, էներգետիկ, դրամավարկային, այնպես էլ սոցիալական, միգրացիոն, ներքաղաքական և այլ ոլորտներին: Չնայած թվացյալ միասնությանը՝ կարծում ենք, որ այն էյֆորիայից հետո, որը ծագել է «Ռուսաստանի կողմից Ուկրաինա ներխուժելու» դեմ պայքարում արևմտյան երկրների համախմբմանը զուգահեռ, տնտեսական ու ռազմաքաղաքական խնդիրների հետագա սրումը քայլ առ քայլ միայն կխորացնի ընկալումների տարբերությունները եվրոպական երկրների միջև: Այս գործընթացը գործնականում անշրջելի կդառնա, եթե այնպիսի երկրներ, ինչպիսիք են Չինաստանն ու Հնդկաստանը, չհրաժարվեն Ռուսաստանի նկատմամբ իրականացվող «բարիդրացիական չեզոքության» քաղաքականությունից և շարունակեն ակտիվորեն համախմբել իրենց շուրջ այլ պետությունների (ԲՐԻԿՍ կամ ՇՀԿ շրջանակում): Դեռևս այդ միտումը շարունակվում է պահպանվել:

Չպետք է մոռանալ նաև բուն Եվրոպայում Արևմուտքի ու Արևելքի միջև առկա հակասությունների մասին, որոնք դրսևորվել են նախքան Ուկրաինայի շուրջ իրավիճակի սրումը: Դրանք պայմանավորված են պատմական առանձնահատկություններով, դրամավարկային ու միգրացիոն քաղաքականության նկատմամբ տարբեր ընկալումներով, գերիշխող արժեհամակարգերի տարբերություններով, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից եվրոպական երկրների վրա ազդեցության աստիճանով: Ուկրաինական ճգնաժամի

սրման պատկերում տեղի է ունենում Եվրոպայի մասնատման անտեսանելի գործընթաց. առանձնանում են Արևելյան Եվրոպայի մի խումբ երկրներ, որոնք իբր հատուկ ռազմական գործողության ավարտից հետո պետք է դառնան Ուկրաինայի անվտանգության երաշխավորը՝ Մեծ Բրիտանիայի հովանու ներքո միջուկային զենքի տիրապետող: Պետությունների նոր խումբն աչքի է ընկնում Ռուսաստանի նկատմամբ բացահայտ թշնամությամբ: Եթե անգամ ուկրաինական հակամարտությունից հետո եվրոպական բազմաթիվ երկրներում կսկսեն իշխել հաշտարար տրամադրությունները, ապա այս խմբավորումը հավանաբար կկարողանա ռուսատյացության «մխացող կրակը» մշտապես վառ պահել: Պատահական չէ, որ Բրիտանիայում սկսեցին լրջորեն խոսել Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի, Ուկրաինայի ու Բալթյան երկրների ռազմաքաղաքական դաշինքի մասին[66]:

Ուկրաինայում ռազմական գործողությունների բռնկումից հետո աշխարհում ստեղծված իրավիճակը Ռուսաստանին ստիպում է ակտիվացնել արտաքին քաղաքականության արևելյան ուղղությունը՝ դեպի BRICS իր գործընկերներ՝ Հնդկաստան ու Չինաստան:

Ուկրաինական հակամարտության ընթացքում Հնդկաստանը զգալիորեն ավելացրեց էներգակիրների գնումները Ռուսաստանից և շարունակում է չեզոք քաղաքականությունն իր գործընկերոջ նկատմամբ: Մի շարք քաղաքական գործիչների կարծիքով Չինաստանի հետ Ռուսաստանը պահպանում է եղբայրական հարաբերություններ, իսկ համաշխարհային քաղաքականության մեջ կողմերի դիրքորոշումները գրեթե միշտ համընկնում են: Չինաստանի արտաքին գործերի նախարար Վան Ին ասել է, որ Չինաստանն ու Ռուսաստանը միշտ հաստատապես աջակցել են միմյանց՝ պաշտպանելու հիմնական շահերը, իսկ քաղաքական ու

[66] Տե՛ս Кремль увидел в предложении Джонсона создать новый союз стремление подорвать позиции ЕС, «Интерфакс», https://www.interfax.ru/world/843284, հասանելի՝ 15.04.2023:

ռազմավարական փոխվստահությունն էլ ավելի ամրապնդվել է[67]: Բացի դրանից՝ նախատեսվում է ամրապնդել երկու երկրների համագործակցությունը տնտեսության, առաջին հերթին՝ ֆինանսավարկային ոլորտում, ինչը կարող է սասանել ԱՄՆ դոլարի՝ որպես համաշխարհային պահուստային արժույթի դիրքերը: Այս և այլ երկրների միջև ազգային արժույթներով փոխադարձ հաշվարկների թվի աճը հատուկ ռազմական գործողության համատեքստում միանգամայն տրամաբանական ու բնական երևույթ է թվում: Սա արագացնում է բազմարժութային ֆինանսական համաշխարհային համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծման գործընթացը:

Հատկանշական է, որ արևմտյան քարոզչությունը, երբեմն էլ նաև ուղղակի դիվանագիտական ճնշումը շատ երկրների վրա չկարողացան համախմբել համաշխարհային մասշտաբով որևէ նշանակության հակառուսական կոալիցիա: Դա մեծապես կանխվեց համաշխարհային տնտեսական առանցքային կենտրոնների դիրքորոշմամբ, ինչպիսիք են BRICS երկրները, Թուրքիան, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Հարավարևելյան Ասիայի, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների մեծ մասը, Աֆրիկան ու Լատինական Ամերիկան: Փաստորեն՝ Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների ճնշման քաղաքականության նախաձեռնողները մնացին փոքրամասնության մեջ:

Միավորված արևմտյան հանրությունը գիտակցում է Ուկրաինայում ռազմական առճակատման հետևանքների հիմնարար նշանակությունը, որը հոլի է միաբևեռ աշխարհակարգի վերափոխմամբ: Արևմտյան երկրները զգացին համաշխարհային քաղաքական, ֆինանսական և տնտեսական գործընթացների նկատմամբ վերահսկողությունը կորցնելու վտանգը: Իսկ դա իր հերթին կարող է լուրջ փոփոխությունների հանգեցնել ինչպես համաշ-

[67] Տե՛ս В МИД КНР заявили об укреплении стратегического взаимного доверия с Россией // «РИА Новости», https://ria.ru/20221225/knr-1841164500.html, հասանելի՝ 15.04.2023:

խարհային քաղաքականության մեջ, այնպես էլ շատ արևմտյան երկրների ներքին կյանքում: Խնդիրները կարող են ազդել ոչ միայն հասարակական կյանքի քաղաքական ու սոցիալ-տնտեսական ոլորտների վրա, այլև հիմնովին սասանել բազմաթիվ պետությունների քաղաքացիների հավատը լիբերալ-դեմոկրատական արժեքների բացառիկության նկատմամբ: Հարցականի տակ է դրվում միասնական արևմտյան հանրության գոյությունը, որը մինչ օրս ընկալվում է որպես բարեկեցիկ կյանքի, հումանիզմի ու զարգացած ժողովրդավարության կենտրոն: Իրականում հենց դա է պատճառը, որ ուկրաինական ճգնաժամը արևմտյան երկրների կողմից մեկնաբանվում է որպես «զրոյական հանրագումարով» հակամարտություն՝ ընդգծելով արևմտյան աշխարհի համար գոյություն ունեցող գոյաբանական վտանգը: Այս հանգամանքով է բացատրվում բոլոր երկրներին «Ռուսաստանի ագրեսիվ գործողությունների», «պետությունների ինքնիշխանության ոտնահարման» դեմ ուղղված կարգախոսների շուրջ համախմբելու միտումը: Արևմուտքի կարծիքով այսօր որոշվում է ապագա աշխարհակարգի հարցը. այն կլինի ժողովրդավարակա՞ն, թե՞ ավտորիտար:

Պակաս արմատական չէ Ռուսաստանի դիրքորոշումը, որը նույնպես գոյաբանական վտանգ է տեսնում իր համար: Իսկ դրա համար, իհարկե, կան որոշակի պատճառներ: Ռուսաստանյան նախկին քաղաքական ու բիզնեսի ոլորտների որոշ գործիչների առաջարկով արտերկրում գործող բազմաթիվ հասարակական կազմակերպություններ առաջ են քաշում Ռուսաստանը մասնատելու և որպես ինքնիշխան պետություն նախկին սահմաններում լուծարելու գաղափարը[68]: Այսպիսով, նրանց կարծիքով, «վերջին կայսրությունը» կվերանա աշխարհի քաղաքական քարտեզից՝ ճանապարհ բացելով ամբողջ աշխարհում ժողովրդավարական գործընթացների «բնական» ընթացքի համար: Իհարկե, Ռուսաս-

[68] Տե՛ս Руководство США ищет способы расчленить Россию // «Рамблер», https://news.rambler.ru/science/48918961/?utm_content=news_media&utm_medium=read_more&utm_source=copylink, հասանելի՝ 15.04.2023:

տանում չեն մոռանում նաև նախկին ժամանակների ամերիկյան պաշտոնյաների հայտարարությունները, որոնք կարծում էին, որ մոլորակի հսկայական հարստությունը «անարդարացիորեն» է կենտրոնացել ռուսական պետության ձեռքում, և որ դրանք պետք է դառնան ողջ մարդկության սեփականությունը[69]: Ուստի Ռուսաստանի կողմից առաջ են քաշվում նաև արմատական կարգախոսներ, ինչպիսիք են՝ «պայքար ֆաշիզմի դեմ» (ոչ միայն ուկրաինական, այլև «արևմտյան»), «պայքար սատանիզմի դեմ» («արմատական նեոլիբերալիզմ») և պատերազմ, որը ներկայացվում է որպես «Հայրենական մեծ պատերազմի շարունակություն»:

Այս ամենը ուկրաինական ճգնաժամը վերածում է համաշխարհային նշանակության իրադարձության: Այստեղից բխում է, որ այս ճգնաժամից ելքը պետք է ունենա նաև համաշխարհային բնույթի հետևանքներ: Բազմաթիվ փորձագետների կարծիքով աշխարհին դեռ սպասվում են նոր «Յալթաներ», «Պոտսդամներ» և «Բրետտոն Վուդներ», որոնք կհանգեցնեն աշխարհակարգի հիմնարար փոփոխության:

Չնայած աշխարհը մոտեցել է գլոբալ ցնցմանը, մնում է հուսալ, որ համաշխարհային հանրության մեջ կգերիշխի համաշխարհային կենտրոնների միջև փոխզիջում գտնելու ցանկությունը: Միայն դա կարող է վերջնականապես լուծել ուկրաինական խնդիրը՝ միաժամանակ վերացնելով փոխադարձ սպառնալիքները: Փոխզիջումը կազդարարի նոր բազմաբևեռ աշխարհակարգի նախադրյալների ձևավորումը՝ ապահովելով մարդկության ներդաշնակ և ինչ-որ առումով դիալեկտիկական զարգացումը: Ստեղծված իրավիճակը կարելի է համարել անցումային կամ միջանկյալ, քանի որ միջազգային հարաբերությունների համակարգում փոփոխությունների գործընթացը երկարատև է:

---

[69] Տե՛ս Мадлен Олбрайт: мечтающая о Сибири «орлица с брошкой» // «Правда», https://www.pravda.ru/world/289810-albright/, հասանելի՝ 15.04.2023:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Հարավային Կովկասի տարածաշրջանը, որը գտնվում է եվրասիական տարածության կարևորագույն աշխարհագրական շրջաններից մեկում, մշտապես գրավել է համաշխարհային ուժային կենտրոնների ուշադրությունը: Նշյալ հանգամանքը պատմականորեն իր դրոշմն է թողել այս տարածաշրջանում բնակվող ժողովուրդների ճակատագրերի վրա ինչպես սոցիալ-տնտեսական ու մշակութային, այնպես էլ քաղաքական առումներով: Սրա հետ է կապված նաև տարածաշրջանի պետական կազմավորումների, դրանց ձևավորման, գործառության և ինքնիշխանության հիմնախնդիրներին վերաբերող պատմական ճակատագիրը: Տարածաշրջանում գոյություն ունեցող երեք պետությունների ժամանակակից սահմանները հիմնականում որոշվել են Առաջին համաշխարհային պատերազմից հետո միջազգային խորհրդաժողովների որոշումների, ինչպես նաև տարածաշրջանում միմյանց հաջորդած աշխարհաքաղաքական փոխակերպումների հիման վրա՝ պայմանավորված Խորհրդային Ռուսաստանի դերի ակտիվացմամբ: Ըստ էության, հենց համաշխարհային ու տարածաշրջանային ակտիվ խաղացողների աշխարհաքաղաքական շահերն են վերաձևել ներկայիս հարավկովկասյան երկրների ժամանակակից սահմանները:

Առաջին համաշխարհային պատերազմի ամենաթեժ պահին, երբ 1918 թվականի Բրեստի պայմանագրից հետո հարավկովկասյան տարածաշրջանը հայտնվեց Եռյակ (Քառյակ) միության երկրների ազդեցության տակ, տարածաշրջանի պետությունների ձևավորումը պայմանավորվեց դաշնակիցների՝ Թուրքիայի ու Ռուսաստանի միջև բուֆերային գոտի ձևավորելու ձգտմամբ: Պարզ էր, որ Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի

ավարտից հետո, անկախ այն բանից, թե երկրի ներսում պատերազմող կողմերից ով կհաղթի, Ռուսաստանը կրկին իր հայացքն ուղղելու էր դեպի Անդրկովկասի տարածք: Եռյակ միության երկրները անհրաժեշտաբար պետք է պատրաստվեին իրադարձությունների նման ընթացքին և փորձեին ամրապնդվել նորաստեղծ պետություններում: Մասնավորապես Թուրքիան 1918 թվականի մարտին անդրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչների մասնակցությամբ Տրապիզոնի խորհրդաժողովում պնդում էր, որ Հարավային Կովկասն անջատվի Ռուսաստանից, և հետագայում ձևավորվեն երեք ինքնիշխան հանրապետություններ[70]: Սակայն համաշխարհային պատերազմում իրադարձությունների հետագա ընթացքը հանգեցրեց հակառակ ճամբարի՝ Անտանտի երկրների հաղթանակին, որից հետո տարածաշրջանը հայտնվեց հիմնականում Մեծ Բրիտանիայի ազդեցության ներքո: Սպասելով նոր աշխարհակարգի հաստատմանն ուղղված միջազգային խորհրդաժողովների որոշումներին՝ դաշնակիցների վարչակազմը տարածաշրջանում չկենտրոնացավ Հարավային Կովկասի՝ 1918 թվականին ձևավորված պետությունների միջև նախնական սահմանագծման հարցերի վրա: Նրանց միջև ծագող հակասությունները ու հակամարտությունները մարվում էին հետպատերազմյան խաղաղության առաջիկա խորհրդաժողովներում դրանց լուծման պայմանով: Տարածաշրջանային վարչակազմը հիմնականում զբաղված էր սոցիալ-տնտեսական հարցերով՝ առաջին հերթին վերահսկողություն իրականացնելով Բաքվի նավթահանքերի նկատմամբ: Հասկանալի է, որ ադրբեջանցիների ու հայերի միջև ծագող կոնֆլիկտների դեպքում անգլիացիների համակրանքն առաջինների կողմն էր, որպեսզի չհարուցեր նավթային շրջանների շարքային քաղաքացիների դժգոհությունը:

[70] Տե՛ս **Petrosyan, G.** (2022). Armenian Statehood in Foreign Policy Realities: the First Steps of the First Republic // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(2), 12-48, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.2.012:

Ամեն դեպքում հետագայում, ելնելով ձևավորվող միջազգային հարաբերությունների Վերսալ-վաշինգտոնյան համակարգի շրջանակում կայացվող որոշումներից, պարզ դարձավ, որ հաղթող երկրները ևս ձգտում էին հարավկովկասյան երեք պետություններ ձևավորելու միջոցով յուրատեսակ պատնեշ կանգնեցնել ռուսական պետության առջև: Սակայն նրանց սահմանները որոշելիս Անգլիան ու Ֆրանսիան հարկադրված էին հաշվի առնել համաշխարհային պատերազմին հարավկովկասյան ժողովուրդների՝ որպես Անտանտի դաշնակիցների մասնակցության աստիճանը, ինչպես նաև բացառել տարածաշրջանում Թուրքիայի հնարավոր ակտիվացումը՝ բնականաբար, թույլ չտալով երկու թուրքական պետությունների միավորումը: Հենց այդ պատճառով 1920 թվականի Սևրի խորհրդաժողովում Հայաստանի Հանրապետության սահմաններն արևմուտքում զգալիորեն ընդլայնվեցին՝ ի հաշիվ թուրքական պետության՝ հայերի նախկին պատմական հայրենիքի տարածքների:

Այս մտահղացումները, սակայն, չէին կարող իրականանալ: Արևմտյան երկրներից որևէ մեկը պարտավորություն չստանձնեց իր հովանու տակ առնելու հայկական տարածքները: Դա մեծապես պայմանավորված էր դեռևս նույն տարվա գարնանը (ի հակակշիռ Կոստանդնուպոլսի օսմանյան կառավարության) Թուրքիայի կենտրոնական մասում Մուստաֆա Քեմալի գլխավորած ազգային-ազատագրական շարժման ծավալմամբ, որի նպատակը արևմտյան պետություններին արված զգալի տարածքային զիջումներից հետո այդ երկրի երբեմնի մեծությունը վերականգնելն էր: Պատերազմից հյուծված արևմտյան երկրները, բացի Հայաստանի ապագա ենթամանդատային տարածքում հսկայական ծախսերից, ստիպված կլինեին Թուրքիայի հետ նոր դիմակայության մեջ ներքաշվելու հեռավոր տարածքներում: Արդյունքում Անտանտի դաշնակից համարվող Հայաստանը միայնակ մնաց Թուրքիայի վերստին ուժեղացող ռազմաքաղաքական ուժի առջև:

Թուրք ազգայնականների շարժումն իր հակաիմպերիալիստական կարգախոսներով կարողացավ կարճ ժամանակահատվածում միավորել երկրի բնակչության զգալի հատվածին և ստեղծել պատկառելի մարտունակ բանակ: Այս հարցում էական դեր ունեցավ Խորհրդային Ռուսաստանը, որը, քաղաքացիական պատերազմում հաղթանակի մոտենալուն զուգընթաց, աստիճանաբար գիտակցեց Հարավային Կովկասի տարածաշրջանում իր ռազմավարական ներկայության անհրաժեշտությունը:

Թուրքական ազգային շարժման ղեկավարներին ընդունելով որպես հակաիմպերիալիստական պայքարի դաշնակիցներ, որոնք ի զորու են Մերձավոր Արևելքի ժողովուրդներին միավորելու այս գաղափարի շուրջը, բոլշևիկյան Ռուսաստանը նրանց զգալի նյութական օգնություն ուղարկեց, այդ թվում՝ սպառազինություն: Այդ օգնությունը քեմալականներին թույլ տվեց հաշվեհարդար տեսնել Անտանտի դաշնակիցների՝ Հունաստանի ու Հայաստանի հետ, ինչպես նաև զգալիորեն ընդլայնել արդեն նոր Թուրքիայի տարածքները: Բացի դրանից՝ 1920 թվականի ապրիլին Ռուսաստանին հաջողվեց քեմալականների միջնորդությամբ խորհրդային իշխանություն հաստատել թյուրքալեզու Ադրբեջանում, որի միջոցով կարողացավ կապ հաստատել իր նոր դաշնակցի հետ:

Հակասություններով ու մարտահրավերներով լի այս պատմական ժամանակաշրջանում, ի տարբերություն Ադրբեջանի, Հարավային Կովկասի մյուս երկու պետությունները չկարողացան իրատեսորեն գնահատել տարածաշրջանում ձևավորվող նոր իրողությունները և ճիշտ չկողմնորոշվեցին իրենց արտաքին քաղաքական առաջնահերթությունները որոշելիս: Նրանք շարունակեցին իրենց արևմտամետ արտաքին քաղաքականությունը՝ հույս ունենալով, որ Անտանտի երկրները կօգնեն կյանքի կոչելու միջազգային խորհրդաժողովների որոշումները: Ի վերջո, դա հանգեցրեց տարածքների ու ռեսուրսների որոշակի կորուստների ինչ-

պես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի համար: Այս պետությունների խորհրդայնացումից հետո հարավկովկասյան երեք հանրապետությունների սահմանները վերջնականապես ձևավորվեցին արդեն տարածաշրջանային նոր խաղացողների՝ Ռուսաստանի ու Թուրքիայի կողմից, բնականաբար, առանց եվրոպական երկրների մասնակցության:

Ակներև է, որ տարածաշրջանի պետությունների ձևավորման գործընթացը, որը սկիզբ էր առել Առաջին համաշխարհային պատերազմի ու հետպատերազմյան կարգավորման տարիներին, զգալիորեն արտացոլում էր տարածաշրջանային տարբեր խաղացողների միջև տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական վայրիվերումները: Սակայն միջազգային ծավալների աշխարհաքաղաքական փոխակերպումներից հետո այստեղ հիմնականում հաստատվեցին պատերազմից վերականգնված երկու ուժային կենտրոնները՝ Ռուսաստանն ու Թուրքիան[71]: Այդ տարիներին արևմտյան երկրներից շատերը, հստակ շահագրգռություն չցուցաբերելով և իրենց համար ծանրակշիռ հիմքեր չգտնելով տարածաշրջանում ակտիվանալու համար, չցանկացան միջամտել տարածաշրջանային խնդիրների լուծմանը՝ դրանով իսկ խուսափելով հայտնվել ուժեղացած տարածաշրջանային երկու տերությունների միջև:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին ու Թուրքիային, ապա նրանց մերձեցումը երկար չտևեց: Արևմտյան երկրների արդյունավետ դիվանագիտական աշխատանքը, ինչպես նաև Թուրքիայի «ճկունությունն ու ճարպկությունը» միջազգային հարաբերություններում այդ երկիրը փոխադրեցին արդեն Խորհրդային Միության ոչ բարեկամ երկրների շարքը: Այս հանգամանքը հատ-

[71] Տե՛ս **Aleksanyan, N., Arsenyan, M.** (2023). Davutoğlu, Ahmet. 2020. Systemic Earthquake and the Struggle for World Order: Exclusive Populism versus Inclusive Democracy. Cambridge: Cambridge University Press. XXIV, 306 pp. https://doi.org/10.1017/9781108751643 // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 163-167, https://doi.org/10.46991/JOPS/2023.2.4.163:

կապես վառ դրսևորվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ այդ երկիրը պատրաստ էր որոշակի պայմաններում պատերազմել ԽՍՀՄ-ի դեմ և վերադարձնել Հարավային Կովկասում Օսմանյան կայսրության կորցրած տարածքները, ինչպես նաև ձգտել իր ազդեցությունը տարածել մինչև Կենտրոնական Ասիա ու Սիբիր: Այս համատեքստում Թուրքիայում զարթոնք ապրեցին օսմանյան և երիտթուրքական գաղափարախոսների՝ Եվրասիայի բոլոր թյուրքալեզու ժողովուրդների միավորման վերաբերյալ երազանքները, առաջին հերթին՝ ԽՍՀՄ հաշվին: Թուրքիայի այդպիսի թշնամական վերաբերմունքը ԽՍՀՄ-ի նկատմամբ արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նրան վերջնականորեն տարավ Խորհրդային Միության մրցակիցների ճամբար: Հարավային Կովկասի սահմանը տևական ժամանակ գործնականում ջրբաժան դարձավ ԽՍՀՄ-ի և ի դեմս Թուրքիայի՝ Հյուսիսատլանտյան դաշինքի միջև: Սակայն, ինչպես ցույց են տալիս ներկայումս տարբեր երկրների թյուրքալեզու հասարակությունների շրջանում առկա տրամադրությունները, համաշխարհային պատերազմներից շատ առաջ ձևավորված պանթուրքիստական իդեալները շարունակում են տիրապետել ոչ միայն Թուրքիայում, այլև մյուս ազգակից ժողովուրդների շրջանում[72]:

Իրավիճակը Հարավային Կովկասում կտրուկ փոխվեց այն բանից հետո, երբ ԽՍՀՄ-ը փլուզվեց, ձևավորվեց միաբևեռ աշխարհակարգ, խորացան գլոբալիզացման գործընթացները, և տարածաշրջանային երկրները ներգրավվեցին համաշխարհային տնտեսական ու ֆինանսական համակարգում: Արևմտյան երկրների, առաջին հերթին ԱՄՆ ձեռքում հայտնվեցին տարա-

[72] Ավելի մանրամասն տե՛ս **Gabrielyan, H.** (2022). Turkey as a Transport Hub: a Vision Strategy for Integrating Regional Infrastructures and Services // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 11-29, https://doi.org/10.469-91/JOPS/2022.1.1.011:

ծաշրջանային պետությունների վրա ազդելու էական տնտեսական ու քաղաքական լծակներ:

ԽՍՀՄ-ի հետ երկար տարիների հոգնեցուցիչ սառը պատերազմից հետո արևմտյան երկրներին գործողության մղող աշխարհաքաղաքական հիմնական շարժառիթը դարձավ հետխորհրդային տարածքից, այդ թվում՝ նաև Հարավային Կովկասից նախկին «ոխերիմ մրցակցի» իրավահաջորդին՝ ժամանակակից Ռուսաստանին դուրս մղելու ձգտումը: Այլ արդյունավետ միջոցների հետ սկսեց օգտագործվել հենց պանթուրքիզմի գաղափարը՝ որպես նրա վրա ազդելու կարևոր լծակ, որը ունակ էր խթանելու հակառուսական տրամադրություններ ինչպես Ադրբեջանում ու Միջին Ասիայում, այնպես էլ Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանի կենտրոնական և արևելյան տարածաշրջաններում: Ըստ էության, այս գաղափարը դարձել է աշխարհաքաղաքական ու գոյաբանական լուրջ մարտահրավեր ժամանակակից Ռուսաստանի համար, յուրատեսակ ազդակ այս հարուստ երկրի ապագայում թուլացման ու մասնատման համար: Մեր կարծիքով այս գործոնը, անշուշտ, հաշվի է առնվել ռուսական դիվանագիտության կողմից դեռևս 100 տարի առաջ, և մեզ թվում է, որ նրա տեսադաշտից դուրս չի մնա նաև հիմա[73]:

Հետխորհրդային շրջանում զգալիորեն ակտիվացել է Թուրքիայի «փափուկ ուժի» քաղաքականությունը վերոնշյալ տարածաշրջաններում: Թուրքալեզու շրջաններում ու հանրապետություններում գործնականում ամենուր ստեղծվել են բարեգործական, կրոնական և կրթական տարբեր հասարակական կազմակերպություններ ու հիմնադրամներ: Դրանք հիմնովին փոխեցին իրավիճակը միջինասիական և ռուսական էթնոմշակութային շատ տարածաշրջաններում պանթուրքիստական գաղափարների ըն-

[73] Տե՛ս **Libaridian, G. J**. (2022). The History of Imperial Politics and the Politics of Imperial History // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(3), 10-24, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.3.010:

կալման համատեքստում: Հարկ է նշել, որ նման գաղափարն ինքնին շատ գրավիչ է գործնականում բոլոր թյուրքալեզու ժողովուրդների համար՝ նրանց ներուժը միավորելու և ամբողջ եվրասիական մայրցամաքում թյուրքական տարրը հզոր ու ծանրակշիռ գործոն դարձնելու տեսանկյունից:

Թուրքիայի ակտիվացումը հետխորհրդային երկրներում համընկել է եվրասիական ինտեգրման գործընթացներին: Դրանց անմիջական նախաձեռնողը Ղազախստանն էր՝ միջինասիական հանրապետություններից ամենախոշորը: Ինտեգրացիոն գործընթացների անմիջական գաղափարական հիմքը եվրասիականության հայեցակարգն էր, որը առաջ էին քաշել ռուսական էմիգրանտական որոշ շրջանակներ դեռևս 1917 թվականի հոկտեմբերյան իրադարձություններից հետո: Հայտնի է, որ այդ գաղափարախոսների առաջադրած գաղափարն ուղղված էր բզկտված ռուսական կայսերական պետության վերստեղծմանը: Նրանց կարծիքով այդ թեզի հիմնավորումը այն պնդումն է, որ եվրասիական տարածքում որևէ գերտերության գերակայությունը պատմական օրինաչափություն է, և այդ հանգամանքը պետք է նպաստի ողջ տարածաշրջանում կայունության հաստատմանը:

Ներկայումս ուշագրավ է Ռուսաստանի տարածքում գտնվող թուրքական կրթամշակութային բազմաթիվ կենտրոնների ձգտումը՝ պանթուրքիստական գաղափարը հարմարեցնելու եվրասիականությանը կամ նույնիսկ յուրացնելու դրա հիմնական դրույթները՝ այդպիսով դրան գաղափարական այլ ուղղվածություն հաղորդելով, առավել ևս, որ աշխարհագրական չափանիշներով այս երկու հայեցակարգերի տարածման գոտին շատ առումներով համընկնում է: Երկրի որոշ տարածաշրջաններում այսպիսի մեկնաբանությունն արդեն մեծ համակրանք է վայելում տեղական թյուրքական էթնիկ խմբերի շրջանում և մեր կարծիքով անմիջական սպառնալիք է պարունակում ռուսական պետականության համար: Բացի դրանից՝ հարկավոր է նշել, որ եվրասիականության

գաղափարի ինչպես նախնական, այնպես էլ ենթադրյալ նոր՝ «թուրքական» մեկնաբանությունը չի կարող ընդունելի լինել եվրասիական ինտեգրացիոն գործընթացների որոշ մասնակիցների, առաջին հերթին՝ Հայաստանի համար: Եվրասիականության գաղափարի նմանօրինակ ըմբռնումը, բնականաբար, կհանգեցնի ոչ միայն ՀՀ ինքնիշխանության կորստին, այլև միանգամայն իրական գոյաբանական սպառնալիք կստեղծի նրա համար: Ըստ էության, հենց այդ պատճառով էլ եվրասիական ինտեգրման բովանդակության առումով հիմնական շեշտը հենց սկզբից դրվեց դրա տնտեսական բաղադրիչի վրա:

Հայաստանն իր աշխարհագրական դիրքով հիշեցնում է թյուրքական աշխարհի ամենախոցելի տեղում մխրճված սեպ, որը բաժանում է տնտեսական ու ռազմաքաղաքական առումով ամենաուժեղ պետությունը մնացյալ թյուրքական աշխարհից: Մեր կարծիքով դեռևս Հայաստանի առաջին հանրապետությունը, որը դե ֆակտո ճանաչվել է Անտանտի երկրների կողմից, իսկ հանգամանքների բերումով ժամանակակից սահմաններում հաստատվել է Խորհրդային Ռուսաստանի կողմից, շարունակում է խաղալ իրեն «վերապահված» դերն ամբողջ տարածաշրջանում: Կարծում ենք՝ հենց այդտեղ է թաքնված տարածաշրջանում Հայաստանի աշխարհաքաղաքական գործոն լինելու հիմնական բովանդակությունը: Իհարկե, կան նաև այլ հանգամանքներ (տնտեսական ու պաշտպանական հզորությունը, մտավոր ներուժը, ժողովրդավարական զարգացած ինստիտուտների առկայությունը և այլն), որոնք ապագայում կարող են զգալիորեն բարձրացնել Հայաստանի նշանակությունը տարածաշրջանային գործընթացներում: Սակայն գոյություն ունեցող պայմաններում վերոնշյալ փաստարկը, թերևս, շարունակում է մնալ վճռորոշ:

Միամտություն է կարծել, որ 1921 թվականին պատմական հայկական Սյունիքի մարզի մի մասը Խորհրդային Հայաստանին միացվեց բացառապես Գ. Նժդեհի արժանիքների շնորհիվ, որը

թաթարական զորքերի դեմ հիրավի հերոսական պայքարից հետո Կարմիր բանակի կողմից դուրս մղվեց մարզից և ստիպված եղավ լքել Հայաստանի տարածքը: Սյունիքը ներառող անկախ Հայաստանի նոր սահմանների դասավորությունը լիովին համապատասխանում էր Խորհրդային Ռուսաստանի շահերին: Սա մի ժամանակաշրջան էր, երբ տարածաշրջանում բոլոր վիճելի տարածքային հարցերը լուծվում էին բացառապես սուբյեկտիվ հիմքի վրա կուսակցական մարմնի՝ ՌԿ(բ)Կ ԿԿ կովկասյան բյուրոյի կողմից: Հանրապետություններից ոչ մեկը, չնայած վախվորած բողոքներին, ի վիճակի չէր փոխել նրա որոշումները (օրինակը Լեռնային Ղարաբաղն է): Մեր կարծիքով Գ. Ն.Ժդեհի պայքարը նպաստեց նրա ծածուկ մտադրություններին՝ խոչընդոտելու Ռուսաստանի «քթի տակ» համատարած թյուրքալեզու գոտու ձևավորմանը՝ հյուսիսկովկասյան տարածաշրջան մուտք գործելով:

Ժամանակակից Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում ու ընդհանուր առմամբ նախկին ԽՍՀՄ թյուրքալեզու տարածաշրջաններում, ինչպես նաև երկրում ազգայնական ուժերի ակտիվացումը հաճախ բացահայտում են տարածաշրջանային քաղաքականության այդ դերակատարի իրական մտադրությունները: Թուրք քաղաքական գործիչներից շատերի ձգտումները շարունակում են ընթանալ պանթուրքիզմի հունով, ինչը չի կարող չանհանգստացնել ոչ միայն Ռուսաստանին, այլև Մերձավոր Արևելքի, Հարավային ու Հարավարևելյան Ասիայի մի շարք երկրների: Պետք է մոռանալ, որ երկար տարիներ Թուրքիայում իշխող կուսակցությունը սերտ դաշինքի մեջ էր ազգայնական ուժերի, անգամ «Գորշ գայլեր» արմատական կազմակերպության հետ: Հարկ է նշել, որ Թուրքիայում նման տրամադրությունները, որոնք, ըստ էության, մոտենում են օսմանիզմի գաղափարախոսությանը, ավելի մեծ տարածում են գտնում, երբ դրանց է գումարվում պանիսլամական հատվածը՝ սուննիական կատարմամբ: Նկատելի է նաև Թուրքիայի՝ Մերձավոր Արևելքի պետու-

թյունների վրա ազդեցություն տարածելու ձգտումը: Հասկանալի է, որ հենց այս հանգամանքներն են արդի պայմաններում դառնում հիմնական մարտահրավերները Հայաստանի համար:

Նշված տեսանկյունից Հայաստանի ու Ռուսաստանի քաղաքական շահերը գործնականում նույնական են. երկու դեպքում էլ դրանք կապված են գոյութենական սպառնալիքի հետ նրանց համար: Ուստի տարածաշրջանային քաղաքականության մեջ հայ-ռուսական ձգտումների ընդհանրությունը հասկանալի և բացատրելի է: Հենց այս հարթությունում են հայ-ռուսական հարաբերությունները հանդես գալիս նույն «քաշային կարգում», երբ կողմերից յուրաքանչյուրը հավասարապես մյուսի կարիքն ունի, իսկ երկրի տնտեսական, ռազմական հզորությունն ու չափերը հետին պլան են մղվում:

Ներկայիս իրողությունները գրեթե նման են տարածաշրջանում 100-ամյա վաղեմության իրավիճակին: Քողարկված հակասությունների համապատկերում բավականին հաջող են զարգանում ռուս-թուրքական ու ռուս-ադրբեջանական հարաբերությունները և ոչ միայն տնտեսական ոլորտում: Արևմտյան երկրների կողմից Ռուսաստանի նկատմամբ ուկրաինական ճգնաժամով պայմանավորված բազմաթիվ պատժամիջոցների կիրառումը ստիպել է վերջինիս արմատապես փոխել բազմաթիվ պետությունների հետ տնտեսական հարաբերությունների լոգիստիկան, ինչպես նաև վերանայել բարեկամ երկրների հետ առևտրային հաշվեկշիռը: Այս առումով Ռուսաստանի համար առաջին պլան են եկել հենց Թուրքիան ու Ադրբեջանը:

Նախ ակտիվացել է Թուրքիայի տարածքում գազային հանգույցի ստեղծման ուղղությամբ աշխատանքը, որը կարող է մեծ հնարավորություններ բացել այդ երկրի համար Եվրոպային ոչ միայն Ռուսաստանից, այլև Մերձավոր Արևելքի ու Աֆրիկայի հանքավայրերից ստացվող էներգառեսուրսներով ապահովելու հարցում: Միաժամանակ ընդլայնվել են թուրքական բիզնեսի

հնարավորությունները ռուսական շուկան ինչպես թուրքական, այնպես էլ այլ երկրների արտադրության ապրանքներով հագեցնելու համար: Չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն արևմտյան երկրների, Թուրքիան շարունակում է ակտիվորեն համագործակցել Ռուսաստանի հետ, այդ թվում՝ Ուկրաինայի ճգնաժամի կարգավորման հարցում: Դա հնարավորություն տվեց նրան զգալիորեն ուժեղացնելու իր դիրքերը միջազգային ասպարեզում:

Երկրորդ՝ արդի իրողությունները Ռուսաստանին հարկադրել են բազմազանեցնել տրանսպորտային հոսքերը, այդ թվում՝ Ադրբեջանի հետ: Այդ երկրի և Եվրամիության միջև էներգակիրների մատակարարումները կրկնապատկելու վերաբերյալ պայմանագրեր կնքելուց հետո ակնհայտ դարձավ, որ հեռանկարային ծավալների զգալի մասը կհամալրվի հենց ռուսական ածխաջրածիններով: Բացի դրանից՝ Ադրբեջանը, ինչպես որ Թուրքիան, սկսել է մեծ դեր խաղալ ապրանքների ու ծառայությունների ռուսական շուկայում:

Չպետք է մոռանալ նաև այն մասին, որ ամենատարբեր ոլորտներում, այդ թվում՝ մշակույթի, տնտեսության, ռազմաքաղաքական, երկարամյա համագործակցության շնորհիվ այս երկու պետությունները պաշտոնապես սկսեցին միմյանց անվանել «ռազմավարական գործընկերներ»: Ռուսաստանը Հայաստանի ու Ադրբեջանի հետ փոխհարաբերություններում շրջանառության մեջ է դրել «հավասար հեռավորության» դիվանագիտական տերմինը (հավանաբար ի պատասխան «բազմավեկտորության» հայկական քաղաքականության): Ռուս-ադրբեջանական նմանօրինակ մերձեցման հարցում փոքր դեր չունեն ինչպես Թուրքիան, այնպես էլ Ռուսաստանի հետ բարեկամ Միջին Ասիայի թյուրքալեզու պետությունները:

Հասկանալի է, որ այսօրվա դրությամբ Ռուսաստանի տնտեսական կապերի ընդլայնումը Թուրքիայի ու Ադրբեջանի հետ ան-

նախադեպ է, և դրանից շահում են, իհարկե, բոլոր կողմերը: Այս հանգամանքը չի կարող չազդել պետությունների միջև տարածաշրջանային քաղաքական համագործակցության վրա, որը նախքան ուկրաինական իրադարձություններն էլ բավականին բարձր մակարդակի վրա էր: Բացի դրանից՝ պետք է հաշվի առնել, որ երեք պետությունների նմանօրինակ մերձեցումը, ելնելով Ռուսաստանի վերոնշյալ աշխարհաքաղաքական շահերից, չի կարող վնասել հայ-ռուսական հարաբերությունները, առավել ևս հանգեցնել թյուրքական պետությունների հետ Ռուսաստանի դավադրության՝ ի վնաս Հայաստանի: Անշուշտ, նաև պետք է հաշվի առնել ներկայիս իրողությունները ճիշտ գնահատելու անհրաժեշտությունը հենց հայկական դիվանագիտության կողմից: Չէ՞ որ Հայաստանի առաջին հանրապետության ժամանակների իրադարձությունները, որոնք բավականին նման են մեր ժամանակներին, հակառակն ապացուցեցին: Իրապես շահագրգիռ դաշնակից գտնելու անկարողությունը, որի դեպքում կարելի էր հենվել Հայաստանին շրջապատող երկրների հետ նրա բարիդրացիական հարաբերությունների վրա՝ դրանով իսկ ապահովելով իր անվտանգությունն ու բարեկեցությունը, ժամանակին ճակատագրական դեր խաղաց հայոց պետականության համար:

Պատմությունը ցույց է տվել, որ Հարավային Կովկասում շահերի հավասարակշռությունը պահպանելու համար Ռուսաստանին անհրաժեշտ է երրորդ խաղացող: Ժամանակին Հայաստանում նման դեր էր կատարում Գ. Նժդեհը Սյունիքում, թեև նրա մասնակցության այս համատեքստը հայ պատմաբաններից ու քաղաքագետներից շատերը մերժում են: Այսօրվա իրողություններում տարածաշրջանում խոշոր խաղացող է դառնում Իրանը, որն ընդհուպ մոտեցել է միջուկային զենքի ստեղծմանը: Վերջին հանգամանքը սկսել է խիստ անհանգստացնել Իրանին շրջապատող երկրներին, առաջին հերթին՝ Իսրայելին, որը նույնպես սկսել է ներքաշվել Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական գոր-

ծընթացների մեջ: Մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի 44-օրյա պատերազմից առաջ ու հետո Ադրբեջանին ժամանակակից զինատեսակների ակտիվ մատակարարումը պարզորոշ վկայում է Իսրայելի՝ Իրանի հյուսիսային սահմանների մոտ իր համար պլացդարմ ստեղծելու մտադրության մասին: Հարկ է նշել, որ Ադրբեջանի հետ ռազմատեխնիկական նման համագործակցությունն անմիջականորեն ուղղված չէ Հայաստանի դեմ: Սակայն տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրադրության այն փոփոխությունները, որոնք կարող են հաջորդել Ադրբեջանի զինված ուժերն Իրանի դեմ այս կամ այն կերպ օգտագործելուն կամ նրա տարածքը հարավային հարևանին «զսպելու» նպատակով օգտագործելուն, կարող են աշխարհաքաղաքական լուրջ հետևանքների հանգեցնել ինչպես Հայաստանի ու Իրանի, այնպես էլ Ռուսաստանի համար:

Ինչ վերաբերում է տարածաշրջանում կայունությունը պահպանելու հարցում Իրանի շահագրգռվածությանը, ապա առաջին հերթին դա առնչվում է Հարավային Կովկասի պետությունների միջև սահմանների անփոփոխությանը: Կովկասում քաղաքականության բոլոր սուբյեկտների համար ակնհայտ է դառնում, որ այդ փոփոխությունները կարող են ազդել հատկապես Հայաստանի հարավային մարզերի վրա, որոնք խանգարում են թյուրքական պետությունների ուղիղ հաղորդակցությանը միմյանց միջև: Թուրքիայի Հանրապետության, ինչպես նաև Ադրբեջանի ու Իսրայելի զգալի ակտիվացման պայմաններում նման փոփոխությունները, անշուշտ, կանդրադառնան նաև Իրանի հյուսիսային շրջանների վրա, որոնք հիմնականում բնակեցված են էթնիկ ադրբեջանցիներով (տարբեր գնահատականներով՝ 20-30 մլն): Դրա հետ մեկտեղ տարածաշրջանում ապակայունացումը կարող է հանգեցնել նաև անջատողական տրամադրությունների ակտիվացմանը Իրանի մյուս ժողովուրդների մոտ, որոնք բնակվում են երկրի՝ Պակիստանի (Թուրքիայի դաշնակից) հետ սահմանակից շրջաններում:

Դրանով էլ բացատրվում են Իրանի պաշտոնատար անձանց կոշտ հայտարարությունները տարածաշրջանում սահմանների վերաձևման անընդունելիության մասին, ինչը հերթական անգամ ակներևաբար ի ցույց է դնում Հայաստանի աշխարհագրական դիրքի գործոնը:

Ընդսմին, Իրանն ավելի լայնորեն է ներգրավվում ինչպես համաշխարհային առևտրատնտեսական տարածքում, այնպես էլ Եվրասիական միության գործունեության մեջ, իսկ իր հարավային հարևանի՝ Սաուդյան Արաբիայի հետ (հիշեցնենք, որ Չինաստանի ու Ռուսաստանի միջնորդությամբ նրանց միջև դիվանագիտական հարաբերությունները վերականգնվել են միայն 2023 թվականին) մերձենում է Շանհայի համագործակցության կազմակերպությանը: Թվարկված հանգամանքներն Իրանից պահանջում են ապահովել Հարավային Կովկասով անցնող բոլոր լոգիստիկ շղթաների կայունությունն ու անվտանգությունը հատկապես «Հյուսիս-հարավ» հաղորդակցության համակարգի գործունեության անխափանության առումով:

Թուրք քաղաքական գործիչների հավակնոտ նպատակները, որոնք ուղղված են Միջին ու Մերձավոր Արևելքի, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի երկրներում գերակայություն հաստատելուն, չեն կարող չանհանգստացնել նաև չինացի քաղաքական գործիչներին: Չէ՞ որ մասնավորապես Կենտրոնական Ասիայում Չինաստանը միլիարդավոր դոլարներ է ներդրել, ինչով զգալիորեն ուժեղացրել է իր ազդեցությունը տարածաշրջանի պետությունների վրա: Բացի դրանից՝ Թուրքիան տարածաշրջանում հենվում է իր վաղեմի դաշնակցի՝ Պակիստանի վրա, որի հետ Չինաստանը բարեկամական հարաբերություններ ունի: Սակայն իրավիճակը կարող է էապես փոխվել Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում թուրքական ազդեցության ուժեղացմանը զուգընթաց, ինչը, անշուշտ, կհանգեցնի Չինաստանին տարածաշրջանից դուրսմղման փորձերի: Այս ամենին պետք է հավելել

Թուրքիայի կողմից ուժեղացող աջակցությունը Չինաստանի՝ հիմնականում թյուրքական տարրով բնակեցված Սինցզյան-ույղուրական ինքնավար շրջանում կենտրոնախույս տրամադրությունների տարածմանը: Հասկանալի է, որ այդ գործոնները պետք է լրջորեն մտահոգեն չինական դիվանագիտությանը:

Չինական դիվանագիտությունը, իհարկե, միշտ աչքի է ընկել նրբանկատությամբ ու ճկունությամբ, ինչի շնորհիվ նրան հաջողվել է հարթել այլ երկրների հետ առկա տարաձայնությունները: Մասնավորապես, Թուրքիայի հետ Չինաստանը ներկայումս ընտրել է առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելու ուղին, որը կապված է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» գլոբալ նախագծում այդ երկրին ներգրավելու և նրա տնտեսության մեջ մեծ ներդրումների հետ: Դրա հետ մեկտեղ Չինաստանն անչափ ուժեղացրել է իր ազդեցությունն ու ներկայությունը Թուրքիայի հարևան երկրում՝ Իրանում, որի տարածքով հնարավորություններ են բացվում Պարսից ծոցի ջրային տարածքը վերահսկելու ու հարավից հյուսիս այլընտրանքային տրանսպորտային մայրուղիներ անցկացնելու համար՝ շրջանցելով Թուրքիան: Այս հարցում Չինաստանի աշխարհատնտեսական շահերը լիովին համընկնում են Հնդկաստանի դիրքորոշմանը, որը նույնպես կարևոր դերակատար է դարձել Հարավային Կովկասի տարածաշրջանում:

Հարկ է նշել, որ Հնդկաստանի տնտեսության շոշափելի զարգացումը թույլ է տալիս նրան ավելի ակտիվ դիրք գրավել համաշխարհային գործընթացներում: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության նոր հայեցակարգում այս պետությունը ներկայացված է որպես համաշխարհային ուժային կենտրոններից մեկը: Վերջին տարիներին Հնդկաստանը որոշակի քայլեր է ձեռնարկել Հարավային Կովկասի տարածաշրջանում իր ներկայությունը մեծացնելու ուղղությամբ: Որպես տարածաշրջանի երկրների հետ փոխգործակցության ամրապնդման հիմք՝ նա սկսել է դիտարկել «Հյուսիս-հարավ» տրանս-

պորտային նախագիծը, որը Հնդկաստանին հնարավորություն է տալիս ստեղծելու Հնդկական օվկիանոսի երկրները Եվրոպային կապող լրացուցիչ ու շատ արդյունավետ երթուղի: Սակայն կարծում ենք՝ հարավկովկասյան տարածաշրջանում Հնդկաստանի ակտիվանալու համար կան նաև այլ պատճառներ: Տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ եվրասիական տարածքում պանթուրքիզմի ակտիվացումը նրա համար նշանակում է թշնամաբար տրամադրված հարևանի՝ Պակիստանի ուժեղացում: Վերջինիս դաշնակցային հարաբերությունները թյուրքալեզու երկրների հետ կարող են ուժային բավականին հզոր կենտրոն ձևավորել ասիական մայրցամաքի բուն սրտում, ինչի հետ ստիպված կլինեն հաշվի նստել գործնականում բոլոր երկրները՝ ի վնաս իրենց բազմաթիվ ազգային շահերի: Նրանք կարող են թուրքական ազդեցության տարածման վերոնշյալ բացասական հետևանքները խոչընդոտել՝ «պատմականորեն մշակված միջոց» կիրառելով, այսինքն՝ ուժեղացնելով իրենց ներկայությունը թյուրքական աշխարհի գոտու ամենախոցելի վայրում՝ Հայաստանում: Սա է, մեր կարծիքով, Հարավային Կովկասում հնդկական ներկայության ակտիվացման աշխարհաքաղաքական բաղադրիչը:

Ստամբուլից Ասիայի կենտրոնական շրջաններով մինչև Հյուսիսային սառուցյալ օվկիանոս պանթուրքական գոտու ձևավորման վտանգը չի կարող անտարբեր թողնել նաև եվրոպական երկրներին, հատկապես Արևելյան Եվրոպայի ու Միջերկրական ծովի պետություններին: Այս շրջանների շատ ժողովուրդների պատմական հիշողությունը դեռ թարմ է պատմական տարբեր ժամանակաշրջաններում Եվրոպայի նկատմամբ թուրքական հավակնությունների առումով: Նրանց անմիջական հարևանությամբ թյուրքական պետությունների հզոր միավորման ձևավորումը լուրջ սպառնալիք է ինչպես տնտեսական, ժողովրդագրական, այնպես էլ աշխարհաքաղաքական առումներով:

Արդի փուլում բավականին բարդ հարաբերություններ են ձևավորվել եվրոպական երկրների ու Թուրքիայի միջև, թեև վերջինս նրանցից շատերի հետ ռազմաքաղաքական դաշինքի մեջ է: Եվրամիությանն անդամակցելու հարցի «արհեստական ձգձգումից» դժգոհելու պատրվակով Թուրքիան ԵՄ-ի և նրա մեջ մտնող որոշակի երկրների հետ փոխհարաբերություններում շատ հաճախ դիմում է անթաքույց ճնշումների: Որպես նրանց վրա ազդեցության լծակ օգտագործվում են մի շարք մեխանիզմներ: Դրանց թվին կարելի է դասել Թուրքիայից Եվրոպա երկրի տարածքում պարբերաբար ապաստան գտած Ասիայից ու Աֆրիկայից վերաբնակների «միգրացիոն ալիքների» կազմակերպումը, ճնշումները եվրոպական կառավարությունների վրա տեղի թուրքական համայնքների ակտիվացման միջոցով հատկապես ընտրարշավների ժամանակ, քաղաքական իսլամի օգտագործումը որպես մոբիլիզացիոն ռեսուրս ոչ միայն եվրոպացի թուրքերին, այլև եվրոպական երկրների տարածքում ապրող իսլամական այլ ժողովուրդների ներկայացուցիչներին համախմբելու համար և այլն:

Ճնշման գլխավոր միջոցներից մեկը, բնականաբար, տնտեսաաշխարհագրական գործոնն է: Ներկայումս Թուրքիայի տարածքով (կամ նրա տարածքից դուրս, բայց նրա վերահսկողությամբ) անցնում են տրանսպորտային ու էներգետիկ կարևորագույն հաղորդակցություններ: Չպետք չէ անտեսել նաև Թուրքիայի առևտրային ակտիվությունը եվրոպական շուկայում, որտեղ թուրքական որակյալ ապրանքները համահավասար մրցակցում են չինական արտադրանքի հետ և լիովին ի զորու են դուրս մղել այն շուկայից հատկապես Թուրքիայում ուժեղ գնաճի պայմաններում, երբ թուրքական ապրանքները ևս էժանացել են:

Նշված հանգամանքները, ինչպես նաև Թուրքիայի՝ Եվրոպայում իր քաղաքական ազդեցությունն ուժեղացնելու անթաքույց ձգտումը որոշակի սպառնալիքներ են պարունակում: Սակայն մայրցամաքի երկրների համար դրանք չունեն գոյաբանական

նշանակություն, մանավանդ որ քաղաքական բնույթի ենթադրելի սպառնալիքներից շատերը կարող են սառեցվել կամ չեզոքացվել Հյուսիսատլանտյան դաշինքի շրջանակում: Այնուամենայնիվ, Թուրքիայի հետ հարաբերություններում եվրոպական երկրներն ու պաշտոնյաները շատ հաճախ ստիպված են զգուշավորություն ու հեռատեսություն ցուցաբերել՝ պատրաստ լինելով հետ մղել իրենց հասցեին թուրքական դիվանագիտության հնարավոր «հարձակումները»:

Ինչ վերաբերում է Հյուսիսատլանտյան դաշինքում Թուրքիայի մյուս դաշնակիցներին՝ ԱՄՆ-ին ու Մեծ Բրիտանիային, ապա նրանց համար միանգամայն ընդունելի են իրենց գործընկերոջ պանթուրքիստական ձգտումները: Բանն այն է, որ եվրասիական տարածքում թուրքական ազդեցության տարածմանն առնչվող սպառնալիքները գրեթե լիովին տեղավորվում են նրանց արտաքին քաղաքական ռազմավարություններում, որոնք արտացոլված են այդ երկրների հիմնարար քաղաքական փաստաթղթերի բովանդակության մեջ: Այսպես, օրինակ, Միացյալ Նահանգների ազգային անվտանգության հայեցակարգում որպես հիմնական հակառակորդներ են սահմանվում Ռուսաստանն ու Չինաստանը, որոնց դեմ պայքարում ընդունելի են ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական պայքարի տարբեր եղանակներ: Անգլոսաքսոնական երկու երկրները, օգտագործելով Թուրքիայի վրա ազդեցության տարբեր լծակներ, միանգամայն ունակ են պանթուրքիստական նկրտումներին հաղորդելու հակառուսական ու հակաչինական անհաշտ ուղղվածություն՝ նույնիսկ ի վնաս հենց Թուրքիայի ու թյուրքալեզու այլ պետությունների շահերի: Նմանօրինակ գործողությունների հետևանքով թյուրքական ժողովուրդների համար բավականին գրավիչ պանթուրքիզմի գաղափարախոսությունը կարող է վերածվել ռազմաքաղաքական իրադրության սրման աղբյուրի կենտրոնասիական տարածաշրջանում: Դրա հետ մեկտեղ պանթուրքիստական գործոնը նաև

կարող է օգտագործվել այդ ազդեցիկ համաշխարհային ուժային կենտրոնների կողմից Մեծ Մերձավոր Արևելքի գործնականում բոլոր երկրների ու Կենտրոնական Ասիայի ոչ թյուրքական ժողովուրդների, Ռուսաստանի, Չինաստանի, իսկ լոգիստիկայի առումով՝ նաև Հարավարևելյան Ասիայի պետությունների վրա ճնշում գործադրելու համար: Ակներև է այդ կենտրոնների ձգտումը՝ թույլ չտալ որևէ երկրի լուրջ հզորացում ողջ եվրասիական տարածքում: Իսկ թյուրքալեզու գոտու չափից ավելի ուժեղացման դեպքում, մեր կարծիքով, նրանք կօգտագործեն մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն բուն թյուրքական աշխարհի ներսում դեռևս քողարկված վիճակում գտնվող հակասությունների սրմանը:

Ներկայումս Թուրքիայում գերակշռում է Բրիտանիայի ազդեցությունը, որի համար կան ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ նախադրյալներ: Հայտնի է, որ բրիտանական ֆինանսական կենտրոններն իրենք կամ դաշնակից երկրների բանկերի (օրինակ՝ ԱՄԷ) միջնորդությամբ տասնամյակներ շարունակ օգնություն են ցուցաբերել երկրին նրա ֆինանսական համակարգի կայունությունը պահպանելու գործում: Միևնույն ժամանակ պահպանվում են սերտ շփումները երկու պետությունների հատուկ ծառայությունների միջև, որոնք մեծապես պայմանավորված են Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանի և բրիտանական ՄԻ-6 գաղտնի հետախուզական ծառայության ղեկավար Ռ. Մուրի անձնական փոխհարաբերություններով:

2016 թվականին Թուրքիայում տեղի ունեցած պետական հեղաշրջման փորձից հետո թուրք-ամերիկյան հարաբերությունները մտել են ճգնաժամային փուլ, որը երբեմն հանգեցնում է ԱՄՆ քաղաքականության վերաբերյալ թուրք առաջնորդների կոշտ հայտարարությունների: Հասկանալի է, որ թուրքական դիվանագիտության նման քայլերը հաճախ ուղղված են իրենց երկրի համար քաղաքական ու տնտեսական արտոնություններ կորզելուն, ինչին, որպես կանոն, նրանք գրեթե միշտ հասնում են: Սակայն չնա-

յած դրան՝ երկրի բնակչության շրջանում հակաամերիկյան տրամադրությունները շատ են սաստկացել: Այդ պատճառով նույնիսկ 2023 թվականին՝ Թուրքիայի հարավարևելյան շրջաններում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժերից հետո, երկրի քաղաքացիները ամենայն լրջությամբ էին ընդունում այդ աղետների կազմակերպմանը ԱՄՆ անմիջական մասնակցության գաղափարը՝ Թուրքիային «անկախ» քաղաքականությունից հրաժարվել ստիպելու նպատակով: Այնուամենայնիվ, ներկայումս Թուրքիայի շահերից չի բխում խզել հարաբերությունները ԱՄՆ-ի, որպես հետևանք՝ ՆԱՏՕ-ի հետ: Այն կշարունակի այսուհետ ևս հիմնականում գործել արևմտյան քաղաքականության մայրուղում առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ համընդհանուր միտումները, որոնք ուղղված են բազմաբևեռ աշխարհի հաստատմանը, մոլորակը չեն հասցրել նոր աշխարհակարգի: Դա շատ լավ ընկալում են Արևմուտքում: Հենց այդ պատճառով Թուրքիայի հետ հարաբերությունների հարցերում գլխավոր դերը վերապահվում է այդ երկրում դրական ընկալվող բարեկամական Մեծ Բրիտանիային, որը, ըստ էության, շոշափելի դեր է խաղում Թուրքիայի արտաքին քաղաքականության ռազմավարությունը սահմանելու գործում: Ստանձնելով այս գործառույթը՝ Մեծ Բրիտանիան զգալիորեն ակտիվացել է Հարավային Կովկասի տարածաշրջանում, մասնավորապես Հայաստանում՝ լուծելով նաև արևմտյան երկրների համար կարևոր մեկ այլ խնդիր՝ տարածաշրջանային հարևան Իրանին «զսպելը»:

Մեր կարծիքով Մեծ Բրիտանիայի ծրագրերում ներառված են թյուրքալեզու պետությունների միջև ինտեգրացիոն գործընթացների խթանումը, ընդհուպ միասնական միջպետական քաղաքական միավորման ստեղծումը: Հաշվարկն այն է, որ թուրքական գործոնն օգտագործելու միջոցով զգալիորեն թուլացնեն եվրասիական տարածքի գործնականում բոլոր սուբյեկտներին: Դրա արդյունքում, ամենայն հավանականությամբ, հնարավոր կլինի

կանխել աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական այդ նշանակալի տարածքի բազմաթիվ պետությունների միջև մերձեցման՝ արևմտյան երկրների համար «անընդունելի» գործընթացը, միևնույն ժամանակ պառակտում գցել շատ ժողովուրդների մեջ, ընդհուպ նրանց լիակատար կամ մասնակի անկումը (ինչպես դա տեղի է ունենում Ռուսաստանի հետ հարաբերություններում): Հասկանալի է, որ դրանից հետո էապես կթուլանա նաև մայրցամաքային Եվրոպան: Այդ դեպքում ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան նոր հնարավորություն կստանան մայրցամաքում ուկրաինական ճգնաժամից առաջ, հնարավոր է՝ նաև հետո սասանված ռազմավարական դիրքերը վերականգնելու համար:

Ինչպես տեսնում ենք, Հարավային Կովկասի տարածաշրջանը ներկայումս, ինչպես և հարյուր տարի առաջ, շարունակում է մնալ համաշխարհային ու տարածաշրջանային աշխարհաքաղաքական խաղացողների փոխհակասող և իրարամերժ շահերի միատեղման կենտրոն: Ըստ էության, այս հանգամանքը ստիպում է տարածաշրջանի երկրներին մշտապես մնալ լարված վիճակում՝ պատրաստ լինելով իրավիճակի սրմանը ինչպես բուն տարածաշրջանում, այնպես էլ Մեծ Մերձավոր Արևելքի տարածքում: Լարվածության ցանկացած սրացում այստեղ կարող է պայմանավորված լինել ոչ միայն նրանց միջև առկա տարբեր հակասություններով: Տարածաշրջանի երկրները կարող են արհեստականորեն ներգրավվել լուրջ գործընթացներում եվրասիական աշխարհաքաղաքական ողջ տարածքում՝ ի շահ աշխարհաքաղաքական տարբեր դերակատարների: Ըստ այդմ՝ նրանք պետք է հավասարակշռված մոտեցում ցուցաբերեն բոլոր տեսակի «բարյացակամների» գործողություններին, որոնք կարող են նրանց ներքաշել ի սկզբանե կանխորոշված «արկածախնդրության» մեջ՝ այդ երկրների ժողովուրդների համար անդառնալի հետևանքներով: Ուստի ներկայումս աշխարհում գլոբալ փոփոխությունների պայմաններում Հայաստանը պետք է իրատեսորեն

գնահատի իր դերը տարածաշրջանային գործընթացներում, ինչպես նաև անսխալ ընտրի այն ուժային կենտրոնները, որոնք՝ որպես տարածաշրջանում ակտիվ սուբյեկտ ու գործոն, գործնականում շահագրգռված են իր ամրապնդմամբ:

Պատմաբաններից ու քաղաքագետներից շատերի կարծիքով Հայաստանը աշխարհագրորեն խաչմերուկ է Արևելքի ու Արևմուտքի կամ Հյուսիսի ու Հարավի միջև: Սակայն եթե այս սահմանումը կիրառելի է պատմական Հայաստանի նկատմամբ, ապա ներկայումս նման պնդումը հարիր չէ Հարավային Կովկասում տարածաշրջանային գործընթացներին: Երկրի ներկայիս չափերը թույլ չեն տալիս նրան աշխարհագրական առումով էական դեր խաղալ տարածաշրջանի հաղորդակցության ճարտարապետության մեջ: Ինչպես ցույց է տվել վերջին տասնամյակների փորձը, միմյանց հետ կապեր հաստատելու հարցում Հայաստանի հարևանները լիովին կարող են գլուխ հանել առանց նրա: Ուստի Հայաստանի ներգրավումը տարածաշրջանային հաղորդակցությունների համակարգում սերտորեն շաղկապված է աշխարհաքաղաքական դերակատարների գործողություններին, որոնք իրապես շահագրգռված են տարածաշրջանում Հայաստանի ակտիվացմամբ և, ի վերջո, ամրապնդմամբ: Մեր կարծիքով այս հարցում կարևորագույն դեր է խաղում հենց պատմությամբ սահմանված «հայկական խոչընդոտի» գործոնը երկու հարևան թյուրքական ժողովուրդների միավորման համար:

Տարածաշրջանում հիմնական շահագրգիռ աշխարհաքաղաքական խաղացողները գործում են՝ ելնելով հայ ժողովրդի համար բախտորոշ այս հանգամանքից: Տվյալ դեպքում խոսքն առաջին հերթին Ռուսաստանի ու Իրանի մասին է: Նրանք հասկանում են, որ իրենց ազդեցության կամ ներկայության կորուստը Հայաստանում մեծ հավանականությամբ հղի է վերջինիս սուբյեկտայնության կորստով, ինչը նրանց համար միանգամայն շոշափելի գոյաբանական սպառնալիք կստեղծի: Ուստի Հայաստանն ազ-

գային անվտանգության ապահովման հարցերում, անկախ այդ երկրների իշխանական ինստիտուտների նկատմամբ իր համակրանքից կամ հակակրանքից, պետք է ամուր հենվի նրանց աջակցության վրա՝ հասկանալով կողմերի շահերի ընդհանրությունը Հայաստանի համար կարևորագույն՝ նրա՝ որպես քաղաքական միավորի գոյության հարցում: Սակայն Հայաստանը ևս չպետք է դիվանագիտական կամ այլ սխալ հաշվարկներ թույլ տա նրանց հետ հարաբերություններում, ինչը կարող է հղի լինել իր համար լուրջ հետևանքներով:

Նման բան տեղի է ունեցել, երբ պատմական տարբեր ժամանակաշրջաններում նշյալ աշխարհաքաղաքական դերակատարները երես են թեքել Հայաստանից: Ինչպես վկայում է պատմությունը, այդ պետությունների վերադարձը Հայաստան տեղի է ունեցել, որպես կանոն, երկրում կատարված աղետալի խժդժություններից հետո: Ուստի հայ հետազոտողների կողմից պատմության օբյեկտիվ գնահատումը, Հայաստանի շուրջ աշխարհաքաղաքական իրականության իրատեսական, այլ ոչ թե երևակայական ընկալումը հայ քաղաքական գործիչների ու քաղաքագետների կողմից ներկայումս վճռորոշ նշանակություն ունեն նրա կայուն ապագան ապահովելու գործում:

Ինչպես նշվեց, Հայաստանում իրենց ներկայությամբ պակաս հետաքրքրված չեն նաև այնպիսի երկրներ, ինչպիսիք են Չինաստանն ու Հնդկաստանը: Հարկ է նշել, որ չնայած հզոր տնտեսություն ունենալուն ու միջուկային զենքի տիրապետելուն՝ Հնդկաստանն այսօրվա աշխարհում չի կարող հավակնել ժողովուրդների «ճակատագրեր կերտողի» դերին: Ուստի այն համաշխարհային ուժային կենտրոնների շարքին դասելը աննպատակահարմար ենք համարում: Այդուհանդերձ, այն, անկասկած, մնում է աշխարհաքաղաքական լուրջ խաղացող եվրասիական տարածքում: Աշխարհի այս կամ այն տարածաշրջանում ներկայություն ապահովելու իր մտադրությունները Հնդկաստանն իրա-

կանացնում է հիմնականում տնտեսական լծակների միջոցով (մասնավորապես՝ Հայաստանում): Հենց այս կերպ է նա ձգտում կասեցնել Հարավային Կովկասի տարածաշրջանից բխող սպառնալիքները: Հնդկաստանի հետ պաշտպանական արդյունաբերության ոլորտում Հայաստանի համագործակցությունը որևէ կերպ ինքնըստինքյան չի հանգեցնում ավելի սերտ ռազմական համագործակցության, առավել ևս նրա հետ ռազմական դաշինքի ձևավորման:

Այլ կերպ կարելի է գնահատել Չինաստանի դերը համաշխարհային քաղաքականության մեջ: Վերջին տասնամյակների ընթացքում այս երկրի տնտեսության զարգացման մեծ ցատկն ու մոլորակի բոլոր մայրցամաքների հետ Չինաստանի հսկայական առևտրաշրջանառությունը նրա ղեկավարներին ստիպում են դիմել ավելի ակտիվ, իսկ որոշ դեպքերում՝ էքսպանսիոնիստական արտաքին տնտեսական քաղաքականության: Դրա համար Չինաստանից պահանջվում է յուրացնել իր ապրանքների իրացման նոր շուկաներ, ինչպես նաև ապահովել ազատ և անվտանգ հաղորդակցություններ համաշխարհային տնտեսության սուբյեկտների միջև: Դրանով էլ բացատրվում է Չինաստանի ոչ միայն աշխարհաքաղաքական, այլև ռազմական ակտիվությունը ինչպես ցամաքում, այնպես էլ համաշխարհային օվկիանոսի ջրային տարածքում աշխարհի տարբեր առանցքային կետերում ռազմակայաններ ստեղծելու միջոցով: Աշխարհի տարբեր տարածաշրջաններում տնտեսական ու ռազմական ներկայության աստիճանով Չինաստանը ոչ միայն կարող է մրցակցել համաշխարհային այլ կենտրոնների հետ, այլև շատ առումներով գերազանցում է նրանց:

Հաշվի առնելով Չինաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ աշխարհաքաղաքական շահագրգռվածությունը Հայաստանի հետ փոխհարաբերությունները զարգացնելու հարցում՝ մեր երկիրը պետք է համատեղ նախագծերում ավելի ակտիվորեն ներգրա-

վի աշխարհի երկրորդ տնտեսությունը, միաժամանակ նաև ռազմատեխնիկական համագործակցություն ու ռազմավարական գործընկերություն հաստատի այդ երկրի հետ: Դրա համար հայկական դիվանագիտությունը պետք է օգտվի Չինաստանի հետ Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի սերտ մերձեցումից, որը հայտնվել է արևմտյան երկրների պատժամիջոցային քաղաքականության կիզակետում: Հարկ է նաև նշել, որ Չինաստանը տնտեսապես ու ռազմատեխնիկական առումով արդեն մոտեցել է հարավկովկասյան տարածաշրջանին: Այդ մասին են վկայում Չինաստանի ու Իրանի միջև կնքված խոշորագույն պայմանագրերը (ավելի քան 400 մլրդ դոլարի), որոնք աննախադեպ առևտրաշրջանառություն են ապահովում երկրների միջև: Միևնույն ժամանակ Չինաստանը մեծացնում է նաև իր ռազմական ներկայությունը Պարսից ծոցի ու Հնդկական օվկիանոսի գոտում և, անտարակույս, շահագրգռված է կայունության պահպանմամբ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» գլոբալ նախագծում ներգրավված բոլոր տարածաշրջաններում:

Հայաստանի անկախ գոյության տասնամյակներն արձանագրել են արևմտյան երկրների մեծ ներդրումը ժամանակակից հայոց պետականության կայացման ու ամրապնդման գործում: Առաջին հերթին դա վերաբերում է ժողովրդավարության ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը, օրինականության հաստատմանը, հակակոռուպցիոն ու հակամենաշնորհային օրենսդրության ձևավորմանն ուղղված նյութական և իրավաքաղաքական օժանդակությանը: Սակայն չպետք է անտեսել նաև նրանց վարած քաղաքականության աշխարհաքաղաքական բաղադրիչը: Շատ քաղաքագետների կարծիքով տվյալ դեպքում արևմտյան երկրներն իրենց համար աշխարհաքաղաքական շատ կարևոր նպատակ էին հետապնդում՝ Հայաստանը դուրս բերել Ռուսաստանի ազդեցությունից, դրանով իսկ վերջինիս ամբողջովին դուրս մղել տարածաշրջանից: Ներկայումս,

չնայած Ադրբեջանի հետ գործընկերային փոխհարաբերություններին ու Վրաստանի հետ «անբարյացակամ չեզոքությանը», Ռուսաստանը հարավկովկասյան տարածաշրջանում ունի լոկ մեկ դաշնակից: Հասկանալի է, թե հետագայում ինչ ճակատագիր է սպասվում նրան, եթե Հայաստանը հրաժարվի նրա հետ դաշնակցային հարաբերություններից:

Տարածաշրջանի մյուս երկու պետությունների հետ հարաբերություններում արևմտյան երկրները, ըստ էության, նրանց Ռուսաստանից «պոկելու» խնդիր չունեն: Վրաստանը անկախության առաջին տարիներից միանշանակ ընտրել է զարգացման արևմտյան ուղղվածությունը, իսկ Ադրբեջանը պետականության ստեղծման ժամանակներից գործնականում միահյուսվել է «եղբայրական» Թուրքիային, որը ՆԱՏՕ-ի դաշինքում արևմտյան երկրների դաշնակիցն է: Արևմտյան պետությունների հետաքրքրությունն այդ երկրների նկատմամբ պայմանավորված է Ռուսաստանի հետ նրանց չափից շատ մերձեցման արգելմամբ, ինչպես նաև Եվրոպա էներգառեսուրսների տեղափոխման կարգավորմամբ (որպես ռուսական էներգառեսուրսների այլընտրանք) կամ էլ սևծովյան-կասպյան տարածաշրջանում դիրքերի ամրապնդմամբ: Հայկական դիվանագիտությունը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունները խզելու իրենց նպատակներին հասնելուց հետո արևմտյան երկրները տարածաշրջանում կայունությունը պահպանելու դրդապատճառներ չեն ունենա: Ընդ որում՝ արևմտյան ուժային կենտրոններում, մեր կարծիքով, պետք է գերակշռի «պանթուրքիստական» ալիքն ավելի Արևելք՝ դեպի մյուս մրցակիցներն ու հակառակորդներն ուղղելու ձգտումը:

Հայաստանը, ինչպես հայտնի է, ինտեգրված է ԵԱՏՄ-ին՝ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով իրեն ավելի մոտ միավորմանը, որտեղ նրա համար լայն հնարավորություններ են բացվել երկրում արտադրված ապրանքների իրացման եվրասիա-

կան շուկան յուրացնելու համար, ինչին շատ դժվար է հասնել արևմտյան ուղղությամբ: Հնարավորություններ կան ԵԱՏՄ-ի միջոցով եվրասիական ինտեգրացիոն այլ նախագծերում ներգրավվելու համար: Մեր կարծիքով աշխարհատնտեսական առումով Հայաստանը պետք է նաև ավելի ակտիվ ամրապնդեր Հյուսիսային հաղորդակցային ուղղությունը: Հենց այս ուղղությամբ են մեծ հեռանկարներ բացվում՝ երկիրը կարևոր կապող օղակ դարձնելու, ինչը զգալիորեն կբարձրացնի Հայաստանի նշանակությունը գործառնական առումով: Առավել ևս, որ հաղորդակցային այդ ուղու մեկ այլ օղակում՝ Վրաստանում, աճում է մտահոգությունը երկրում թուրք-ադրբեջանական ներկայության աննախադեպ ակտիվացման կապակցությամբ: Վերջինս, ինչպես և Հայաստանը, պետք է շահագրգռված լինի «Հյուսիս-հարավ» հաղորդակցության համակարգի ձևավորմամբ լայն իմաստով՝ ներգրավելով հնդկական, չինական և, հնարավոր է, իրանական ու ռուսական կապիտալը:

Այսպիսով, Հայաստանի՝ պատմությամբ սահմանված աշխարհաքաղաքական գործոնը Հարավային Կովկասի տարածաշրջանում շարունակում է էական դեր խաղալ տարածաշրջանի երկրների հետ փոխհարաբերություններում առաջատար համաշխարհային կենտրոնների առաջնահերթությունների ձևավորման գործում, ինչը չի կարող չանդրադառնալ հարավկովկասյան ժողովուրդների ճակատագրերի վրա: Հարցը միայն այն է, թե արդյոք տարածաշրջանի պետությունները, առաջին հերթին՝ Հայաստանը, համապատասխան դասեր քաղելով պատմությունից, կկարողանան ճիշտ կառուցել իրենց արտաքին քաղաքական առաջնահերթությունները և գրագետ օգտագործել օբյեկտիվորեն ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացներն ի շահ, այլ ոչ թե ի վնաս իրենց:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման գործընթացը փոքր պետություններին ստիպում է առավել զգուշությամբ գործել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գերակայությունները որոշելիս: Արտաքին վտանգների չեզոքացումը մեծապես նպաստում է ազգի ֆիզիկական գոյության, որոշ առումով՝ նաև բարեկեցության ապահովմանը: Ինչ վերաբերում է ներքին սպառնալիքներին, ապա գոյաբանական կարևորագույն խնդիր է ազգային մշակույթի ու ինքնության պահպանումը, որոնք փոքրաթիվ ժողովուրդների համար հակասություններով լի գլոբալ աշխարհում մեծապես վտանգվում են: Ուստի այդ ժողովուրդները պետք է աշխատեն զերծ պահել հասարակությունը արտաքին ուժերի կողմից սերմանվող ու ազգային դիմագծերը չեզոքացնող արժեհամակարգերի ազդեցությունից:

Իրենց պատմական հայրենիքում դեռևս անհիշելի ժամանակներից բնակվելը հայերին պատվել է ոչ միայն երբեմնի մեծ ու հզոր պետական կազմավորումներով, այլև պետականության բացակայության և օտար կեղեքումների պայմաններում ուղեկցել է անհավանական տառապանքներով ու զրկանքներով: Սա հնարավորություն է տալիս դատելու հայ ազգի արժանի գոյության և գոյատևման եզակի երևույթի մասին: Հայկական հողի վրա իշխած ուժերի՝ Աքեմենյան Պարսկաստանի, Հռոմի, Բյուզանդիայի, Սասանյան Պարսկաստանի, Արաբական խալիֆայության, սելջուկ-թուրքերի, մոնղոլների, թեմուրյանների, Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի թվարկումները միայն սարսափ են առաջացնում ոչ միայն արևելյան, այլև եվրոպական շատ երկրների ժողովուրդների մոտ: Անցնել բոլոր այս դժվարություններով՝ չդադարելով երազել սեփական պետության մասին, ոչ

շատ ժողովուրդների է հաջողվել: Հայերն ու հրեաները, որոնք կարողացել են ոչ միայն վերստեղծել, այլև ամրացնել, զինել և ընդարձակել իրենց երկրները, բացառություն են: Սրան միայն հնարավոր չէ հասնել ֆիզիկական կամ ֆինանսական ռեսուրսների միջոցով, քանի որ ազգերի այսպիսի «գոյատևման» համար պահանջվում են ավելի զորեղ գործոններ, ինչպիսիք են ժողովրդի հոգևորության բարձր աստիճանը, որը դրսևորվում է հիմնականում կրոնին հավատարիմ մնալու մեջ, և զարգացած ինքնագիտակցությունը, որը ձևավորվում է քաղաքական ինքնորոշման ցանկությանը զուգահեռ: Այս հանգամանքների առկայությունը թույլ է տվել հայերին, չնայած գործնականում ուժային ու նյութական միջոցների բացակայությանը, երբեմն նույնիսկ հայրենի հողում ազգային փոքրամասնություն լինելով, ոչ միայն գոյատևել երկար ժամանակահատված, այլև ուժ գտնել ազգային վերածնունդ ապահովելու համար:

Նշված գործոնները սերտորեն պայմանավորված են ազգերի ինքնանույնականացման գործընթացով: Վերջինս, ելնելով պատմական մի շարք հանգամանքներից, հայերի, ինչպես նաև հրեաների մոտ սկսել է շատ ավելի վաղ, քան շատ այլ ժողովուրդների մոտ, ինչը հակասում է այսօր գերակշռող տեսակետին, ըստ որի՝ ժողովուրդների մոտ ազգային գիտակցությունը ձևավորվել է արդյունաբերության զարգացման ժամանակաշրջանում՝ հասարակական կյանքի ավանդական ձևերը հաղթահարելուց հետո: Մինչդեռ, ըստ որոշ հետազոտողների, այս երկու ժողովուրդների մոտ ազգային ինքնագիտակցությունը ձևավորվել է արդյունաբերական հասարակության առաջացումից շատ առաջ:

Ինքնագիտակցության ձևավորման ակունքները պայմանավորված են այլ սուբյեկտների հետ տվյալ սուբյեկտի հասարակական-քաղաքական ակտիվ հաղորդակցությամբ ու սոցիալ-քաղաքական շփումներով: Նման գործընթացներ տեղի էին ունենում հայ հասարակության միջավայրում պետականության հաստատ-

ման ժամանակաշրջաններում՝ սկսած Ք.ա. 9-րդ դարից: Այս շրջանում ձեռք բերված փորձի հիման վրա սկսում է գործել հասարակական-քաղաքական համեմատության օրենքը՝ աստիճանաբար հանգեցնելով ինքնագիտակցության այս կամ այն բաղադրիչների ձևավորմանը: Զարգացած ինքնագիտակցության շնորհիվ ազգն ունակ է վերացարկվելու իրականությունից, առանձնացնելու իրեն՝ որպես հասարակական-քաղաքական գործունեության սուբյեկտի: Որևէ սոցիալական հանրույթի զարգացած ինքնագիտակցության մասին փաստում է դրա այնպիսի ձևերի առկայությունը, ինչպիսիք են քաղաքական փիլիսոփայությունը, բարոյագիտությունն ու գեղագիտությունը, իրավունքի փիլիսոփայությունը և այլն: Հայ ժողովրդի օրինակով կարելի է համոզվել, որ այս ուղղություններն արդեն իսկ V դարում զարգացման բարձր մակարդակի էին հասել: Բացի դրանից՝ ազգային ինքնագիտակցության զարգացման համար խթան հանդիսացավ երբեմնի հզոր պետականության թուլացումը, այնուհետև՝ կորուստը, ինչը ստիպեց ակտիվացնել ժողովրդի պատմական հիշողությունը և կրկին իմաստավորել պետականությունը վերստեղծելու ցանկությունը: Ըստ մեծ պատմագիր Մ. Խորենացու՝ որպես աշխարհի ամենահին ու քաղաքակիրթ ժողովուրդներից մեկը, ով մարդկության պատմության արշալույսին ազատություն է նվաճել և պետականություն կերտել, հայ ժողովուրդն ունի ինքնիշխանության բնական իրավունք և արժանի է գոյության որպես ինքնիշխան ժողովուրդ[74]:

Հայ ժողովրդի մոտ ինքնորոշման, ինքնանույնականացման գործընթացը շատ հակասական, երբեմն էլ ցավոտ է ընթացել: Իրավիճակը սրվեց, երբ III դարից սկսած՝ իրենց համար ռազմավարական նշանակություն ունեցող Հայաստանում գերիշխելու համար երկու հարևան հզոր տերությունների (Հռոմի ու Սասա-

[74] Տե՛ս **Мовсес Хоренаци**, История Армении, Пер. с древнеарм. Г. Саркисяна, Ер., 1990, էջ 108:

նյան Պարսկաստանի) առճակատումը, ֆեոդալիզմի արմատավորումն ու դրան հաջորդող մասնատումն ու հայոց իշխանների (նախարարների) ընդվզումները սասանեցին պետականության հիմքերը: Արտաքին ագրեսիան զսպելու ունակ միակ իրական ուժը ազգային միասնությունն էր, որին հնարավոր էր հասնել համազգային շահերը պաշտպանող մեկ միասնական գաղափարի միջոցով:

Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունումը տեսական-գաղափարական նախադրյալներ ստեղծեց թե՛ Իրանից, թե՛ այն ժամանակվա հեթանոս Հռոմից գաղափարապես առանձնանալու համար: Հայաստանի քրիստոնեացումը նպատակ ուներ ամրապնդելու խարխլվող պետական ամբողջականությունը մեկ գաղափարական հիմքի վրա՝ պահպանելով հայության ազգային ինքնությունը թշնամական միջավայրում:

Հայաստանում քաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց 387 թվականին՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև երկրի բաժանումից հետո: Թագավորությունը Արևելյան Հայաստանում գոյություն է ունեցել մինչև 428 թվականը, սակայն պետականությունը կորցնելու վտանգը դրանից շատ առաջ արդեն իրականություն էր: Կենտրոնական իշխանության ամրապնդմանն առնչվող խնդիրներն իրենց տեղը զիջել էին ավելի անլուծելի ու ճակատագրական խնդրի՝ ազգային գոյության պահպանմանը, որն ավելի սրվեց դրսից աճող կրոնագաղափարական էքսպանսիայով: Պարսկաստանն ու քրիստոնեական Բյուզանդիան վերսկսեցին գաղափարական և կրոնական ուծացման քաղաքականությունը, առաջին հերթին՝ լեզվական ոլորտում: Միայն յուրահատուկ ու անկրկնելի ազգային գրերի ստեղծումը կարող էր ամրապնդել հայ եկեղեցու դիրքերը:

Մ. Մաշտոցի ստեղծած այբուբենը չի կարող համեմատվել գործածված այբուբեններից որևէ մեկի հետ ոչ՛ բովանդակությամբ, ոչ՛ հնչողությամբ, ոչ՛ գրերի ձևով, ոչ՛ էլ թվային արժեքնե-

րով: Նա համադրել է այբուբենի և գրի կառուցման տարբեր սկզբունքներ՝ ստեղծելով որակապես նոր այբուբեն: Հայ գրերի գյուտը հզոր հիմք ստեղծեց հոգևոր ու մշակութային ինքնության ձևավորման, դրա միջոցով՝ «ազգային կամ պետական անկախության պահպանման կամ վերականգնման» պայքարը ծավալելու համար[75]: Պատմամշակութային այս իրադարձությունը, ըստ էության, թելադրված էր եկեղեցու ու կրոնի պահանջներով, սակայն, վերջին հաշվով, այն ենթարկվում էր ազգային շահերին:

Այբուբենի ստեղծմամբ քրիստոնեությունը պատմական կարճ ժամանակահատվածում դարձավ գերիշխող ազգային կրոն, իսկ եկեղեցին վերածվեց ազգային շահերի արտահայտողի ու պաշտպանի: Արդյունքում հայ ժողովրդի հետագա պայքարը հանուն հավատքի ու քրիստոնեական եկեղեցու իրավամբ նույնացվեց ազգային ինքնորոշման և քաղաքական անկախության համար մղվող պայքարի հետ:

Այսպիսով, ընդունելով քրիստոնեությունն ու հայտնագործելով սեփական գրերը՝ հայ ժողովուրդը փորձում էր դիմակայել ժամանակի մարտահրավերներին, Հայաստանը՝ որպես առանձին քաղաքակրթական կենտրոն՝ պահպանել ոչ միայն իր ֆիզիկական գոյությունը, այլև իր հոգևորությունն ու ինքնատիպությունը:

Այսպիսով, նշված ժամանակներից ի վեր սահմանվել է հայերի հոգևոր զարգացման առանձնահատուկ ուղղությունը, որը թույլ է տալիս նրանց ոչ միայն չեզոքացնել արտաքին սպառնալիքները, այլև նախադրյալներ ստեղծել մշակութային աննախադեպ զարգացման համար, ինչը տեղի ունեցավ V դարում՝ նման ճակատագրական որոշումներից հետո:

Հենց այդ ժամանակաշրջանից ի վեր առաջին պլան մղվեց Հայաստանի աշխարհագրական դիրքի բացառիկությունը երկու՝ արևմտյան ու արևելյան քաղաքակրթությունների հատման կե-

---

[75] Տե՛ս **Արևշատյան Ս.,** Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում (V-VI դդ.), Եր., 1973, էջ 65:

տում՝ սրելով քաղաքական իրավիճակն ու ստիպելով բազմաթիվ հասարակական գործիչների սկսել հայ ժողովրդի հետագա գոյության համար օպտիմալ ուղիների որոնումը: Ժամանակի ողբերգությունն այն էր, որ երկու քաղաքակրթությունների ջրբաժանը անցնում էր ոչ միայն հայ ժողովրդի հոգևոր, այլ նաև ֆիզիկական ոլորտում, ինչի պատճառով էլ սկսեցին խորանալ արևմտահայերի ու արևելահայերի միջև տարաձայնությունները:

Այստեղ հարկ է որոշակիորեն հստակեցնել մեր վերաբերմունքը քաղաքակրթությունների դասակարգմանը: Ներկայումս առավել ընդունված է Ս. Հանթինգթոնի[76] ու Ա. Թոյնբիի[77] քաղաքակրթությունների տիպաբանությունը: Սակայն, եթե դիտարկենք քաղաքակրթությունների զարգացման գործընթացը հատկապես հայ ժողովրդի ներկայացուցիչների աչքերով, ապա կարող ենք փաստել, որ ճակատագրական ընտրությունը, մեծ հաշվով, միշտ կանգ է առել մշակութային և քաղաքակրթական երկու հիմնական՝ արևմտյան ու արևելյան համակարգերի միջև:

Իր գոյության վճռորոշ ժամանակաշրջաններում հայ ժողովուրդը, ի դեմս իր մտավոր շրջանակների ներկայացուցիչների, հավատարիմ է մնացել զարգացման առանձնահատուկ ուղու գաղափարին, որը ևս մեկ անգամ հաստատվել է արդեն VI դարում Դվինի երկու եկեղեցական ժողովներում: Դժվար է գերագնահատել այս ժողովների քաղաքական նշանակությունը, որոնք, տարանջատվելով թե՛ բյուզանդական-ուղղափառ, թե՛ սիրիական քրիստոնեական եկեղեցիներից, թույլ տվեցին, որ հայ եկեղեցին հավատարիմ մնա վաղ քրիստոնեության սկզբունքներին: Այսպիսով, վերջակետ դրվեց հայ ազգի զարգացման ուրույն ու ինքնատիպ ուղու փնտրտուքներին: Արդյունքում հայ ժողովրդի պատմության միջնադարյան շրջանը երկու անգամ նշանավորվեց պետականության ստեղծմամբ՝ Բագրատունյաց ու Կիլիկիայի հայ-

---

[76] Տե՛ս **Хантингтон С.,** Столкновение цивилизаций, М., 2005, էջ 35:
[77] Տե՛ս **Тойнби А.,** Постижение истории. Сборник, М., 1996, էջ 25:

կական թագավորությամբ, ինչպես նաև թույլ տվեց, որ հայ ժողովուրդը պահպանի իր ազգային ինքնությունը և չենթարկվի ուծացման:

Սրան զուգահեռ հայ ժողովուրդը, երկար ժամանակ քաղաքականապես և տնտեսապես բաժանված լինելով սկզբունքորեն քաղաքակրթական տարբեր չափանիշներով ղեկավարվող պետությունների միջև, ստիպված էր հարմարվել իր պատմական հայրենիքում տիրող մշակույթների կենցաղին, սովորույթներին ու ավանդույթներին: Այս հանգամանքն էլ իր ուրույն հետքն է թողել հայ ժողովրդի հոգևոր զարգացման մեջ: Մասնավորապես, հայերի մշակութային կյանքում, հոգևոր զարգացման առանձնահատուկ ուղուն հավատարիմ մնալու և իրենց ավանդական բնավորությունը պահպանելու ցանկությանը զուգընթաց, ի հայտ եկավ մշակութային այլ արժեքներ ընկալելու միտում, ինչը պայմանավորված էր հայերին խորթ այլ ժողովուրդների հասարակություններում համակեցության անհրաժեշտությամբ:

Հայկական բնակչության մեծ մասը բյուզանդական տիրապետության գրեթե հազարամյա ժամանակահատվածում գտնվել է արևմտյան քաղաքակրթության ազդեցության տակ: Արևմտահայերն աշխարհին տվել են փիլիսոփայական, իրավական և քաղաքական մտքի բազմաթիվ կարկառուն ներկայացուցիչներ: Բնական գիտությունների բնագավառի հայ գիտնականները քայլել են ժամանակին համընթաց, երբեմն նույնիսկ առաջ են անցել իրենց գործընկերներից թե՛ Արևմուտքում, թե՛ Արևելքում: Ընդհանրապես, եթե փորձենք ընդհանուր գնահատական տալ այս ժամանակաշրջանի հայ ժողովրդի կյանքի մտավոր ոլորտին, ապա կարող ենք վստահորեն արձանագրել, որ հայ հոգևոր մշակույթն իր զարգացման ընթացքում անցել է այնպիսի փուլերով, որոնք էապես համընկնում են հիմնականում արևմտյան մշակույթի ու քաղաքական, փիլիսոփայական մտքի զարգացման շրջաններին: Սրանում է հայկական մշակույթի, իսկ ավելի կոնկրետ՝ հայ ազ-

գային ինքնության ընդհանրությունը արևմտյան քաղաքակրթության հետ:

Ինչ վերաբերում է հայերի մշակույթի մեջ առկա կենցաղային գիտակցությանն ու բովանդակությանը, ապա սրա վրա ամենից շատ ազդել է արևելյան քաղաքակրթությունը: Այս միտումը զգալիորեն աճեց Բյուզանդական կայսրության փլուզումից հետո, երբ ողջ հայ բնակչությունն անցավ իրար հաջորդող իսլամական պետությունների տիրապետության տակ: Նրանց տիրապետության ժամանակաշրջանը, բնականաբար, չէր կարող հետք չթողնել հայերի սոցիալական հոգեբանության վրա:

Հայ ժողովրդի մշակութային զարգացման մեջ առաջացավ որոշակի անհամապատասխանություն (երբեմն երկակիություն), որն էլ իր հերթին հանգեցրեց, այսպես կոչված, «էլիտար» մշակույթի աստիճանական տարանջատմանը «առօրեականից»: Առաջինը շարունակեց իր զարգացումը արևմտյան քաղաքակրթության համատեքստում այն դեպքում, երբ երկրորդը կլանեց արևելյան մշակույթի տարրերը: Այդպիսի բախտի են արժանանում այն ժողովուրդները, որոնք կորցնում են իրենց երբեմնի մեծությունն ու պետականությունները, սեփական ազգային համայնքում ապրելու հնարավորությունը:

Այսպիսով, հայ ժողովրդի հոգևոր կյանքում պատմականորեն հակասություն առաջացավ բազմակողմ հայկական մշակույթի տարբեր հատվածների միջև, որն իր հերթին համապատասխան ճկունություն հաղորդեց հայ ազգի գոյությանը: Արևելյան մշակույթի տարրերը խորապես ներթափանցեցին հայ ժողովրդի սոցիալական հոգեբանության մեջ, մինչդեռ շարունակեց հոգևոր զարգացման ուղեցույց լինել արևմտյան մշակույթը: Մշակութային և քաղաքակրթական հատվածում հասարակական գիտակցության, ինչպես նաև հայության քաղաքական ինքնագիտակցության մեջ ի հայտ եկավ այնպիսի թվացյալ փոխբացառող որակների միահյուսում, որոնք են, մի կողմից, ազատասիրությունը, ան-

հատապաշտությունը, ստեղծագործական նախաձեռնությունը, ռացիոնալիզմն ու ձեռնարկատիրությունը, հանդուրժողականությունը և այլ ազգերի ներկայացուցիչների հետ շփվելու կարողությունը, մյուս կողմից՝ ավանդականությունը, հավատարմությունը հոգևոր արժեքներին, իռացիոնալ զգացմունքային վարքագիծը, ընտանեկան սովորույթների առաջնահերթությունը, կոլեկտիվիզմը, տոհմական հարաբերությունները, ինչպես նաև հավատարմությունը եկեղեցու դոգմաներին:

Իրավիճակն արմատապես փոխվեց, երբ XVIII դարի սկզբից Ռուսական կայսրությունը հայտարարեց Կովկասյան տարածաշրջանում իր հավակնությունների մասին: Այն ժամանակ Պետրոս Առաջինի բարեփոխումներին ենթարկվող Ռուսաստանն արդեն ինքն իրեն հռչակեց որպես եվրոպական հզոր տերություն: Աստիճանաբար անցյալ էր դառնում հին Ռուսաստանին բնորոշ կենսակերպը: Ռուսաստանը գրավեց բազմաթիվ ստրկացած ժողովուրդների, այդ թվում՝ հայերի ուշադրությունը արևմտյան հասարակություններում տիրող հումանիստական իդեալներին ու արժեքներին, վարչական ու տնտեսական նոր կառուցվածքին միանալու իր ցանկությամբ: Այդ ժամանակ Ռուսաստանն այլևս հետամնաց արևելյան բռնապետություն չէր: Գոնե արտաքին չափանիշներով այն ձգտում էր մոտենալ Արևմուտքում տիրապետող եվրոպական նորմերին:

Զարմանալի չէ, որ բազմաթիվ հայ մտածողներ, ինչպես նաև մտավոր շրջանակների այլ ներկայացուցիչներ իրենց հիմնավորումներում ավելի ու ավելի են կապում հայ ժողովրդի հոգևոր վերածննդի խնդիրը Կովկասում Ռուսաստանի արտաքին քաղաքականության ակտիվացման հետ: Դա վերաբերում էր ոչ այնքան մարդկանց ֆիզիկական գոյության խնդիրներին, որքան սոցիալական բարեկեցիկ միջավայրում հոգևոր ու մշակութային զարգացման հեռանկարներին:

Ի վերջո, ռուս հասարակությունը հայերին գրավեց ոչ միայն այն պատճառով, որ հագեցված էր քրիստոնեական նորմերով, այլ նաև նրանով, որ ապահովում էր հայ ժողովրդի կապը ավելի սերտ ու ընկալելի արևմտյան մշակութային ավանդույթների հետ, որոնք շեշտադրվում էին նաև հենց Ռուսաստանում: Ուստի հայ ժողովրդի ինքնագիտակցությունն ուղղված էր առաջին հերթին դեպի Ռուսաստան:

Ժամանակակից Ռուսաստանը, չնայած միջազգային հարաբերությունների անբարենպաստ մթնոլորտին, մերժելով նեոազատական բազմաթիվ արժեքներ, հավատարիմ է մնում ավանդական հիմնարար սկզբունքներին: Դրանցից շատերը բնորոշ են նաև դասական լիբերալիզմին, արևմտյան արժեհամակարգի այն սկզբունքներին, որոնք պահանջված են շատ փոխակերպվող հասարակությունների կողմից: Այս հանգամանքը համընկնում է հայ ժողովրդի հոգևոր զարգացման ընդհանուր միտմանը:

Միևնույն ժամանակ Ռուսաստանը հանդուրժողական է իր երկրի ժողովուրդների մշակութային, ազգային առանձնահատկությունների դրսևորման ու ավանդույթների նկատմամբ, որոնց մեծ մասը պատկանում է արևելյան մշակույթին: Այս հանգամանքը ռուս բազմազգ հասարակության առօրյան դարձնում է խորապես հասկանալի ու հայությանը մոտ: Ռուսաստանի հասարակական կյանքում առկա միտումների պահպանումը, անկասկած, հուսալի հիմքեր կստեղծի երկու ժողովուրդների հետագա մերձեցման համար: Դրա հիմքում ընկած է ինչպես հայ ժողովրդի յուրահատկությունն ու ինքնատիպությունը պահպանելու անհրաժեշտությունը, այնպես էլ արևմտյան ավանդական ազատական ժողովրդավարական քաղաքակրթական համակարգին ու արժեքներին առնչվելու դարավոր միտումը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ինչպես երևում է վերոշարադրյալից, գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման ներկա գործընթացը շատ, այդ թվում՝ ամենազարգացած երկրների վրա բավականին հակասական, երբեմն ցավոտ ազդեցություն է թողնում: Սա, առաջին հերթին, վերաբերում է ոչ ուժեղ պետություններին ու փոքր ազգերին, որոնք ի վիճակի չեն որևէ կերպ ազդել համաշխարհային նշանակության իրադարձությունների վրա: Նման համընդհանուր փոփոխությունները կարող են հսկայական վնաս հասցնել ոչ միայն նրանց տնտեսություններին կամ խարխլել հասարակական-քաղաքական համակարգը, այլև լուրջ հարված հասցնել վերջիններիս ազգային անվտանգության համակարգին: Փոքր ժողովուրդների համար իրավիճակը կարող է զգալիորեն սրվել իրենց հիմնարար շահերի հստակ գիտակցման, դրան առնչվող ազգային զարգացման հեռանկարների տեսլականի, ինչպես նաև ընդունելի արտաքին քաղաքականության ուղենիշների ոչ հստակ ընկալման պայմաններում:

Տարբեր ժողովուրդների մոտ նման հատկանիշների առկայությունն ուղղակիորեն կապված է ազգային ինքնագիտակցության բարձր մակարդակի հետ, որն ի վիճակի է ապահովել, որ ժողովուրդները գիտակցեն իրենց ինքնությունը: Այս գործոնը, անշուշտ, որոշիչ նշանակություն ունի միջազգային հանրության կողմից տվյալ ազգին որպես համաշխարհային գործերում լիարժեք սուբյեկտի ընկալման հարցում: Այս դեպքում նման ազգերի համար հնարավորություն կա առնվազն տարածաշրջանային մակարդակում որոշակիորեն ազդելու իրենց ազգային շահերը ուղղակիորեն շոշափող քաղաքական գործընթացների վրա: Ինչ վե-

բաբերում է գլոբալ զարգացման հարացույցի կերպափոխման գործընթացներում անմիջականորեն ներգրավված համաշխարհային ուժային կենտրոններին, ապա նրանք հակված են «նկատելու» միայն այն ժողովուրդների շահերը, որոնք գործնականում ապացուցել են իրենց կենսական շահերի հստակ ըմբռնումն ու բոլոր միջոցներով դրանք պաշտպանելու իրենց հանձնառությունը: Նման նպատակներ է հետապնդում հասարակական կյանքի այնպիսի երևույթ, ինչպիսին ազգային գաղափարախոսությունն է: Այն անքակտելիորեն կապված է կոնկրետ ազգային համայնքի հոգևոր կյանքի այնպիսի բաղադրիչների հետ, ինչպիսիք են ինքնագիտակցության ձևավորումն ու ազգայնականության դրսևորումը:

Ազգային զգացումներն ու մտադրությունները, որոնք իրացվում են ազգային գիտակցության մեջ ու վարքագծում, ըստ էության, նշանակում են ազգային ինքնանույնականացում և, իրոք, կատարում են պատմական առաքելություն յուրաքանչյուր ժողովրդի կյանքում՝ նպաստելով ազգային մշակույթի, ազգային լեզվի զարգացմանը, նախնիների սովորույթների ու ավանդույթների պահպանմանը: Ազգային գիտակցությունը մշակում է ազգային արժեքները, խթանում ներուժն ու ինքնազարգացման աղբյուրները: Պարզունակ դատողությունները միայն խանգարում են ընկալելու ազգային «ես»-ի դրսևորման էությունը, յուրաքանչյուր ժողովրդի հայրենասիրական զգացմունքները՝ գտնելու այն սահմանագիծը, որը թույլ կտա ամբողջովին զատել ռացիոնալ բովանդակությունը դրա աղավաղումից:

Ռուս հետազոտող Ի. Ն. Տիմոֆեևը ընդգծում է ազգային ինքնագիտակցության բացառիկ դերը քաղաքական նույնականացման բուն գործընթացում: Քաղաքական նույնականությունը, ըստ նրա, քաղաքական սկզբունքների հանրագումարն է, որն օգնում է ազգին որոշելու իր տեղը հանրույթում: Այդ ֆենոմենը ներառում է այն պատկերացումները, որոնք հաստատում են ազգի կամ պե-

տության անկրկնելի բնույթը, պատկերացումները քաղաքական հանրույթի անցյալի, պատմական իրադարձությունների մասին, որոնք նշանակալի են քաղաքացիների համար ու կարևոր իրենց քաղաքական ընդհանրությունը գիտակցելու առումով: Հեղինակն արդարացիորեն նշում է, որ քաղաքական նույնականությունը առավելապես հանդես է գալիս որպես քաղաքական և մտավոր ընտրանիների կառուցակցման օբյեկտ, այլ ոչ թե ինքնըստինքյան է ձևավորվում[78]:

Ազգի նույնականացման գործընթացի ծավալումն ու ազգային ինքնագիտակցության ձևավորումը իրենց դրսևորումն են ստանում ազգայնականության տեսքով: Ձևավորվելով որպես համակողմանի ու ազգային ընդհանրության մեջ առավել տարածված գաղափարական համակարգ՝ այն արտացոլում է ժամանակակից բոլոր ազգային ձգտումներն ու իղձերը: Ազգայնականությունը չի կենտրոնանում համամարդկային ընդհանուր արժեքների վրա, իր հայեցակարգային հիմքում չի պարունակում գաղափարախոսություններին հատուկ անդրազգային մեկնաբանություններ, այլ առավելապես գոյություն ունի որպես ազգային քաղաքական գործողությունների համապարփակ ծրագիր: Ազգայնականությունը աչքի է ընկնում նաև միլիոնավոր մարդկանց համար իր հսկայական ձգողական ուժով՝ հաճախ մղելով զոհելու ամեն ինչ, նույնիսկ սեփական կյանքը:

Ազգայնականության համախմբող ներուժով է պայմանավորված հասարակագետների սևեռուն ուշադրությունը հասարակական կյանքի այդ երևույթի նկատմամբ: Այդ երևույթը ուսումնասիրող բազմաթիվ հետազոտողներ նշում են դրա բարդությունը և որակում ազգայնականությունը որպես «ծայրաստիճան ոչ միանշանակ ու հակասական քաղաքական երևույթ»:

---

[78] Տե՛ս **Тимофеев И.,** Российская политическая идентичность сквозь призму интерпретации истории // Вестник МГИМО Университет, 2010, № 3, էջ 51-52:

Որոշ հետազոտողներ ձգտում են խորը ներթափանցել այդ երևույթի էության մեջ և դիտարկում են այն հոգեղենության ու զգացականության տեսանկյունից, ինչը մատնանշում է հասարակական գիտակցության մեջ ազգայնականության հատուկ տեղը և նրա դերը ազգային նույնականության արտահայտման մեջ: Այսպես, ըստ ամերիկացի հետազոտող Հանս Կոնի՝ ազգայնականությունը «առաջին հերթին և գլխավորապես մտքի վիճակ է, կամային գործողություն, որն ավելի ու ավելի բնորոշ է դառնում մարդկությանը»: Նրա կարծիքով «մարդու մտավոր կյանքը միևնույն չափով պայմանավորված է նրա անհատական և խմբային գիտակցությամբ: Երկուսն էլ մտքի բարդ վիճակ են, որոնց կարելի է հասնել մեր ես-ի ու շրջապատող աշխարհի, մեր ու արտաքին խմբի տարբերակմամբ ու հակադրմամբ»[79]:

Մոտավորապես նույն դիտանկյունից է քննում ազգայնականությունը ամերիկացի հետազոտող Կարլ Դոյչը: Ինչպես Հանս Կոնը, նա ևս ազգայնականությունը համարում է մտավիճակ, «որը սոցիալական հաղորդակցության ժամանակ որոշումներ կայացնելիս առանձնահատուկ նշանակություն է տալիս «ազգային» հաղորդագրություններին, հիշողություններին ու կերպարներին»: Ազգայնականը, ըստ Կ. Դոյչի, նախընտրում է ավելի մեծ ուշադրություն հատկացնել այն հաղորդագրությունների ընդունմանն ու փոխանցմանը, որոնք պարունակում են ազգության յուրահատուկ խորհրդանշաններ, բխում են կոնկրետ ազգային աղբյուրից կամ արտահայտվում են լեզվի և մշակույթի յուրահատուկ ազգային կոդով[80]:

Ազգայնականության զգացական կողմն է մատնանշում հայտնի ամերիկյան հետազոտող Բոյդ Շեյֆերը, որն ազգայնականությունը համարում է զգացում, որը միավորում է իրական կամ

---

[79] Տե՛ս **Кон Г.,** Природа национализма // Этнос и политика: Хрестоматия. Авт.-сост. А. А. Празаускас, М.: Изд-во УРАО, 2000, էջ 109:

[80] Տե՛ս **Дойч К.,** Нация и мир // Этнос и политика: Хрестоматия. Авт.-сост. А. А. Празаускас, էջ 111:

երևակայական ընդհանուր պատմական փորձի տիրապետող մարդկանց մի խմբի, որն ունի ընդհանուր ձգտում ապագայում ապրելու միասին իբրև առանձին խումբ[81]:

Ինչպես տեսնում ենք, ազգայնականությունը բնութագրելու հարցում նշված գիտնականները թափանցում են հանրության գիտակցության խորին շերտերը, որոնցում ազգայնականությունը «հարաբերվում է» ազգային գիտակցության երևույթին: Անձը, գիտակցելով իրեն իբրև ազգի մասնիկ, իրենն է համարում իր երկրի պատմությունն ու ազգային արժեքները՝ կրոնը, դպրությունը, ազգային լեզուն, հոգևոր մշակույթի նվաճումները, ազգի ներդրումը համաշխարհային մշակույթում և այլն: Ազգայնականության՝ որպես հասարակական երևույթի ելակետը ազգային գիտակցությունն է, այսինքն՝ սեփական ազգային «ես»-ի գիտակցումը:

Ազգայնականությունը անհրաժեշտ հող է նախապատրաստում ազգային գաղափարախոսության ձևավորման համար: Այն հանդես է գալիս որպես քաղաքական դոկտրին, որը պահանջում է գաղափարական «արդարացում» և հիմնավորում, ինչն էլ իրականացվում է գաղափարախոսության միջոցով: Ազգային գաղափարախոսությունը, ինչպես որ ազգայնականությունը, նպատակաուղղված է ազգի քաղաքական ինքնորոշման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Սա է երկու երևույթների հիմնական նմանությունը: Սեփական գաղափարախոսություն ունենալիս ազգային շարժումը զգալիորեն հեշտ ու արագ է հաջողում ազգային-քաղաքական համախմբման գործընթացը, և այն հաճախ դրա անհրաժեշտ նախադրյալն է: Գաղափարախոսությունն օգնում է ուրվագծելու և որոշելու ազգային ինքնության քաղաքականացման ոլորտի շրջանակները, ամրապնդելու ազգային պահանջները բարոյական հիմնավորմամբ, հաղորդելու շարժման քաղաքական գործունեությանը իմաստ ու նպատակ, որոնք առանձնակի նշանակություն են ձեռք բերում շատ ավելի, քան

[81] Տե՛ս **Дойч К.**, նշվ. աշխ., էջ 136:

առօրյա գոյության պահանջմունքները: Ընդհանուր առմամբ, ազգային գաղափարախոսությունը կոչված է համոզմունքներ ձևավորելու տվյալ ազգային հանրույթի ներկայացուցիչների շրջանում և կողմնորոշելու նրանց սոցիալ-քաղաքական տարածքում:

Հարկ է նաև նշել, որ ազգայնականության ու ազգային գաղափարախոսության միջև կա որոշակի տարբերություն, որը դրսևորվում է այդ երևույթների թե՛ բովանդակային, թե՛ գործառական հասկացությամբ: Դրանցից առաջինը թեև «իմաստավորված», բայցևայնպես քաղաքական գործողություն է, երկրորդը՝ այդ գործողության հայեցակարգային-տեսական հիմնավորումը: Ազգային գաղափարախոսությունը ազգայնականության, ազգային-հայրենասիրական զգացմունքների և տվյալ ազգի ներկայացուցիչների քաղաքական գործողությունների ձգտման յուրատեսակ արձագանքն է: Ազգայնականությունը դրսևորվում է հիմնականում ազգի գիտակցության մակարդակում, մինչդեռ ազգային գաղափարախոսությունը՝ ինքնագիտակցության մակարդակում:

Միևնույն ժամանակ այս երևույթները սերտորեն փոխկապակցված են և ազդում են միմյանց վրա: Այսպես, ազգային գաղափարախոսությունը ձևավորվում է ազգայնականության հիման վրա և միաժամանակ «ուղղորդում» այն: Ազգայնականությունն ու ազգային գաղափարախոսությունը համագոյակցում են այնպես, ինչպես դա տեղի է ունենում առհասարակ քաղաքական պրակտիկայի և գաղափարախոսության միջև: Չնայած նրան, որ դրանք օժտված են որոշակի ինքնուրույնությամբ, ո՛չ քաղաքականությունը, ո՛չ էլ գաղափարախոսությունը ի վիճակի չեն տարանջատ գոյություն ունենալ: Ազգայնականությունն ու ազգային գաղափարախոսությունը, լինելով տարբեր մակարդակների երևույթներ, սոցիալական իրավիճակի փոփոխությունների դեպքում կարող են որոշակիորեն ճշգրտվել: Սակայն դա չի նշանակում, որ այդ երևույթների փոխհարստացման գործընթացը դադարում է: Ընդհակառակը, նրանք շարունակում են փոխգործակցել և կա-

տարելագործվել՝ հարմարվելով շրջակա հասարակական-քաղաքական իրականությանը, դրա արդիական խնդիրներին:

Ազգի գաղափարախոսության ու քաղաքականացման միջոցով ազգային առանձնահատկությունների սրբագործումից սկիզբ առնող շարժումը դեպի այն կրողների համախմբումը գլխավորապես ազգային ընտրանիների (էլիտաների) գործունեության արդյունք է և հիմնականում դրսևորվում է սոցիալական սթրեսների ու միջխմբային մրցակցության սրման ժամանակաշրջաններում: Նման իրավիճակներում ազգային առաջնորդներին շատ հեշտությամբ հաջողվում է համոզել իրենց ազգային հանրույթի ներկայացուցիչներին՝ տեսնելու իրենց ճակատագիրը ազգային կատեգորիաներում (այլ ոչ թե անհատական կամ սոցիալ-դասակարգային): Առաջնորդները ձգտում են համոզել զանգվածներին, որ առանց ազգային համերաշխության, նրանց յուրահատուկ խմբային արժեքներն ու շահերը, ինչպես նաև անձնական ձգտումները, կհայտնվեն լուրջ սպառնալիքի առջև:

Ինտելեկտուալ ընտրանին գաղափարապես ակտիվանում է նաև այն դեպքում, երբ դրսից պարտադրվում են տվյալ ազգին ոչ բնորոշ գաղափարական կարծրատիպեր: Սակայն համաշխարհայնացման պայմաններում ազգային ընտրանին պարտավոր է ուշադիր հետազոտել «պարտադրվող» արժեքները՝ ոչ թե դրանց հակասականությունը «հիմնավորելու», այլ այդ արժեհամակարգի օգտակար դրական տարրերը բացահայտելու համար: Արևմտյան երկրներում դարերով իրենց կենսունակությունն ապացուցած արժեքների, ինչպես նաև դրանց կիրառման նկատմամբ ստեղծագործական մոտեցման արդյունքում միայն հաշվի առնելով նաև ազգի շահերն ու ավանդույթները՝ հնարավոր կլինի ապահովել ազգային առաջընթացի կայունությունը:

Ազգային գաղափարախոսության էությունը, կառուցվածքը, ձևավորման ու զարգացման փուլերը, ինչպես նաև դրա գործառության եղանակներն ու ձևերը անմիջականորեն ու ամբողջովին

կապված են ավանդական մշակույթի հետ: Պատմական փորձը, կենսակերպը, ավանդույթներն ու սովորույթները, որոնք կրում է այս մշակույթը, հասարակության անդամների փոխհարաբերությունների հիմնական կարգավորիչներն են: Իսկ ժողովրդի ավանդական մշակույթն ինքը գործում է հասարակական տարբեր ինստիտուտների միջոցով, որոնք լիովին ու ամբողջապես կախված են հասարակության սոցիալական կազմակերպման առանձնահատկություններից:

Ազգային գաղափարախոսության մեջ, արժեքներից զատ, սերտորեն միահյուսվում են ազգի զգացմունքներն ու սպասումները, հոգևորը պահպանելու ու հետագա գոյության հնարավորությունների վերաբերյալ նրա աշխարհընկալումը: Ազգային գաղափարախոսության գործառության վրա հզոր ազդեցություն ունեն կրոնական արժեքները, ավելի ստույգ՝ դրանց արմատավորումը ազգային ինքնագիտակցության մեջ: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ ազգային գաղափարախոսությունը ազգային ինքնության կարևոր գործոն է, ազգային ինքնագիտակցության բարձրագույն ձև և որոշակի պատմական պայմաններում գոյություն ունեցող մեկ միասնական կենսունակ ամբողջականության մեջ ազգի ներկայացուցիչներին ինտեգրելու միջոց:

Ըստ տարբեր հետազոտողների՝ ազգային գաղափարախոսությունը կատարում է էթնոքաղաքական համախմբման գործընթացի համար սկզբունքորեն մի շարք կարևոր գործառույթներ: Նախ այն ձևակերպված համոզմունքների համակարգայնացված հավաքածու է, որը սահմանում է հավաքական ինքնությունը, ընդգծում խմբի անդամների շահերի ընդհանրությունը, ինչպես նաև մատնանշում այն սուբյեկտներին, որոնք մարտահրավեր են նետում ազգին կամ խոչընդոտում նրա օրինական իրավունքների իրականացումը: Ազգային շարժումների գաղափարախոսները, որպես կանոն, շեշտում են խմբի բոլոր անդամների շահերի ընդհանրությունը, հետևաբար նրանց մտքերի ու գործողությունների

միասնության անհրաժեշտությունը: Ընդ որում՝ ազգի ներսում առկա սոցիալական տարբերությունները անէանում են խմբի բոլոր անդամների կողմից ընկալվող ընդհանուր սպառնալիքի ու նրանց ճակատագրերի ընդհանրության մասին պատկերացումների առջև: Երկրորդ՝ ազգային գաղափարախոսությունը բացատրում և արդարացնում է շարժման անհրաժեշտությունը, հիմնավորում է շարժման կողմից իրականացվող քաղաքական պայքարի նշանակությունը՝ մեկնաբանելով դրան մասնակցելը որպես ազգային արժեք: Երրորդ՝ ազգային գաղափարախոսությունը սահմանում է շարժման գործունեության հաջող վերջնարդյունքի տեսլականը, որն արդարացնում է դրան մասնակցելու գինը: Չորրորդ՝ ազգային գաղափարախոսության արտաքին գործառույթը շարժման որոշակի պատկերը ստեղծելն ու դրա պահանջները կողմնակի սուբյեկտների, այդ թվում՝ օտարերկրյա լսարանի վրա արտածելն է:

Որևէ հայեցակարգ չի կարող պարտադրվել սոցիալական իրականությանը. այն պետք է բխի հասարակական-քաղաքական իրական գործընթացների խորը, համապարփակ ու համակարգային ուսումնասիրության արդյունքներից: Յուրաքանչյուր ազգ յուրովի է հասնում «համամարդկային» արժեքներին, և հազիվ թե ճիշտ է արհեստականորեն խցկել նրան որոշակի շրջանակներում: Այս առումով ազգային ու սոցիալական զարգացման այս կամ այն «համաշխարհային մոդելը» համարել միակ ճիշտը, մեր կարծիքով, տեղին չէ:

Ո՛չ վերակառուցման տարիները, ո՛չ էլ Ղարաբաղյան շարժումը, հագեցած լինելով իրականության նկատմամբ նոր մոտեցումներով, այնուամենայնիվ չհանգեցրին արժեքային վերակողմնորոշման ու նոր արժեքների ձևավորման: Այս առումով կարևոր նշանակություն ունեին նախ ազգային-քաղաքական մշակույթի ու մտածողության, ազգային-պատմական ու ազգային-արժեքային ստեղծագործության կայուն ավանդույթների բացակայությունը, երկրորդ՝ բուռն ու նաև որոշակի իմաստով կործանարար գործըն-

թացների հետևանքով հասարակական և քաղաքական գիտակցության մեջ առաջացած դատարկությունը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում, ինչպես և հետխորհրդային շատ երկրներում, ծավալվել էր սոցիալական տարբեր շերտերի ու խմբերի սոցիալ-քաղաքական և արժեքային ապակողմնորոշման գործընթաց: Երկրում հաստատվել էր մի իրավիճակ, որին, ըստ փիլիսոփա Գ. Սողոմոնյանի, բնութագրական էր «սոցիալական զուգահեռների» սկզբունքը: «Անորոշ հավասարակշռության» պայմաններում անցումային հայ հասարակության մեջ զուգահեռաբար գործում էին երկու արժեհամակարգեր՝ հին ու նոր[82]:

Տևական ժամանակահատվածում ձևավորվելով ոչ միայն գիտակցության, այլև ենթագիտակցության մակարդակներում՝ արժեքային կողմնորոշումների ոլորտը հասարակական վերափոխումների փուլում համեմատաբար քիչ է ենթարկվում արմատական տեղաշարժերի: Սակայն «հին» արժեհամակարգը, ինչպես և շատ այլ երևույթներ, նոր պայմաններում «չաշխատեցին»: Հասարակության մեջ առաջացավ նոր արժեհամակարգի ձևավորման անհրաժեշտություն, ինչն առաջին հերթին պետք է իրականացնեին մտավորականության ներկայացուցիչները: Սակայն վերջիններս օբյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք պատճառներով իրենց ավանդական դիրքերը զիջեցին հասարակական այլ խմբերի և պասիվ դիրք գրավեցին: Այդ ընթացքում նորահայտ ուժերը՝ գործարար մարդկանց և ձեռներեցների խավը, քաղաքական կուսակցությունները, հասարակական ու կրոնական կազմակերպությունները սկսեցին առաջադրել արժեքային համակարգերի իրենց չափանիշները, որոնք աստիճանաբար ներդրվեցին հասարակական և ազգային գիտակցության մեջ՝ ձեռք բերելով սոցիալական նորմերի նշանակություն: Արդյունքում խորհրդային «մե-

[82] Տե՛ս **Սողոմոնյան Գ.,** Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները, Եր., ԵՊՀ, 2005, էջ 43:

նարժեք» համակարգի փոխարեն սկսեց ստեղծվել «բազմարժեք» համակարգ, որի տարրերը թեև նախկինում գոյություն ունեին, սակայն ինքնաբավ չէին: Այդուհանդերձ, մեր կարծիքով, նոր արժեհամակարգ մշակողը պետք է լինի հենց հայ մտավորականությունը: Նա պետք է տեսական-մեթոդաբանական և գաղափարական-քաղաքական տեսանկյուններից իմաստավորի նոր արժեքային համակարգին անցումը, համապարփակ կերպով վերլուծի դա և բացահայտի տարբեր սոցիալական խմբերի տեղն ու դերը դրա ստեղծման գործում: Միայն այդպիսի արժեքային համակարգի կայացումից հետո հնարավոր կլինի ձևավորել ժամանակակից ազգային գաղափարախոսություն, քանզի առանց արժեքային կողմնորոշման ցանկացած գաղափարախոսություն կորցնում է իր իմաստը: Այս առումով ներկայումս Հայաստանում ստեղծված իրավիճակը կարելի է բնութագրել որպես «մտքերի ներքին խմորում» կամ, ըստ Կ. Միրումյանի, «որպես որոնումների, սկզբունքների և իրական կենսական պահանջմունքների բախման, ընդունված արժեքային ուղենիշների կործանման, փշրման գործընթաց, որի ընթացքում ի հայտ են գալիս, նշմարվում գործունեության վարքի, կենսակերպի, բարոյական և մասնագիտական արժեքների նոր ուղենիշների ու սկզբունքների, նորմերի ու չափանիշների ծիլերը»[83]:

Հազարամյակների ընթացքում ստեղծված պատմամշակութային, հոգևոր, բարոյահոգեբանական ավանդույթներն ու արժեքները պահանջում են համապատասխան իմաստավորում և ժամանակակից գիտելիքների համակարգում դրանց ընդգրկում, նորմերի հաստատում, գաղափարական-տեսական ու մշակութային-հոգևոր հզոր հենքի ստեղծում ազգի հետագա զարգացման համար:

---

[83] Տե՛ս **Мирумян К.,** О природе национальной интеллигенции и ее задачах. Опыт историко-теоретического анализа, Ер.: Изд-во «Гаяне», 1995, էջ 38:

Ըստ էության, հասարակությունը կանգնած է ոչ միայն ազգային գաղափարախոսություն ստեղծելու, այլև համաշխարհային հանրության առջև արդեն նոր՝ որպես քաղաքականապես ինքնորոշված հանրույթի կարգավիճակով հանդես եկող ազգի ինքնագիտակցությունը «սրբագրելու» անհրաժեշտության առջև: Հայաստանի ժողովուրդը, ինչպես և բազմաթիվ այլ երկրներում ապրող բոլոր հայերը, պետք է գիտակցեն ու իմաստավորեն պետականության ստեղծման փաստը և դրանից բխող բոլոր նոր հանգամանքները: Ազգային ինքնագիտակցության այսպիսի փոխակերպման գործընթացի ավարտը, որը բնավ էլ քիչ կապ չունի նոր արժեքային համակարգի ձևավորման հետ, պարարտ հող կստեղծի ինքնագիտակցության ավելի բարձր մակարդակի վրա գտնվող երևույթի՝ ազգային գաղափարախոսության առաջացման համար:

Համապատասխան գաղափարախոսությունն անհրաժեշտ է աշխարհի բոլոր հայերի հոգևոր, լեզվական ու գաղափարական միասնության համար: Այն ստեղծելու գործին պարտավոր են մասնակցել թե՛ պետական կառույցները, թե՛ քաղաքական և հասարակական բոլոր կազմակերպությունները, ներառյալ ընդդիմությունը: Սակայն, ի վերջո, ազգային գաղափարախոսության ստեղծող կարող է դառնալ միայն ազգային մտավորականությունը, որի դիրքերի ամրապնդմամբ պետք է շահագրգռված լինեն հասարակական-քաղաքական բոլոր կառույցները:

Հասարակական գիտակցության մեջ առանձին ազգային գաղափարների առկայությունը, դրանց մեխանիկական գումարումը առիթ չեն տալիս հաստատելու ազգային գաղափարախոսության առկայությունը: Վերջինս պետք է ունենա կանոնակարգված գաղափարական-քաղաքական հայեցակարգի ձև, որը ծրագրային բնույթի է: Նման գաղափարական համակարգի մշակումը պահանջում է պատմական անցյալի և արդիականության համակողմանի ու մանրակրկիտ ուսումնասիրություն և վերլուծություն,

անցյալի հոգևոր փորձի տեսական իմաստավորում ազգային-քաղաքական ժամանակակից խնդիրների դիտանկյունից: Այսպիսի մոտեցում չորդեգրելը հասարակության քաղաքական ուժերի և առհասարակ քաղաքական գիտության մեծ բացթողումն է:

Ներկայումս Հայաստանում արդիական է ազգային ու պետական գաղափարախոսությունների հարաբերակցության հարցը: Այս հիմնախնդիրը հասարակության բոլոր քաղաքական ուժերի տեսադաշտում է: Ազգային գաղափարախոսությունը կարող է «սպառել» իրեն այն դեպքում, երբ ազգը նույնացվում է հասարակությանը, կամ այդ երկու համակարգերը համընկնում են «ծավալով» (բայց ոչ բովանդակությամբ): Հայ ժողովրդի պատմության օրինակով կարելի է համոզվել, որ մարդկության պատմության մեջ լինում են դեպքեր, երբ դիտվում է այս երկու երևույթների ակնհայտ անհամապատասխանություն (թեկուզ և ծավալով): Չէ՞ որ հայության միայն մեկ երրորդին է հաջողվել վերակերտել պետականությունն իր պատմական հայրենիքի մի փոքր հատվածում: Մյուս կողմից՝ ազգային պետության կազմավորմամբ, բնականաբար, «ազգայինը» երկրորդ պլան է մղվում՝ տեղը զիջելով «հասարակականին»: Սա հատկապես արդիական է Հայաստանի պարագայում, որտեղ բնակչության մեծամասնությունը հայտնվել է սոցիալ-տնտեսական, կենցաղային ու հոգեբանական ծանր վիճակում: Այս մասին են վկայում Հայաստանում անցկացված հասարակական կարծիքի բազմաթիվ հարցումները, որոնք վեր են հանում հայերի գերակշիռ մասի առաջնահերթությունները հասարակական կյանքում: Այդպիսի առաջնահերթություններից Հայաստանի քաղաքացիների մեծ մասը նշում է սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարումը: Բնականաբար, այս հանգամանքները քաղաքական կյանքից շեշտադրումները փոքր-ինչ «տեղափոխել» են սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ, գուցե նույնիսկ ի վնաս հոգևոր-ազգային խնդիրների: Սակայն հասարակության մեջ ճգնաժամային երևույթները հաղթա-

հարելուն զուգահեռ կմեծանա «ելման դիրքին» վերադառնալու հավանականությունը:

Ընդհանուր առմամբ, ազգի ու հասարակության նույնացումը գործնականում նշանակում է, որ անկախության հռչակմամբ ազգային խնդիրները համարվում են լուծված, իսկ պահանջմունքները՝ իրագործված: Այս տրամաբանությամբ նման պայմաններում ազգային գաղափարախոսությունը կորցնում է իր արդիականությունը, իսկ դրանից հետևում է, որ ազգն այլևս չունի համազգային շահեր. դրանք փոխարինվում են պետական-հասարակական շահերով: Իսկ եթե ընդունենք այս տեսակետը, ապա ստացվում է, որ հայ ազգի երկու երրորդը ինքնաբերաբար դուրս է մնում համազգային գործընթացից: Հասկանալի է, թե ազգի գաղափարական-քաղաքական միասնության առումով ինչ բացասական հետևանքների կարող է հանգեցնել այս մոտեցումը:

Ազգային գաղափարախոսությունը կարող է արդյունավետ գործել նաև այն դեպքում, երբ չնայած պետական գաղափարախոսության գոյությանը՝ այն ուղղված է հիմնականում զուտ սոցիալ-տնտեսական և ընդհանուր քաղաքական խնդիրների լուծմանը: Սակայն, ընդհանուր առմամբ, պետական ու ազգային գաղափարախոսությունները դրսևորվում են տարբեր մակարդակներում և չեն կարող ո՛չ նույնացվել, ո՛չ էլ, առավել ևս, հակադրվել: Այս տեսանկյունից քննադատության չի դիմանում հետազոտողներից շատերի կողմից ընդունված այն մոտեցումը, ըստ որի՝ ազգային գաղափարախոսությունը ռազմավարություն է, իսկ պետական գաղափարախոսությունը՝ մարտավարություն: Երկու գաղափարախոսություններն էլ, այսպես թե այնպես, կոչված են իմաստավորելու հայ ազգի առջև ծառացած թե՛ ռազմավարական, թե՛ մարտավարական խնդիրները:

Ցավոք, ներկայումս Հայաստանում դեռևս բացակայում է համակարգված պետական գաղափարախոսությունը, սաղմնային վիճակում է ազգային գաղափարախոսության մշակման

գործընթացը: Այս առումով դրանք գտնվում են ձևավորման մոտավորապես նույն փուլում: Սակայն դա չի նշանակում, որ երկրում քաղաքական գործունեությունը տեղի է ունենում առանց գաղափարական ուղենիշների առկայության: Ազգային գաղափարախոսության առաջացումը չի հակասում պետական գաղափարախոսության կայացման գործընթացին: Այստեղ հնարավոր է երկու տարբերակ. 1) ազգային գաղափարախոսության մշակումը նախորդում է պետականին և հիմք դառնում՝ դրան ազգային բովանդակություն հաղորդելու համար, 2) ենթադրում է այնպիսի պետական գաղափարախոսության ստեղծում, որը կներառի ազգային գաղափարախոսության հիմնական դրույթները, ավելի ստույգ՝ համազգային խնդիրների լուծման հիմնական ուղիներն ու ծրագրային ուղենիշները:

Անկախ այն բանից, թե նշված տարբերակներից որը կարող է «աշխատել», ակներև է պետական գաղափարախոսության վճռորոշ դերը, որը ցանկացած պետական համակարգի անհրաժեշտ ատրիբուտ է և զգալի չափով հարստացնում ու որոշակիացնում է ազգային գաղափարախոսությունը: Ազգային գաղափարախոսությունը կատարում է գործառույթներ, որոնք բնորոշ են ցանկացած գաղափարախոսության: Այն պետք է ընդգրկի հայերի կենսագործունեության այն գործնական ոլորտները, որտեղ զգացվում է դրա «կարիքը»: Իսկ ազգային գաղափարախոսություն ունենալու անհրաժեշտությունը ծագում է ինչպես հայ ժողովրդի պետականություն ձեռք բերած հատվածում, այնպես էլ Հայաստանից դուրս՝ հայկական սփյուռքում:

Պետականության գոյության պայմաններում ցանկացած քաղաքական կուսակցություն ակամա հետապնդում է գլխավորապես կուսակցական նպատակներ: Մյուս խնդիրները, այդ թվում՝ նաև ազգային, բնականաբար, երկրորդ պլան են մղվում կամ ենթարկվում կուսակցական շահերին, համապատասխանեցվում դրանց: Գործնականում դա հանգեցնում է դրանց նույնացմանը,

ինչի հետևանքով կուսակցական շահերը շատ հաճախ մատուցվում են որպես ազգային: Նման մանիպուլյացիաները, անկախ նրանից՝ կատարվում են գիտակցաբար, թե անգիտակցաբար, սովորաբար ուղեկցվում են տվյալ քաղաքական կուսակցության ազգային բնույթի վկայակոչմամբ: Կուսակցությունները կարող են ազգային համարվել միայն կանոնավորապես մշակված ազգային գաղափարախոսության և ծրագրի առկայության դեպքում: Ընդ որում՝ պետականության գոյության գործոնը պետք է լինի ելակետային ու որոշիչ, այլ ոչ թե վերջնական, ինչն իրավաչափ էր հայ ժողովրդի պատմության նախորդ փուլերի համար:

Ոչ պակաս չափով կարևորվել է նաև մեկ այլ գաղափար՝ արդի մարտահրավերներին դիմակայելու ունակ ուժեղ պետության կառուցումը: Պետությունը որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վերջնական նպատակին հասնելու միջոց դիտարկելը ներկա փուլում կորցնում է իր արդիականությունը: Հայերի ժամանակակից ազգային գաղափարախոսությունը նպատակաուղղված է պետականության սոցիալ-տնտեսական և քաղաքական համակողմանի զարգացմանը, ինչը թույլ կտա Հայաստանին արժանի տեղ զբաղեցնել համաշխարհային հանրության մեջ:

Նշված հանգամանքն այլևս թույլ չի տալիս հայկական պետությունը դիտարկել միաժամանակ որպես ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի և՛ նպատակ, և՛ միջոց, այսինքն՝ ազգային գաղափարախոսության առանցքային տարր: Պետության կազմավորումը, թեկուզ և հայ ժողովրդի պատմական հայրենիքի մի փոքր հատվածում, ստիպում է այդ գործոնի քննությունը տեղափոխել այլ հարթություն: Ազգային գաղափարախոսության արդիական դրույթներ են դառնում այն գաղափարները, որոնք հայ ժողովրդին շնորհում են աշխարհի հնագույն քաղաքակրթություններից մեկի կրողի կարգավիճակ: Դրանով իսկ տեղի է ունենում ազգային արժեհամակարգի յուրատեսակ փոխակերպում՝

«բացասականից» «դրականի»: Հայ ժողովուրդն արդեն ներկայանում է ոչ թե որպես մշտական փորձությունների ենթարկվող և տարբեր «պատասխան» քայլերի պատրաստ, այլ իբրև բնականոն քաղաքական վիճակի հասած ազգ, որը ձգտում է գիտակցել մարդկության զարգացման գործում իր դրական դերը: Նա պետք է գնահատի այն արժեքավորը, որը կարող է տալ աշխարհին, և փոխարենը ստանա ազգերի հանրակցության համարժեք վերաբերմունքը: Ազգային գաղափարախոսության նման ուղղվածությունը թույլ է տալիս համախմբել ոչ միայն ՀՀ քաղաքացիներին, այլև աշխարհի այլ երկրներում ապրող բոլոր հայերին:

Հայոց ազգային նոր գաղափարախոսության ձևավորման տեսական հիմք կարող են դառնալ հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր ներկայացուցիչների առաջ քաշած տարբեր հայեցակարգերը: Դրանք կարող են օգտագործվել ժամանակակից մտավորականության ներկայացուցիչների կողմից՝ ազգային ապագա գաղափարախոսության հիմքում դրվելիք համազգային գաղափարներ ձևակերպելու համար: Պետք է վեր հանել այն կենսական (իրական, այլ ոչ թե երևակայական) խնդիրները, որոնք ունակ են համախմբելու հայ ազգի բոլոր ներկայացուցիչներին (հասարակ քաղաքացիներին, Սփյուռքին, իշխանությանն ու ընդդիմությանը): Դրանք լուծելու անհրաժեշտության մասին գաղափարները պետք է խորը թափանցեն հայերի գիտակցության մեջ, հասնեն ազգային հոգեբանության խորքային շերտերին և ընդհուպ զանգվածային ու կենցաղային գիտակցությանը: Միայն գաղափարների նման կերպով ներթափանցումը հասարակական գիտակցության մեջ, որի դեպքում հայերի բոլոր ձգտումները կենթարկվեն ճակատագրական խնդիրների լուծմանը, կվկայի ազգային գաղափարախոսության հիմնադրույթների ձևավորման մասին:

Նշված խնդրի լուծման համար վերջին շրջանում ավելի ու ավելի մեծ թվով հայ հետազոտողներ են անդրադառնում Գ. Նժդե-

հի առաջ քաշած հայեցադրույթներին: Նժդեհի ազգային զարգացման հայեցակարգի հիմնական դրույթները հանգում են հայերի (հատկապես երիտասարդության) գիտակցության մեջ ազգի ուժի և հերոսության հանդեպ հավատի հաստատմանը, իր ժողովրդի համար արժանապատվության ու հպարտության զգացմանը, պատմական արդարությունը վերականգնելու անսասան ձգտմանը, համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը անգնահատելի ավանդ բերած հայկական մշակույթի անկրկնելիության շեշտմանը: Գ. Նժդեհի կարծիքով հայ ժողովրդի պատմությունը հարուստ է ազգի ներկայացուցիչների ազնվազարմության, հերոսության ու անձնազոհության օրինակներով, իսկ հայկական մշակույթը (ինչպես քրիստոնեական, այնպես էլ նախաքրիստոնեական) բազմիցս փրկել է ժողովրդին ուծացումից և ֆիզիկական ոչնչացումից: Դա է ժողովրդի մշակութային գործոնի յուրահատկությունը, որին պետք է ամեն կերպ հաղորդակից դարձնել հայ երիտասարդությանը:

Գ. Նժդեհի հայեցակարգը մշակվել է պատմական այնպիսի պայմաններում, երբ ժողովուրդը չուներ ազգային պետություն, ազգը մասնատված էր, իսկ նրա զգալի մասը ցրված էր մոլորակի տարբեր անկյուններում: Բացի դրանից՝ հայկական սփյուռքի համայնքներում չկար ազգային միասնություն: Նման իրավիճակում, բնականաբար, ծառացել էր հայ ժողովրդին իր պատմական հիշողության կորստից և ուծացումից պաշտպանելու անհրաժեշտության մասին հարցը: Նժդեհի խոսքով իր նախնիներին չմեծարող ժողովուրդը չի կարող երկար ու ինքնուրույն գոյատևել[84]:

Հարկ է նշել Գ. Նժդեհի առանձնահատուկ վերաբերմունքը ազատական արժեքների նկատմամբ, որոնք, նրա կարծիքով, մոռացության էին մատնում հայերի ազգային հիմքերը, արժեքներն ու ավանդույթները: Ըստ հետազոտող Վ. Աբոյանի՝ Գ. Նժդեհի ուսմունքի իմաստն այն է, որ հնարավորություն տրվի «օտարու-

[84] Տե՛ս **Նժդեհ Գ.,** Բանտային գրառումներ, Հատընտիր, Եր., 2006, էջ 249-250:

թյան մեջ ապրող հային հայ մնալու»[85]: Ընդհանուր առմամբ, կարելի է նկատել, որ հայ բնակչություն ունեցող երկրներում Գ. Նժդեհի հայեցակարգի իրագործման շնորհիվ պահպանվել է նրա ազգային ինքնատիպությունը:

Հայ ազգի ինքնատիպության գաղափարի քարոզչությունը Գ. Նժդեհը որևէ կերպ չի նույնացնում այլ ազգերի նկատմամբ նրա գերակայությանը: Կամ էլ իր պատմական հայրենիքը վերադարձնելու գաղափարով բնավ նկատի չունի հայերի համար կենսատարածք զավթելը: Նժդեհի հայեցակարգի նման մեկնաբանությունները հատկապես տարածված էին խորհրդային տարիներին: Խորհրդային հետազոտողները գրեթե միշտ հավասարության նշան էին դնում ֆաշիստական նացիզմի ու Նժդեհի քարոզած ազգայնականության միջև: Դրա համար, իհարկե, ծանրակշիռ պատճառներ կային: Հայտնի է, որ նա տևական ժամանակ համագործակցել է Գերմանիայում իշխող ֆաշիստական շրջանակի հետ: Սակայն պետք է նշել, որ Նժդեհի հայեցակարգը որևէ ընդհանուր եզր չունի ֆաշիզմի հետ: Նրա տեսությունն ուղղված չէ որևէ մեկի դեմ, այլ սատարում է միայն բազմաչարչար ժողովրդի հոգևոր ու ֆիզիկական ազատագրումը: Ընդհանուր առմամբ, Գ. Նժդեհի հայեցակարգն ունի պաշտպանողական և անառարկելիորեն ոչ հարձակողական բնույթ:

Սահմանելով հայ ժողովրդի մշակութային-արժեքային համակարգի ինքնատիպությունը՝ Գ. Նժդեհը այն չի հակադրել համաշխարհային արժեքներին: Նրա կարծիքով իսկական հայրենասեր ազգայնականը չի կարող անհարգալից վերաբերվել այլ ժողովուրդների ստեղծագործության արդյունքներին, իսկական հայրենասերը չի կարող ժողովուրդներին բաժանել «արժեք ձևավորող» ու «մշակույթներ ոչնչացնող» հատվածների՝ հասկանալով, որ միայն մշակույթների փոխհարստացման շնորհիվ է հնա-

---

[85] **Աթոյան Վ.,** Գարեգին Նժդեհի ուսմունքը և դրա արդիականությունը // «Էկոնոմիկա» հանդես, Եր., 2007, էջ 25:

բավոր ինչպես ամբողջ մարդկության, այնպես էլ տվյալ ազգի առաջընթացը: Փիլիսոփա Ս. Զաքարյանը Նժդեհի ուսմունքի մասին գրում է, որ այն խորապես ազգային է իր բովանդակությամբ, ուստի կրում է նաև համամարդկային արժեքներ[86]: Բացի դրանից՝ Գ. Նժդեհը ֆաշիզմը համարում էր թույլ և «չարությունից մթագնած» մարդկանց գաղափարախոսություն, մինչդեռ իր տեսությունը ներկայացնում էր որպես «ուժեղների կրոն»: Նժդեհի հայեցակարգի հիմնական բովանդակությունը հանգում է ոչ թե հայ ազգի բացառիկության քարոզչությանը, այլ հոգեպես և ֆիզիկապես ուժեղ ազգի ձևավորման անհրաժեշտությանը, որի հայացքը վստահորեն ուղղված է դեպի ապագան, և որն ի վիճակի է ոչ միայն «պաշտպանել իրեն», այլև ստեղծագործության և հոգևոր գործունեության մեջ օրինակելի լինել այլ ժողովուրդների համար:

Գարեգին Նժդեհն ու նրա համախոհ Հայկ Ասատրյանը առաջին պլան էին մղում, մեր կարծիքով, հայ ժողովրդի նոր ազգային գաղափարախոսության ձևավորման համար շատ կարևոր մի գործոն՝ հայության արժեհամակարգի դրական բաղադրիչների բացահայտման անհրաժեշտությունը[87], ինչը թույլ է տալիս ոչ միայն խորացնել հայ ժողովրդի ազգային նույնականացման գործընթացները, այլև իմաստավորել ուժեղ պետականություն կառուցելու հնարավորությունը: Հայությունը ազգի բնական պայմաններում դրսևորվող ստեղծագործական դրական ազդակների օրգանական արդյունքն է: Այն հայ ժողովրդի «այցեքարտն» է և ընկած է այն քաղաքակրթության հիմքում, որը ձևավորվել է հնդեվրոպա-

---

[86] Տե՛ս **Զաքարյան Ս.,** Գարեգին Նժդեհ (փիլիսոփայական ճեպանկար), Եր., ԵՊՀ, 2001, էջ 64:

[87] Հայություն ասելով՝ պետք է հասկանալ հայկական քաղաքակրթական տեսակը և դրան բնորոշ դրական դերային բովանդակությունը ընկալելու կարողությունը: Հայությունը զուտ ազգային, առավել ևս՝ նեղ ազգային մի բան չէ: Այն ի սկզբանե բնորոշ էր հայ ժողովրդին և ազգայինի ու համամարդկայինի համադրություն է: Սակայն այն կորստի մատնվեց պետականության վերացումից և դրան հաջորդած ինքնամեկուսացումից հետո, որը թելադրված էր ազգի ինքնապահպանման անհրաժեշտությամբ:

կան ժողովուրդների բնօրրանում և գոյատևել հազարավոր տարիներ:

Հայ քաղաքական միտքը նախկինում այս թեմային չէր անդրադառնում ոչ թե այն պատճառով, որ վատ գիտեր սեփական ժողովրդի պատմությունն ու մշակույթը, այլ որովհետև բացակայում էր դրա համար պարարտ հողը՝ անկախ պետությունը: Նրա ստեղծումը ոչ միայն ազգի ինքնակազմակերպման դրսևորումն է ու դրա բարձրագույն ձևը, այլև նրա զարգացած ինքնագիտակցության նվաճումը: Դա էլ ստիպում է հայ ազգին հասկանալ իր քաղաքակրթական գործոնի նշանակությունը, վերականգնել պատմական հիշողությունը և գիտակցել իր տեղը համաշխարհային հանրության մեջ: Ըստ Հ. Ասատրյանի՝ ապագա գաղափարախոսները պետք է խորապես վերլուծեն հայ ժողովրդի անցած պատմական ուղին: Նրա խոսքերով, սակայն, պատմությունը պետք է դիտարկել ոչ թե որպես փաստերի ու իրադարձությունների պարզ շարադրանք, այլ փորձել բացահայտել նրա «հոգին». հենց դա էլ պետք է դառնա հայության էության բացահայտման անկյունաքարը[88]:

Ինչպես տեսնում ենք, Գ. Նժդեհի հայեցակարգի շատ դրույթներ նախկինի պես պահպանում են արդիականությունը և կարող են օգտագործվել հայոց նոր ազգային գաղափարախոսություն ստեղծելու համար: Դրան մեծապես նպաստում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են լարվածության պահպանումը ինչպես Կովկասյան տարածաշրջանում, այնպես էլ առհասարակ աշխարհում՝ պայմանավորված գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպման հակասական գործընթացներով[89]: Ազգային գաղափա-

---

[88] Տե՛ս **Ասատրյան Հ.,** Դարձ դէպի ոգին, Հատընտիր, Եր., «Ամարաս», 2004, էջ 99:

[89] Ավելի մանրամասն տե՛ս **Ghazaryan, K.** (2023). Influence of the relationship between the protector state and regional hegemon on the resilience of a non-recognised state: Lessons learned from the Nagorno-Karabakh war and non-peace // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 27-69, https://doi.org/10.46991/JOPS/2023.2.4.027:

բախոսության ստեղծման անհրաժեշտության օգտին են խոսում Հայաստանում դեռևս չհաղթահարված հետխորհրդային գաղափարախոսական վակուումը, հասարակության մեջ արժեքների վերագնահատումը, երկրից բնակչության շարունակվող արտահոսքը, ինչպես հայաստանյան հասարակության, այնպես էլ Սփյուռքի մեջ անմիաբանվածությունը, 44-օրյա պատերազմից հետո պարտվողական տրամադրությունները և այլ պատճառներ[90]:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ աշխարհում, մասնավորապես Հայաստանում, հաստատվում են այնպիսի իրողություններ, որոնք պետք է իրենց հետքը թողնեն Նժդեհի հայեցակարգում տեղ գտած շատ գաղափարների վրա: Ի մասնավորի, խոսքը վերաբերում է հայերի հասարակական գիտակցության մեջ փոփոխություններին, որոնք թափանցել են հասարակական հոգեբանության խորքային շերտեր, միջազգային ինտեգրման գործընթացների խորացմանը, որոնք առնչվում են հասարակական կյանքի գործնականում բոլոր ոլորտներին, միջազգային իրավական համակարգում Հայաստանի ներգրավվածությանը, որով սահմանվում է նրա պարտականությունների շրջանակը, երկրի քաղաքացիների մեծ մասի ցածր կենսամակարդակին, ժողովրդագրական աննախանձելի իրավիճակին: Պետք է հաշվի առնել նաև պետականաշինության ավելի քան երեսուն տարվա փորձը: Այս առումով, անկասկած, հարկավոր է որոշ շտկումներ կատարել Գ. Նժդեհի՝ ազգային գաղափարախոսության ձևավորման համար օգտակար հայեցակարգի հիմնարար թեզերում:

Նախ դա վերաբերում է հայերի պատմական հայրենիքում ազգային պետության վերածննդի գաղափարին: Մեր կարծիքով

---

[90] Տե՛ս **Poghosyan, G.** (2022). The Geopoliticization of the Nagorno-Karabakh Conflict in the Shadow of the Madrid Principles: A Look at the Past // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 30-39, https://doi.org/-10.46991/JOPS/2022.1.1.030:

տվյալ դեպքում հարցը պետք է դիտարկել փոքր-ինչ այլ հարթության մեջ: Առաջնային է դառնում ժողովրդի հիշողության մեջ նրա երբեմնի մեծության ու արժանապատվության պահպանման հիմնախնդիրը, իսկ վերջնական նպատակը կարելի է համարել միջազգային հանրության կողմից իր նախկին հայրենիքից տեղահանված բնակչության օրինական իրավունքների ճանաչումը: Այս եղանակով ճանաչման քաղաքական ու տնտեսական հետևանքները կարող են լինել տարբեր՝ կախված միջազգային ստեղծված իրավիճակից, հարևան երկրներում հասարակության ներքին վիճակից, ինչպես նաև հայ ժողովրդի համախմբվածության ու համերաշխության աստիճանից:

Ժամանակակից քաղաքագետներից շատերը հակված են Ղարաբաղյան հիմնահարցը դիտարկելու որպես ապագա ազգային գաղափարախոսության կարևորագույն գաղափարադրույթներից մեկը: Սակայն, մեր կարծիքով, այս հիմնախնդիրը լիովին տեղավորվում է հայ ժողովրդի կյանքում պատմական արդարության վերականգնման օրինականության մասին գաղափարի մեջ: Ընդհանուր առմամբ, այդ նպատակին հասնելու ձգտումը թույլ կտա ժողովրդին ձերբազատվել «ճնշվածությունից», իր վարքում դրսևորվող «թերարժեքության» բարդույթից, հոգեբանորեն «ինքնամաքրվել», հավատալ սեփական ուժերին և արժանի տեղ զբաղեցնել ազգերի համաշխարհային հանրակցությունում:

Երկրորդ՝ նյութական արժեքների նկատմամբ ազգի բարոյահոգեբանական արժեքների գերակայության գաղափարը կօգնի զերծ պահել հայ երիտասարդ սերնդին օգտապաշտորեն մտածող «սպառողական զամբյուղի» վերածվելուց: Սակայն դրան զուգահեռ կարող են առաջանալ որոշ խնդիրներ: Նախևառաջ իրականության նկատմամբ նման վերաբերմունք պետք է ակնկալել պետական ինստիտուտների նախկին ու ներկա ներկայացուցիչներից, որոնք տևական ժամանակ հիմնականում ապօրինի հարստացել են: Կամ մեկ այլ հանգամանք. համաշխարհային պրակ-

տիկայում գաղափարախոսական աշխատանքում հոգևոր-բարոյական արժեքների շեշտադրումը շատ հաճախ է կիրառվում իշխող շրջանակի կողմից՝ սոցիալական վիճակից ժողովրդի դժգոհությունն իրենց ձեռնտու հունով ուղղորդելու համար:

Պետք է նաև մեղմել Գ. Նժդեհի հայեցակարգի հակաարևմտյան շեշտադրումներն ու ապագա ազգային գաղափարախոսության տեսական դրույթներն ուղղել այն բանին, որ հասարակական կյանքում բացառվի արևմտյան չափանիշների պարզ կրկնօրինակումը՝ պահպանելով նրա ազգային նկարագիրը: Ուստի, ընդհանուր առմամբ, գործնական քաղաքականության մեջ հոգևոր սկզբունքի գերակայությունը պահանջում է ավելի նուրբ ու հավասարակշռված մոտեցում, քան ազգային և բարոյական արժեքների պարզ քարոզչությունը:

Երրորդ՝ անհրաժեշտ է ստեղծագործաբար զարգացնել Գ. Նժդեհի գաղափարը հայ ժողովրդի մշակութային-ազգային ինքնատիպության մասին արդի պայմանների համատեքստում: Մի կողմից, աշխարհում ծավալվող ինտեգրացիոն գործընթացները, բազմաբևեռ աշխարհակարգի վերականգնումը թույլ չեն տալիս բացարձակացնել այդ գաղափարը, ինչը գործնականում կարող է հանգեցնել հայ ազգի ինքնամեկուսացման: Առավել ևս, որ անկախ պետության գոյության պայմաններում ինտեգրման գաղափարներն առաջնային նշանակություն են ստանում: Մյուս կողմից, ազգային արժեքների ակտիվ քարոզչությունն ու հայ երիտասարդների մեջ ազգային «ոգի» սերմանելը որևէ կերպ չեն հակասում միջազգային ինտեգրման զարգացմանը: Նման աշխատանքը կոչված է ներդաշնակ կապ ստեղծելու համաշխարհային ու հայկական քաղաքակրթական գործոնների միջև: Ամեն դեպքում գաղափարախոսները պետք է զգուշանան մեկուսացման վտանգից, որն առանց այդ էլ ամեն կերպ «խրախուսվում» է Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից: Ավելին, նման ձգտումների

չեզոքացմանը կարելի է հասնել ինտեգրացիոն տարբեր նախագծերում Հայաստանի ներգրավվածությունն ընդլայնելու միջոցով:

Ցանկացած ազգային գաղափարախոսություն անհնար է առանց համաշխարհային պատմության մեջ տվյալ հանրույթի անկրկնելի դերը որոշելու: Օրինակ՝ հրեա ազգի համար նման գաղափար է նրա «աստվածընտիր» լինելը, որը թույլ է տվել նրան ոչ միայն պահպանել իր ֆիզիկական գոյությունը, այլև իր ինքնատիպությունը, իսկ արդյունքում՝ ստեղծել կենսունակ պետականություն: Հայ ազգի ճակատագրի յուրատեսակությունը խտացված է այն «հաստատունների» մեջ, որոնք հնարավորություն են տվել նրան անցնելու պատմական չափազանց բարդ ուղի, որը շատ առումներով նման է հրեականին:

Այսօր համաշխարհային հանրությունը, ի դեմս յուրաքանչյուր ազգի, ցանկանում է տեսնել դրական տրամադրված գործընկերոջ, որից «ավելի շատ օգուտ կա, քան խնդիրներ»: Այսօրինակ մոտեցում ձևակերպելու համար կարևոր նշանակություն ունի արևմտյան երկրներում տիրապետող պրագմատիզմը երկրների և ժողովուրդների միջև հարաբերություններում: Համաշխարհային հանրության վերաբերմունքը այս կամ այն ազգի նկատմամբ մեծ չափով կախված է այն բանից, թե նա ինչ կարող է տալ աշխարհին՝ լինեն նյութական թե հոգևոր արժեքներ: Ժամանակակից աշխարհում այնպիսի գործոններ, ինչպիսիք են պետության տարածքի չափը կամ նրա բնակչության թիվը, հետին պլան են մղվում՝ տեղը զիջելով որակական ռեսուրսներին: Դրանց կարելի է դասել ոչ միայն տեխնոլոգիական և հոգևոր, այլև աշխարհաքաղաքական ռեսուրսները:

Հայ հասարակության, ինչպես և ողջ ազգի առջև խնդիր է դրված ներդաշնակորեն «մերվելու» համաքաղաքակրթական համաշխարհային գործընթացներին: Մարդկության առջև հայ ժողովուրդը պետք է ներկայանա ոչ թե որպես «բարդույթավորված» և միայն իր խնդիրների վրա «կենտրոնացած» ազգ, այլ իբրև արա-

րող, ստեղծող, մարդկությանն իր արժեքներն ու գաղափարական ուղենիշները բերող, որոնք օգնեցին նրան ոչ միայն գոյատևելու, այլև մեծ ներդրում ունենալու համաշխարհային մշակույթի գանձարանում: Այս մոտեցումը, մեր կարծիքով, պետք է առանցքային դառնա հայ ազգային գաղափարախոսության համար:

Ուշադրության է արժանի որոշ հետազոտողների առաջ քաշած «հայկական քաղաքակրթություն» ֆենոմենի գոյության մասին թեզը[91]: Ներկայումս այն մշակման փուլում է և առավելապես առնչվում է, բնականաբար, մշակութաբանության ոլորտին: Սակայն այն, անկախ «հայկական քաղաքակրթության» գաղափարի մշակվածության աստիճանից, օգնում է հասկանալ և հասարակական-քաղաքական տեսանկյունից գնահատել հայ ժողովրդի պատմության այն կողմերը, որոնք թույլ են տվել նրան ոչ միայն պահպանել իր ինքնատիպությունը, այլև զարմանալիորեն ձևավորել հայկական սփյուռքի բոլոր օջախների «քաղաքակրթական ընդհանրությունը»՝ անկախ նրանց գտնվելու վայրից: Ըստ Ա. Ուստյանի՝ «հայկական քաղաքակրթությունը ժամանակի մեջ ամենատևական քաղաքակրթությունն է, որը ներունակորեն կողմնորոշված է դեպի սոցիալական ներդաշնակություն, արդարություն և իմաստություն»[92]:

Ազգային գաղափարախոսության մեջ մշակութային-քաղաքակրթական գործոնի առաջմղումը որևէ կերպ չի հակասում պատմական արդարության վերականգնման և համաշխարհային հանրության կողմից Հայոց ցեղասպանության դատապարտման ձգտմանը, որն արմատացած է ազգային գիտակցության մեջ:

---

[91] Տե՛ս **Ստեփանյան Ա.,** Մեծ Հայքը անտիկ համաշխարհայնացման գործընթացների ծիրում. Պատմության հարցեր, Տարեգիրք, Եր., 2008, էջ 10-43, **Հարությունյան Գ.,** Հայության կազմակերպման տեղեկատվական խնդիրները // Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները, Եր., 2009, էջ 170-174, **Устян А. Р.,** Политическая философия ареввизма, М.: «Научное издание», 2007, էջ 398-400:

[92] Տե՛ս **Устян А. Р.,** Политическая философия ареввизма, М.: «Научное издание», 2007, էջ 398:

Ընդհակառակը, այս հիմնախնդիրները նոր հնչեղություն են ստանում՝ տեղափոխվելով քաղաքակրթական հիմքի վրա, ինչն ավելի հասկանալի և ընդունելի է զարգացած երկրներից շատերին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն ունեն ժամանակակից մարդկության համար հարաբերությունների նորմերի ձևավորման վրա: Նշված խնդիրների լուծումը կապված է ոչ թե «խղճահարույց» ու «նեղացված» հայ ժողովրդի հանդեպ «ներողամտության» դրսևորման հետ, այլ միջազգային հանրության կողմից համակեցության տարրական նորմերը պահպանելու և այդ հանրության որևէ անդամի կողմից այլևս նման «ոչ քաղաքակիրթ» ու «բարբարոսական» քայլեր թույլ չտալու համար պայմաններ ստեղծելու: Դրանով իսկ հայ ժողովրդի դարավոր խոցերն անմիջականորեն կապվում են արդար ու ժողովրդավարական նոր աշխարհակարգի հաստատման հետ, այսինքն՝ ձեռք են բերում «դրական» նկարագիր և ամբողջովին ուղղված են ապագային: Համահայկական խնդիրների լուծումը, ըստ էության, հարստացնում է ապագա մարդկային քաղաքակրթության նորմատիվ-իրավական և քաղաքական հենքը:

Ազգային գաղափարախոսության մշակութային-քաղաքակրթական դիտանկյունը ներառում է ինչպես քրիստոնյա, այնպես էլ նախաքրիստոնեական Հայաստանի մշակույթի և պատմության իմաստավորումը: Բնականաբար, այս առումով արժանին է մատուցվում քրիստոնեական կրոնին, որի պատմական դերը Հայաստանի ճակատագրում դժվար է գերագնահատել: Սակայն դա չի կարող նվազեցնել այն ավանդույթների նշանակությունը, որոնք հաստատվել են անտիկ շրջանում կամ դրանից շատ առաջ: Հենց դրանք են ի վերջո որոշարկել հայկական քաղաքակրթության զարգացման ուղղվածությունը: Նման մոտեցումն օգնում է ոչ միայն պահպանելու և զարգացնելու հայ ժողովրդի հազարամյա ավանդույթները, այլև փոխանցելու դրանք ապագային վստահ ու ճշմարտացի հայացքով նայող նոր սերնդին:

Այս մոտեցումը մեծ չափով միավորում է Հայաստանի քաղաքացիների ու Սփյուռքի ձգտումները: Առաջին հայացքից թվում է, թե հենց հայկական սփյուռքն է ձգտում շեշտել հայերի պատմական անցյալը, ինչպես նաև վճռականորեն է տրամադրված վերականգնելու պատմական արդարությունը: Սակայն հայկական սփյուռքի հիմնական մասը կենտրոնացած է արդյունաբերական զարգացած երկրներում՝ արդյունավետ գործող ժողովրդավարության ինստիտուտներով: Նրանց, ինչպես և այդ երկրների բազմաթիվ քաղաքացիների համար խորապես հասկանալի են ժողովուրդների միջև փոխհարաբերությունների քաղաքակրթական շարժառիթները: Ուստի Հայաստանից դուրս բնակվող հայերի գիտակցության մեջ պահպանվում է համերկրացիներին որպես համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում էական ներդրում ունեցած արժանապատիվ ազգի ներկայացուցիչներ ներկայանալու ձգտումը:

Ազգային գաղափարախոսության մեջ առանձնահատուկ նշանակություն պետք է ձեռք բերի հայերի բարեկեցության բարձր մակարդակն ապահովելու գաղափարը՝ անկախ նրանց բնակության վայրից: Այս խնդրի լուծմանն ուղղված համալիր միջոցառումները պետք է ներառեն ինչպես շուկայական հարաբերություններում ազատ մրցակցության հաստատումը հայ հասարակության ներսում, այնպես էլ աշխարհասփյուռ հայերի միջև փոխօգնության սկզբունքները: Բացի դրանից՝ կենսամակարդակի բարձրացումը սերտորեն առնչվում է նաև Հայաստանի քաղաքական կյանքի ժողովրդավարացման հիմնախնդրին: Հենց այս հանգամանքն է կոչված ապահովելու անհատների ստեղծագործական ունակությունների բացահայտումը, նրանց մեջ սերմանելու արժանապատվության և հպարտության զգացում հայրենիքի համար, ինչպես նաև բազմաթիվ սփյուռքահայերի հայացքները դարձնելու ու հետաքրքրություն արթնացնելու իրենց պատմական հայրենիքի նկատմամբ:

Միայն քարոզչությամբ հնարավոր չէ հասարակական կյանքում տևական ժամանակ հաստատել բարոյական սկզբունքի գերակայությունը նյութականի նկատմամբ: Քարոզչության կտրվածությունը իրական կյանքից հանգեցնում է ստրկական հոգեբանությամբ և իշխանահպատակ տրամադրություններով քաղաքացիների սերնդի դաստիարակմանը, որն ընդունակ չէ հերոսության, արիության ու անձնազոհության: Գաղափարապես համոզված և անձնազոհության պատրաստ պետք է լինի առաջին հերթին երկրի քաղաքական ու մտավոր ընտրանին, որն իր օրինակով պետք է համախմբի ազգը: Հայ ժողովուրդը հաճախ է ապացուցել իր իմաստնությունն ու արժանավոր առաջնորդների շուրջը համախմբվելու կարողությունը: Գ. Նժդեհի իրավացի բնորոշմամբ իրականությանը չի համապատասխանում այն պնդումը, թե հայը չի վստահում իր ընտրանուն, ընդհակառակը, նա հակված է վստահելու միայն արդար, ազնիվ, անկեղծ, ոչ թե խոսքով, այլ գործով հայրենիքին ու ժողովրդին նվիրված առաջնորդներին[93]:

[93] Տե՛ս **Նժդեհ Գ.,** Բանտային գրառումներ, Հատընտիր, էջ 278-281:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես երևում է վերոնշյալից, գլոբալ զարգացման հարացույցի փոխակերպումը տեղի է ունենում համաշխարհային ուժային կենտրոնների միջև լուրջ առճակատման պայմաններում, որոնք ձգտում են իրենց կողմը գրավել Երրորդ աշխարհի առանցքային երկրներին, ինչը զգալիորեն կամրապնդի սեփական դիրքերը համաշխարհային ասպարեզում:

Նման փոխակերպումն ուղեկցվում է ոչ միայն աշխարհաքաղաքական բնույթի հակասական գործընթացներով և համաշխարհային տնտեսության ու ֆինանսների ոլորտում առկա խնդիրներով, այլև որպես կողմնակի գործոն Ուկրաինայի տարածքում հանգեցրել է ռազմաքաղաքական առճակատման, որի արդյունքից ուղղակիորեն կախված է ապագա աշխարհակարգի բնույթը: Ուկրաինական ճգնաժամի նկատմամբ վերաբերմունքը ինչ-որ առումով դարձել է լակմուսի թուղթ, որը որոշում է տարբեր երկրների դիրքավորումը զարգացող բազմաբևեռ աշխարհում:

Նոր համաշխարհային բևեռի դեր ստանձնելու լուրջ հայտ են ներկայացրել ոչ միայն Չինաստանն ու Ռուսաստանը, այլև տարածաշրջանային և համաշխարհային քաղաքականության որոշ այլ սուբյեկտներ, որոնք ձգտում են օգտվել ուկրաինական հակամարտության մեջ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված համաշխարհային ուժային կենտրոնների զգալի թուլացումից:

Ներկայումս ակնհայտ է, որ միաբևեռ աշխարհակարգն իր նեոլիբերալ-ազատական բնույթի ֆինանսատնտեսական ու արժեքային համակարգով կանգնած է համաշխարհային նոր բևեռների առաջացրած վտանգավոր մարտահրավերների առաջ: Սա, առաջին հերթին, դրսևորվում է համաշխարհային ֆինանսական ասպարեզում, որը ձևավորվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և ապահովում է ամերիկյան արժույթի գերակա-

յությունը համաշխարհային տնտեսության մեջ: Այս հանգամանքն իր հերթին ապահովում է ոչ միայն ԱՄՆ տնտեսական առաջնորդությունն աշխարհում, այլև հնարավորություն է տալիս այս երկրին առանցքային դերակատարում ունենալու գլոբալ ու տարածաշրջանային քաղաքական բոլոր գործընթացներում: Ուկրաինական ճգնաժամում Ռուսաստանի դեմ պայքարում դոլարի և դրան կցված այլ փոխարկելի արժույթների գերակայության մեխանիզմի օգտագործումը ստիպում է շատ երկրների լրջորեն մտածել արևմտյան ֆինանսական հաստատություններից իրենց տնտեսությունների կախվածությունը թուլացնելու ու աստիճանաբար դրանից դուրս գալու համար քայլեր ձեռնարկելու մասին: Այս հանգամանքը կարող է որոշիչ նշանակություն ունենալ ժամանակակից աշխարհակարգի փոխակերպման գործընթացում:

Համաշխարհային տնտեսության մեջ գերակայության համար պայքարը նոր թափով է ծավալվում: Բացի ֆինանսական ոլորտից՝ դա ազդում է նաև միջազգային առևտրային հարաբերությունների վրա, որոնք արմատական փոխակերպումների են ենթարկվում՝ պայմանավորված համաշխարհային առևտրի սուբյեկտների վերակողմնորոշմամբ, միմյանց դեմ տարբեր պատժամիջոցների սահմանմամբ, առևտրային նախկին գործընկերների հետ հարաբերություններում վառ արտահայտված պրոտեկցիոնիզմով, համաշխարհային ու տարածաշրջանային հաղորդակցությունների ապահովման հարցերում կատաղի մրցակցությամբ և այլ գործոններով: Հատկապես սուր է պայքարը ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտում գերակայության համար, որը, առաջին հերթին, կապված է արհեստական ինտելեկտի գործնական կիրառման հետ: Բոլորը հասկանում են, որ այս խնդրի լուծումից է կախված ամբողջ աշխարհի ապագան. այն կմնա միաբևե՞ռ, թե՞ կդառնա բազմաբևեռ:

Գլոբալ զարգացման հարացույցի վերաբերյալ շատ երկրների մոտեցումների փոփոխության վրա ազդող մեկ այլ գործոն է

ժամանակակից նեոլիբերալիզմի հոգևոր և արժեքային համակարգը: Տասնամյակներ շարունակ ազատական արժեքները նպաստել են համաշխարհային տնտեսության մեջ շուկայական ու ապրանքադրամային հարաբերությունների ամրապնդմանը, բազմաթիվ երկրներում՝ ժողովրդավարական ինստիտուտների արմատավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև այդ երկրների քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխավորմանը: Վերջին ժամանակներս, սակայն, նեոլիբերալ արժեքների տարածումը աշխարհում մեծապես պարտադրողական բնույթ է ստացել՝ հաճախ անտեսելով բազմաթիվ հասարակություններում հազարամյակների ընթացքում արմատավորված ավանդույթները: Ավելին, տեղի է ունեցել հենց ազատական սկզբունքների զգալի արմատականացում, ինչը որոշակիորեն հակասում է դասական ազատականության հիմնարար արժեքներին: Հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտներում նեոլիբերալ նոր սկզբունքների պարտադրումը հանգեցրել է տարբեր երկրների քաղաքացիների կողմից դրանց բացասական ընկալմանը: Հարկ է նշել, որ նեոլիբերալ արժեքների մեկնաբանման նման արմատականացված տարբերակը ներկայումս մերժվում է աշխարհի բնակչության մեծամասնության կողմից: Ամեն բան հարթ չէ հենց նեոլիբերալ քաղաքականության սուբյեկտների մոտ, որոնցում ևս հասարակական կարծիքը հիմնականում բևեռացված է:

Բազմաթիվ երկրների քաղաքացիներ միացել են այն համաշխարհային բևեռների փնտրտուքներին, որոնք ի վիճակի են պահպանել և պաշտպանել արտաքին ազդեցություններից իրենց համար ընդունելի ավանդական արժեհամակարգը: Այս առումով արդեն նկատվում է, այսպես կոչված, «Գլոբալ հարավը» ներկայացնող բազմաթիվ երկրների միավորում, որոնք ավելի համարձակ ու կոշտ կերպով են դեմ արտահայտվում արմատական նեոլիբերալ սկզբունքների պարտադրմանը: Այս, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական բնույթի այլ գործոններ օգտագործվում են համաշ-

խարհային ուժային որոշ կենտրոնների կողմից՝ Երրորդ աշխարհի երկրների ազգային զարգացման գործընթացին «ազգային զարթոնքի» բնույթ տալու համար՝ դրանով ընդգծելով դրա հակաարևմտյան, այսպես կոչված, «հակագաղութային» ուղղվածությունը: Շատ առումներով նրանք հաջողության են հասնում հատկապես Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի շատ երկրներում:

Հասկանալի է, որ թվարկված հակադրությունները համաշխարհային քաղաքականության մեջ չեն կարող չազդել աշխարհաքաղաքական դաշտի վրա: Աշխարհի տարբեր տարածաշրջաններում ազդեցության համար անհաշտ պայքար է ծավալվել, որն ուղեկցվում է ոչ միայն տնտեսական, քաղաքական, մշակութային և կրթական բնույթի միջոցառումներով, այլև տնտեսապես ու ռազմաքաղաքական առումով ավելի թույլ պետությունների դեմ ուղղակի սպառնալիքներով: Վերջիններիս առջև ներկայումս ամենադժվար խնդիրն է ապահովել ազգային անվտանգության արդյունավետ համակարգ: Դրա համար նրանք պետք է համակողմանիորեն վերլուծեն իրենց շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակը, ինչպես նաև փորձեն հասկանալ իրենց տարածաշրջաններում համաշխարհային ուժային կենտրոնների հետապնդած իրական նպատակները: Վերջիններս միաժամանակ պետք է պահեն ձեռքը համաշխարհային բոլոր գործընթացների զարկերակին և գտնեն ու հնարավորինս վերահսկելի դարձնեն դրանք, այլ ոչ թե հայտնվեն համաշխարհային տերությունների առճակատման հերթական զոհի դերում:

Այս հարցերում առանձնահատուկ դեր պետք է վերապահվի այդ երկրների քաղաքական ու դիվանագիտական դպրոցներին, որոնք պետք է երկար ժամանակ առաջնահերթություն դառնան նրանց հասարակական կյանքում: Հենց նման դպրոցների ձևավորումն ու գործունեությունը, ի տարբերություն մյուս բոլոր մասնագիտությունների, կարող է պաշտպանել փոքր ժողովուրդներին և

երկրներին համաշխարհային զարգացման ժամանակակից մարտահրավերներից:

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ տարածաշրջանում իրավիճակի ճիշտ գնահատման համար փոքր ժողովուրդներին անհրաժեշտ է, առաջին հերթին, ապավինել իրենց պատմական փորձին, քանզի աշխարհաքաղաքական առումով աշխարհը էական փոփոխություններ չի կրել:

Ըստ էության, շատ տարածաշրջաններում, այդ թվում՝ և Հարավային Կովկասում, աշխարհաքաղաքական խաղացողները, ինչպես նաև նրանց շահերը նույնն են: Մասնավորապես, Հայաստանը գուցե հերթական անգամ պետք է վերջնականապես կողմնորոշվի իր արտաքին քաղաքականության ուղենիշների հարցում՝ հաշվի առնելով համաշխարհային աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական փոխակերպումների բովանդակությունն ու հեռանկարները:

Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Հայաստանը ոչ այնքան քաղաքական ու տնտեսական, որքան բարոյահոգեբանական առումով դժվարին ժամանակներ է ապրում: Այս հանգամանքը բացասաբար է անդրադառնում, առաջին հերթին, ազգի ինքնանույնականացման գործընթացների վրա, ծնում է ինքնության ճգնաժամ, որը հղի է նրա գոյության համար անշրջելի գործընթացներով: Սրան գումարվում է էական գաղափարական վակուումի պատկերը, որը երկրում ձևավորվել է ԽՍՀՄ փլուզումից հետո, և բացը չի լրացվել անկախության տարիներին: Բնականաբար, նման ներքին պայմանների առկայության պայմաններում Հայաստանի համար դժվար կլինի կողմնորոշվել ժամանակակից փոփոխվող աշխարհում: Նման մարտահրավերների չեզոքացման դեղատոմսի դերում կարող է հանդես գալ ազգային գաղափարախոսությունը, որը կոչված է միաձուլելու աշխարհի ժամանակակից պատկերի հայեցակարգային տեսլականը, ինչպես հայկական պետության, այնպես էլ հայ ազգի բոլոր ներկայացու-

ցիչների կողմից մոլորակի բոլոր անկյուններում: Հայոց ազգային գաղափարախոսությունը կարող է օգնել ազգին որոշել իր հիմնարար շահերը, ընկալել ու հիմնավորել դրանք, ինչպես նաև որոշել ազգային զարգացման և ազգային անվտանգության ապահովման առաջնահերթությունները:

SUMMARY

THE CHALLENGES OF ARMENIA IN THE CONTEXT OF THE TRANSFORMATION OF THE GLOBAL DEVELOPMENT PARADIGM

The paradigm of modern global development, largely determined by the unipolar world order, is currently going through a period of transformation. The nature and content of the world political-economic system is influenced not only by global globalization and geopolitical processes, but also by various social and national movements at the global and regional levels, the attitude of the population of countries to certain values, as well as the state of the world economy and finance, especially in those parts that traditionally are the drivers of its growth. The modern paradigm, as we know, finally took shape after the end of the Cold War and is distinguished by a clearly expressed neoliberal content, defined by many political scientists as neoliberal-libertarian monetarism. It is characterized by adherence to the neoliberal-libertarian value system, designed to ensure maximum individual freedom, with its own understanding of democratic transformations, interpretation of universal human norms of behavior based on the omnipotence of market relations. The latter are presented as a panacea for all negative phenomena both in the economy and in other areas of public life. Highlighting the concept of "monetarism" in the name of the global paradigm emphasizes the exceptional role of financial and economic policy in determining the vector of global development.

РЕЗЮМЕ

СТОЯЩИЕ ПЕРЕД АРМЕНИЕЙ ВЫЗОВЫ В КОНТЕКСТЕ ТРАНСФОРМАЦИИ ГЛОБАЛЬНОЙ ПАРАДИГМЫ РАЗВИТИЯ

Парадигма современного глобального развития, во многом обусловленная однополюсным миропорядком, в настоящее время переживает период трансформации. На характер и содержание мировой политико-экономической системы оказывают влияние не только общемировые глобализационные и геополитические процессы, но и различные социальные и национальные движения на мировом и региональном уровнях, отношение населения стран к тем или иным ценностям, а также состояние мировой экономики и финансов, особенно в тех звеньях, которые традиционно являются драйверами ее роста. Современная парадигма, как известно, окончательно оформилась после прекращения «холодной войны» и отличается явно выраженным неолиберальным содержанием, определяемым многими политологами как неолиберальнолибертарианский монетаризм. Она характеризуется приверженностью неолиберально-либертарианской ценностной системе, призванной обеспечить максимальную индивидуальную свободу, со своим пониманием демократических преобразований, трактовкой общечеловеческих норм поведения, основанных на всесилии рыночных отношений. Последние преподносятся как панацея от всех негативных явлений как в экономике, так и в других областях общественной жизни. Выделение понятия «монетаризм» в названии глобальной парадигмы подчеркивает исключительную роль финансово-экономической политики в определении вектора глобального развития.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. **Աթոյան Վ.,** Գարեգին Նժդեհի ուսմունքը և դրա արդիականությունը, «Էկոնոմիկա» հանդես, Եր., 2007:
2. **Ասատրյան Հ.,** Դարձ դէպի ոգին, Հատընտիր, Եր., «Ամարաս», 2004:
3. **Արևշատյան Ս.,** Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում (V-VI դդ.), Եր., «Մատենադարան», 1973:
4. **Զաքարյան Ս.,** Գարեգին Նժդեհ (փիլիսոփայական ճեպանկար), Եր., ԵՊՀ, 2001:
5. **Հարությունյան Գ.,** Հայության կազմակերպման տեղեկատվական խնդիրները // Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները, Եր., «21-րդ ԴԱՐ», 2008:
6. **Նժդեհ Գ.,** Բանտային գրառումներ, Հատընտիր, Եր., «Ամարաս», 2006:
7. **Սողոմոնյան Գ.,** Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները, Եր., ԵՊՀ հրատ., 2005:
8. **Боуз Д.,** Либертарианство: История, принципы, политика. Челябинск: Социум, Cato Institute, изд. – Москва, 2009.
9. **Дойч К.,** Нация и мир // Этнос и политика: Хрестоматия. Авт.-сост. А.А. Празаускас, М.: Изд-во УРАО, 2000.
10. **Енгоян А. П.,** Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Ер., Изд-во Российско-Армянского университета, 2011.
11. **Кейнс Д.,** Общая теория занятости, процента и денег, М.: «Эксмо», 2022.
12. **Кон Г.,** Природа национализма // Этнос и политика: Хрестоматия. Авт.-сост. А.А. Празаускас, М.: Изд-во УРАО, 2000.
13. **Малахов В.,** Государство в условиях глобализации, М.: КДУ, 2007.
14. Международные валютно-кредитные и финансовые отношения / под ред. Л. Н. Красавиной, М.: «Финансы и статистика», 2000.
15. **Мирумян К.,** О природе национальной интеллигенции и ее задачах. Опыт историко-теоретического анализа. Ер.: Изд-во «Гаяне», 1995.
16. **Растоу Д.,** Переходыкдемократии: попыткидинамической модели // «Полис», 1996.

17. **Скалепов А.,** Тектоника украинского кризиса. М.: «Проспект», 2022.

18. **Тойнби А.,** Постижение истории. Сборник. М., «Издательство АСТ», 1996.

19. **Устян А. Р.,** Политическая философия ареввизма. М., «Научное издание», 2007.

20. **Хантингтон С.,** Столкновение цивилизаций. М., «Издательство АСТ», 2005:

21. **Харви Д.,** Краткая история неолиберализма, М., «Поколение», 2007.

22. **Хоренаци, М**., История Армении // Пер. с древнеарм. Г. Саркисяна, Ер., Издательство: «Айастан», 1990.

23. **Colly P.,** Studies in the History of ideas. L., Princeton NJ: Princeton University Press, 1983.

Հոդվածներ

1. **Ստեփանյան Ա.,** Մեծ Հայքը անտիկ համաշխարհայնացման գործընթացների ծիրում. Պատմության հարցեր, Տարեգիրք, Եր., 2008:

2. **Глиттова Я., Косов Ю.,** Сравнительный институционально-политический анализ европейской и евразийской интеграции // Управленческое консультирование, 2016, №7 (91), Вестник МГИМО-Университета.

3. **Дурдыева А. А.** (2015). Дилемма интеграций на постсоветском пространстве в контексте украинских событий // Вестник МГИМО-Университета. №3 (42).

4. **Aleksanyan, N., Arsenyan, M.** (2023). Davutoğlu, Ahmet. 2020. Systemic Earthquake and the Struggle for World Order: Exclusive Populism versus Inclusive Democracy. Cambridge: Cambridge University Press. XXIV, 306 pp. https://doi.org/10.1017/9781108751643 // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 163-167, https://doi.org/10.46991/JOPS/2023.2.4.163.

5. **Baberowski, J.** (2022). Between Fear and Fascination: The Soviet Union in the Modern Age // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 119-139, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.119.

6. **Chuguryan, S., Baculakova, K., Kucharcik, R.** (2023). The welfare state crisis and the strengthening of the far-right in Sweden as a result of increasing migration. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 117-136, https://doi.org/10.46991/JOPS/2023.2.4.117.

7. **Gabrielyan, H.** (2022). Turkey as a Transport Hub: a Vision Strategy for Integrating Regional Infrastructures and Services // Journal of

Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 11-29,. https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.011.

8. **Ghazaryan, K.** (2023). Influence of the relationship between the protector state and regional hegemon on the resilience of a non-recognised state: Lessons learned from the Nagorno-Karabakh war and non-peace. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 27-69, https://doi.org/10.46991/JOPS/2023.2.4.027.

9. **Khojayan, K.** (2022). Reflections on the Transformation of the World Order: Emerging Trends and Impending Perspectives // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(2), 92-105,. https://doi.org/10.46991/JOPS/2022.1.2.092.

10. **Libaridian, G. J.** (2022). The History of Imperial Politics and the Politics of Imperial History // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(3), 10-24, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.3.010.

11. **Manukyan, A.** (2022). An Alternative to the Dissident Paradigm and Intersecting Civil Protests in Soviet Armenia: Equal but Different? Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(3), 73-89, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.3.073.

12. **Petrosyan, G.** (2022). Armenian Statehood in Foreign Policy Realities: the First Steps of the First Republic // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(2), 12-48, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.2.012.

13. **Poghosyan, G.** (2022). The Geopoliticization of the Nagorno-Karabakh Conflict in the Shadow of the Madrid Principles: A Look at the Past. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 30-39, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.030.

14. **Sargsyan, A.** (2022). Political Science Perceptions of Post-Soviet Civic Participation: Reconciliation Steps or an Attempt at Imitation? Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 69-77, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.069.

15. **Yengoyan, A.** (2023). Transformations of the Ideology of Nation-Building and State-Building in Armenia: Phenomenon of Integrity of Nation and State. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(1(4), 70-101, https://doi.org/10.46991/JOPS/2023.2.4.070.

24. **Yengoyan, A., Harutyunyan, L.** (2022). Transformation and Development. Studies in the Organization for Security and Cooperation in Europe (OSCE) Member States, edited by Anja Mihr. Springer Cham, 2020. VI, 154 pp. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1(1), 156-159, https://doi.org/10.46991/JOPS/2022.1.1.156.

Համացանցային աղբյուրներ

1. Համաշխարհային բանկի պաշտոնական կայքը, https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?view=chart&locations=CN, հասանելի՝ 15.04.2023:

2. Авторский доклад Изборскому клубу академика Глазьева // «Аврора», https://aurora.network/articles/11-analitika-i-prognozy/106003-chto-proiskhodit, հասանելի՝ 15.04.2023:

3. **Алексеева Н., Медведева А.,** «Отстаивает интересы США»: 75 лет назад был основан Международный валютный фонд // «Russia Today», https://russian.rt.com/business/article/815310-mvf-godovschina-sozdanie, հասանելի՝ 15.04.2023:

4. Блинкен заявил, что РФ и КНР бросили вызов существующему миропорядку // Rambler. 11.07.2022, https://news.rambler.ru/world/-48980806-blinken-utverzhdaet-chto-rf-i-knr-brosili-vyzov-suschestvuyus-chemu-miroporyadku/, հասանելի՝ 15.04.2023:

5. Бреттон-Вудская финансовая конференция 1944 года. Справка // «РИА Новости», https://ria.ru/20090722/178243946.html, հասանելի՝ 15.04.2023:

6. В МИД КНР заявили об укреплении стратегического взаимного доверия с Россией // «РИА Новости» – https://ria.ru/20221225/knr-1841164500.html, հասանելի՝ 15.04.2023:

7. Договор между Российской федерацией и Соединенными Штатами Америки о гарантиях безопасности – сайт МИД РФ, ttps://mid.ru/ru/foreign_policy/rso/nato/1790818/.; Ответ НАТО и США на предложения России по безопасности. Полный текст, «ТАСС», https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/13594727, հասանելի՝ 15.04.2023:

8. Доля доллара США в международных расчетах снизилась в 2023 году до 40% // «ТАСС», https://tass.ru/ekonomika/17059745, հասանելի՝ 15.04.2023:

9. Зеленый переход: Китай бьет рекорды в чистой энергетике // «РИА Новости», https://ria.ru/20211228/energetika-1765825979.html, հասանելի՝ 15.04.2023:

10. Инфляция в еврозоне в декабре замедлилась до 9,2%, минимума за 4 месяца // «Интерфакс», https://interfax-ru.turbopages.org/interfax.ru/-s/business/879766, հասանելի՝ 15.04.2023:

11. Канцлер Германии дал прогноз о мироустройстве в будущем // ИА Regnum. 12.05.2022. URL: https://regnum.ru/news/polit/3588124.html, հասանելի՝ 15.04.2023:

12. Китай доминирует в мировых заказах на турбины в 2022 году // «Энергетика», https://forca.ru/novosti/kitay-dominiruet-v-mirovyh-zakazah-na-turbiny-v-2022-godu.html, հասանելի՝ 15.04.2023:

13. Китай оккупирует африканскую экономику кредитами и инвестициями // «Regnum», https://regnum.ru/article/3478783, հասանելի՝ 15.04.2023:

14. Китай пришел на Ближний Восток надолго: почему визит Си Цзиньпина в Саудовскую Аравию стал ключевым событием для китайской дипломатии // «Российская Газета», https://rg.ru/2022/12/-11/kitaj-prishel-na-blizhnij-vostok-nadolgo-pochemu-vizit-si-czinpina-v-saudovskuiu-araviiu-stal-kliuchevym-sobytiem-dlia-kitajskoj-diplomatii.html, հասանելի՝ 15.04.2023:

15. Количество единиц оружия в США на 67 млн превысило численность населения // «РБК», https://www.rbc.ru/rbcfreenews/5b29-bbd69a79479de93bdd81, հասանելի՝ 15.04.2023:

16. **Крайняя У.,** Китай стремится скупить весь мир // «Investing», https://ru.investing.com/news/economy/article-2273457, հասանելի՝ 15.04.2023:

17. Кремль увидел в предложении Джонсона создать новый союз стремление подорвать позиции ЕС, «Интерфакс», https://www.interfax.ru/world/843284, հասանելի՝ 15.04.2023:

18. Мадлен Олбрайт: мечтающая о Сибири «орлица с брошкой» // «Правда», https://www.pravda.ru/world/289810-albright/, հասանելի՝ 15.04.2023:

19. Макрон заявил, что «капитализм деградировал и сошел с ума» // «ТАСС», https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/6793858, հասանելի՝ 15.04.2023:

20. Меркель была права. Олланд откровенно высказался о Минских соглашениях // «РИА Новости», https://ria.ru/20221230/olland-1842524713.html, հասանելի՝ 15.04.2023:

21. Назад в прошлое. На Уолл-стрит ожидают повторения стагфляции 1970-х // «РБК», https://quote.rbc.ru/news/article/6221eca-49a794712c67f8bad, հասանելի՝ 15.04.2023:

22. НАТО подтвердила решение о принятии Украины и Грузии в альянс // «ТАСС», https://ria.ru/20210614/nato-1736994965.html, հասանելի՝ 15.04.2023:

23. Никифорова В., Что нам делать с «Великой перезагрузкой»? // РИА Новости. 19.02.2021, https://ria.ru/20210219/perezagruzka-1598075387.html, հասանելի՝ 15.04.2023:

24. Объем торговли нефтяными фьючерсами в Китае в 2021 году вырос на 54,63% // «ТАСС», https://tass.ru/ekonomika/13351219, հասանելի՝ 15.04.2023:

25. Орбан отжег на съезде консерваторов США: Меньше трансвеститов, больше ЧакаНорриса // «EurAsiaDaily», https://eadaily.com/-ru/news/2022/08/05/orban-otzheg-na-sezde-konservatorov-ssha-menshe-transvestitov-bolshe-chaka-norrisa, հասանելի՝ 15.04.2023:

26. Прибыль Китайской корпорации редкоземельных металлов в III квартале выросла на 122,5% // «ТАСС», https://tass.ru/ekonomika/-16160079, հասանելի՝ 15.04.2023:

27. **Путин В.,** Интервьюгазете «TheFinancialTimes» // Официальный сайт Кремля, http://www.kremlin.ru/events/president/news/60836, հասանելի՝ 15.04.2023:

28. Путин поддержал умеренный консерватизм, сравнив его с врачебным принципом «не навреди», «ТАСС», https://tass.ru/politika/-12728229, հասանելի՝ 15.04.2023:

29. Путин рассказал о торговле с Китаем в рублях и юанях // «РИА Новости», https://ria.ru/20230704/kitay-1882085209.html, հասանելի՝ 15.04.2023:

30. Реанимационный пакет реформ для Беларуси. Реформа сектора национальной безопасности // ZaBelarus.com. URL: http://zabelarus.com/-ru/2020/06/25/security-2/, հասանելի՝ 15.04.2023:

31. **Ремарчук В.Н.,** 2014. «Управляемый хаос» как политическая технология в современной геополитике // Гуманитарный вестник. №1 (15). URL: http://hmbul.ru/articles/153/153.pdf, հասանելի՝ 15.04.2023:

32. Руководство США ищет способы расчленить Россию // «Рамблер», https://news.rambler.ru/science/48918961/?utm_content=news_-media&utm_medium=read_more&utm_source=copylink, հասանելի՝ 15.04.2023:

33. Свидетельство № 41-Н о регистрации Международной академией авторов научных открытий и изобретений под научно-методическим руководством Российской академии естественных наук; Глазьев С., Последняя мировая война. США начинают и проигрывают, М.: «Книжный мир», 2016:

34. Совокупный экспорт из Китая // «Trendeconomy», https://trendeconomy.ru/data/h2/China/TOTAL, հասանելի՝ 15.04.2023:

35. Среднегодовой вклад Китая в рост мировой экономики превысил 30 % // «News.am», https://news.am/rus/news/416867.html, հասանելի՝ 15.04.2023:

36. Статьи соглашения международного валютного фонда (1978, 1 апреля) // Вашингтон, округ Колумбия: Международный валютный фонд, 2011, https://www.imf.org/external/pubs/ft/aa/rus/index.pdf, հասանելի՝ 15.04.2023:

37. **Тадтаев Г.,** Зеленский пригрозил пересмотреть отказ Украины от ядерного оружия // РБК. 19.02.2022, https://www.rbc.ru/politics/-19/02/2022/621108ac9a7947f316c3b93e, հասանելի՝ 15.04.2023:

38. Центробанки Китая и Индонезии договорились использовать национальные валюты // «Regnum», https://regnum.ru/news/3365283, հասանելի՝ 15.04.2023:

39. Юань впервые обошел доллар и евро в трансграничных расчетах КНР // «REN TV», https://ren.tv/news/ekonomika/1115201-iuan-vpervye-oboshel-dollar-i-evro-v-transgranichnykh-raschetakh-knr, հասանելի՝ 15.04.2023:

40. Южная Корея и Индонезия отказываются от доллара во внутренних расчетах в пользу своих валют // «Первый Канал», https://www.1tv.ru/news/2023-05-04/452420-yuzhnaya_koreya_i_indoneziya_otkazyvayutsya_ot_dollara_vo_vnutrennih_raschetah_v_polzu_svoih_valyut, հասանելի՝ 15.04.2023:

41. FT: доля расчетов в юанях в международной торговле выросла до 4,5% // «ТАСС», https://tass.ru/ekonomika/17508141, հասանելի՝ 15.04.2023:

42. National Security Strategy. The White House, Washington, October 2022, p. 23-25, https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2022/10/-Biden-Harris-Administrations-National-Security-Strategy-10.2022.pdf, հասանելի՝ 15.04.2023:

43. Saudi Aramco заключила сделку на постройку нефтеперерабатывающего и нефтехимического комплекса в Китае // «Российская Газета», https://rg.ru/2023/03/27/saudi-aramco-zakliuchila-sdelku-na-post-rojku-neftepererabatyvaiushchego-i-neftehimicheskogo-kompleksa-v-kitae.-html, հասանելի՝ 15.04.2023:

44. Wall Street veterans offer 3 trading strategies for investors worried about a recession, «CNBC», от 31.05.2022, https://ru.investing.com/-news/economy/article-2158289, հասանելի՝ 15.04.2023:

45. Williams M., Biden Announces Start of 'New World Order' During Address // American Action News. 22.03.2022, https://americanaction-news.com/politics/2022/03/22/biden-announces-start-of-new-world-order/, հասանելի՝ 15.04.2023:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Աշոտ Ենգոյան, Առնակ Սարգսյան
Խոսրովադուխտ Ազատյան, Փայլակ Ենգոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Ստորագրված է տպագրության՝ 09.10.2023:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 9.375:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023
publishing.ysu.am